

-179-

Գ. ԲԵՆԴԱՆԿ

**Ջ Ի Ն Ա Կ Ա Ն
ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ**

**Դ Ե Տ Հ Ր Ա Տ
ՅԵՐԵՎԱՆ 1932**

-179-

18 DEC 2017

ԱՅՏ ԲՐՈՇՅՈՒՐԸ ՆՎԻՐՈՒՄ ԵՄ
ԸՆԿ. ՍՅԱՆ-ԶՈՒ-ՉԱՅԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ
Հ Ե Ղ Ի Ն Ա Կ

Գ. ԲԵՍՊԱԼՈՎ

Հ Ի Ն Ա Կ Ա Ն
ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ



Կ Ս Տ Հ Ր Ա Տ

1932

ՅԵՐԵՎԱՆ

- ԲԿ 1 -

Պետերատի տղարան
Գլավիտ 7023 (բ)
Պատվեր 6574
Հրատ. 1975
Ցիքաժ 3000



1-330637

Թարգ.՝ Ս. Արեվշան

Խմբ. Խ. Դանիելյան

Հանձնված և արտադրության 2^{րդ} XII 1931 թ.

Ստորագրված և ստացվել է 22/II 1932 թ.

Հ Ե Ղ Ի Ն Ա Կ Ի Ց

Այս բրոշյուրն իրենից ներկայացնում է ԿԻՄ-ի Գործկոմի նախագահության նիստում հեղձակի կողմից տրված զեկուցման վերախմբագրված և լրացրված աղագրությունը: Բրոշյուրում բաց են բողնված մի շարք հարցեր, ինչպես որինակ՝ յերիտասարդության հակառակորդ կազմակերպությունների, պիմներների մասին և այլն:

Միջազգային պատանեկական որվա XVII տարեդարձի առթիվ չինական կոմյերիտիության վերաբերյալ մի վորևե նյութ տալու անհրաժեշտությունը հարկադրեց ինձ տալ իմ համաձայնությունը հրատարակելու այս բրոշյուրը:

ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒ-
ԹՅԱՆ ՄԵՋ

Յերիտասարդության հարցը չինական հեղափո-
խության ամենահիմնական խնդիրներից մեկն է հան-
դիսանում: Սգրարային և հակաիմպերիալիստական
հեղափոխության մեջ պրոլետարիատի հեգեմոնիան
իրականացնելու և բանվոր դասակարգի մեծամասնու-
թյունը կոմկուսի կողմը դրավելու տեսակետից այդ
հարցն առաջնակարգ նշանակություն ունի, քանի վոր
բանվորական յերիտասարդությունը, արտադրության
մեջ իր առանձին ծանր կացություն և առանձնահատուկ
կարիքներով ու պահանջներով, կազմում է չինական
պրոլետարիատի 60—70 % : Խորհրդային իշխանության
համար մղվող պայքարի, խորհրդային իշխանությունը
բանվորների և գյուղացիների ձեռքում պահելու, ագ-
րարային հեղափոխությունն իրականացնելու տեսակե-
տից և այլն, յերիտասարդության հարցը նույնպես ու-
նի խոշոր նշանակություն, քանի վոր կարմիր բանակի
40 %, վորը կազմում է՝ ագրարային հեղափոխության
լողունգները, Գոմինգանի իշխանության տապալման
և խորհրդային իշխանության համար, կազմում է յե-
րիտասարդությունը, վորովհետև գյուղի և քաղաքի
աշխատավոր յերիտասարդությունը, վորը տնքում է
իմպերիալիստական կամալականության լծի տակ,
դռնվում է դասակարգային պայքարի առաջավոր դիր-
քերում, կրակի առաջին գծում: Ներկայումս անհրա-
ժեշտ է առանձնապես ընդդեմ յերիտասարդության
նշանակությունը չինական հեղափոխության մեջ, քա-
նի վոր վերջին տարվա ընթացքում մենք հանդիպեցինք
չինական հեղափոխության մեջ յերիտասարդության
դերի հրեշավոր թերազնահատմանը՝ մոռացության
տալով նրա առանձին դրությունն արտադրական պրո-

ցեառամ, հերքելով յերիտասարդութեան կոմունիստական պատանեկական կազմակերպութեան գոյութեան անհրաժեշտութիւնը—անմիջական հեղափոխական սխտուացիայի ժամանակաշրջանում:

Ընկ. Ստալինը դեռեւս 1926 թ. նոյեմբերին Կոմինտերնի չինական հանձնաժողովում յերիտասարդութեան մասին հետեւյալն էր ասում. «Յերիտասարդութեան հարցը ներկայումս Չինաստանում առաջնակարգ նշանակութիւն ունի: Սովորող յերիտասարդութիւնը, հեղափոխական ուսանողութիւնը, բանվորական յերիտասարդութիւնը, գյուղացիական յերիտասարդութիւնը, այդ բոլորը մի այնպիսի ուժ է, վորը կարող է հեղափոխութիւնն առաջ տանել յոթնամղոն քայլերով... Պետք է աչքի առաջ ունենալ, վոր վոչ-վոք իմպերիալիստական ճնշումն այնպես խորն ու այնպես կենդանի կերպով չի վերապրում և վոչ-վոք չի գոյում այդ ճնշման դեմ պայքարելու անհրաժեշտութիւնն այնպես, ինչպես Չինաստանի յերիտասարդութիւնը: Այդ հանգամանքը չինական կոմկուսի և չինական հեղափոխականների կողմից պետք է բաղմադրի մի կերպով հաշի առնվի՝ աշխատանքները յերիտասարդութեան մեջ ուժեղացնելու մտքով»:

Յերիտասարդութեան այդ դերը պարզ կերպով վորոշում է և ԿիՄ-ի ծրագիրը. «Աշխատավոր յերիտասարդութիւնը, վորը գաղութներում և կիսագաղութներում կրում է ծանր շահագործման, հարտաշարժան ու ստրկութեան կրկնակի լուծը, գաղութային հեղափոխութեան մեջ խաղում է բացառիկ նշանակութիւն ունեցող դեր: Քանի վոր մի կողմից գաղութներում յերիտասարդութիւնը, յերիտասարդութեան մեծ տոկոսն դրադ-ված է արտադրութեան մեջ, լրացնում է բանակը, և սովորող յերիտասարդութեան զգալի մասը կառուած լինելով աշխատավորական մասսաների հետ յենթակա յե նույնպիսի կեդեքման, և մյուս կողմից հատկապես յերիտասարդութիւնը, վորն արդեն մեծացել է՝ համաշխարհային պատերազմի, իմպերիալիզմի և ուր

ճնշման, հեղափոխական հեղաշրջումների և փոփոխութիւնների մթնոլորտում, լի յե իմպերիալիզմի հանդէպ կատաղի առեւութեամբ և բոլոր հեղափոխական կոմիւնիստներում ցուցաբերում է ամենամեծ արեւութիւն և արհամարհանք դեպի մահը» (ԿիՄ-ի ծրագիրը):

Յեւ, իրոք, Չինաստանի հերոսական կոմյերիտմիութիւնը, վորպես բանվորա-գյուղացիական յերիտասարդութեան կազմակերպիչն ու ղեկավարը, վորպես նրա իսկական շահերի ու կարիքների միակ արտահայտիչը, իր անձնվեր մասնակցութեամբ՝ չինական պրոլետարիատի բոլոր արաստամիութիւններին, գործադուլներին, ագրարային հեղափոխութեանը, իր պայքարով Կարմիր բանակի շարքերում գործնականում արդարացրեց Լենինի ցուցմունքը, նրա «Նամակներ հեռվից» աշխատութեան մեջ այն մասին, թե աշխատավոր յերիտասարդութիւնը հեղափոխութեան մեջ «ամենամեծական ելմաններին է» պատկանում:

Կոմյերիտմիութիւնը գլխավորում էր բանվորա-գյուղացիական յերիտասարդութեան մասսաներին՝ հակաիմպերիալիստական և ագրարային հեղափոխութեան լողունքների իրականացման համար մղվող պայքարում, կատարելով կուսակցութեան առաջին ոգնականի դերը, այդ պայքարում զոհարեւելով իր ամենալավ անդամներին: Միայն, իրոք, կույրն ու խուլը չէր կարող նկատել յերիտասարդութեան և նրա ավանդարդ ԿՅՄ դերը չինական հեղափոխութեան մեջ:

Բայց այդ ինչպե՞ս պատահեց, վոր 1930 թ. կոմյերիտմիութեան և կոմկուսակցութեան ղեկավարութիւնը գլխավորեց ընկ. Լի-յի Լիկվիդատորական թեորիան, վորը հերքում էր կոմյերիտմիութեան գոյութեան անհրաժեշտութիւնը, վորպես յերիտասարդութեան կոմունիստական պատանեկական ինքնուրույն մի կազմակերպութեան:

Պարզ է, վոր այդ թեորիան արդունք է հեղափոխութեան մեջ յերիտասարդութեան դերի չմթնոնման և թերադնահատման: Պարզ է, վոր այդ թեորիան կաղ-

մում և ընկ. Լի-յի կիսատրոցկիստական դրույթները ելեմենտը չինական հեղափոխութեան խնդիրներում (Չինաստանի հեղափոխական շարժման զարգացման անհամաչափութեան բացասումը, ամբողջ յերկրում ապստամբութեան առաջնալու Ֆրադեալիզմի, անհավատութեանը դեպի բանվոր դասակարգի ուժերը և այստեղից թեորիա այն մասին, վոր բանվորները չեն ցանկանում գործադուլ անել, գործադուլի դպրոցի կարիքը չեն զգում, վորպեսզի իրադրոժեն զինված ապստամբութեանը և այլն): Պարզ և, վոր դա ըստ էութեան սոցիալ-դեմոկրատական թեորիա յե յերիտասարդութեան մասին: Սակայն ընկ. Լի-յի թեորիայի առանձնահատկութեանը կայանում և նրանում, վոր նա քողարկվում և զանազան «ձախ» ֆրադեալիզմով ապստամբութեան համար ուժեր կենտրոնացնելու անհրաժեշտութեան մասին և այլն: Բայց և այնպես նա չի դադարում սոցիալ-դեմոկրատական թեորիա հանդիսանալուց, քանի վոր հայտնի յե, թե սոցիալ-դեմոկրատները բացի ուրիշ վոչ վոր հանգես չի գալիս՝ յերիտասարդութեանը քաղաքականութեան ասպարհում սահմանափակելու դեմ, կողմնակից հանդիսանալով յերիտասարդութեան համար այնպիսի կազմակերպութեանների ստեղծմանը, վորոնք փաստորեն կհանդիսանային միայն սոցիալ-դեմոկրատական բյուրոկրատ ասպարատի հավելում, և կամ ընդգրկմանալ՝ յերիտասարդական կազմակերպութեանների կազմակերպչական ինքնուրույնութեանը և այլն: Հենց այդպիսի դրույթ էլ յին ցանկանում չինական կոմկուսի կյանքում կիրառել Լի-յի ղեկավարութեամբ: Ընկ. Լի-ն իրականացնելով այդ դրույթը, ձգտում ևր ԿՅՄ դարձնել այսպես կոչվող գործողութեան կոմիտեների հավելում:

Կոմյերիտմիութեան վերաբերյալ այդ սոցիալ-դեմոկրատական թեորիան ի՞նչ արդումենտների վրա յե հենվում: Այն արդումենտի, վոր զինված ապստամբութեան շրջանում կոմյերիտմիութեան կարիքը չի

զգացվում, քանի վոր անհրաժեշտ և կենտրոնացնել ուժերը զինյալ հաջող ապստամբութեան համար: Առաջադրվում ևր այնպիսի արդումենտ, թե բայլչեիկյան կուսակցութեան առավելութեանը կայանում ևր նրանում, վոր 1917 թ. ապստամբութեան ժամանակ նա յերիտասարդութեան ինքնուրույն կազմակերպութեաններ չունենր:

Դուք գիտեք, ընկերներ, Լենինի ցուցմունքը նրա «Նամակներ հեռից» աշխատութեան մեջ, վորտեղ նա հանձնարարում և բայլչեիկներին, ապստամբութեան շրջանում առաջավոր դիրքերի համար առանձնացնել հարվածայիններ՝ բանվորական յերիտասարդութեան ամենամեծական ելեմենտներից: Յեթե դուք համեմատեք Լի-յի սոցիալ-դեմոկրատական թեորիան, վորը հերքում և Չինաստանում ԿՅՄ դրութեան անհրաժեշտութեանը, Լենինի այդ ցուցմունքի հետ, ձեզ համար միանգամայն պարզ կլինի, վոր այդ թեորիան հիմնովին փոխած և, վոր նա հանդիսանում և չինական հեղափոխութեան խնդիրներում Լի-յի կիսատրոցկիստական դրույթի բաղադրուցից ելեմենտը: Պարզ և, վոր ուսուսական կուսակցութեան առավելութեանն այն հանգամանքը չեք, վոր այն ժամանակ կոմյերիտմիութեան չկար, և ընդհակառակը չինական կոմկուսի առավելութեանը նրանումն և, վոր չինական կոմկուսն իր տրամադրութեան տակ ունի մի այնպիսի հզոր դենք՝ բանվորա-գյուղացիական յերիտասարդութեան հսկայական մասսաների վրա ազդելու համար, ինչպիսին և կոմյերիտմիութեանը:

Ընկերներ, այդ թեորիան իր պատմական արմատներով խորանում է չինական ԿՅՄ և չինական կոմկուսի համեմատաբար վոչ հեռու անցյալը: Նա միայն անցյալ տարի ստացավ իր վերջնական ձևը, հասունանալով ուղորտունիստական շրջաններում դեռևս Չեն-Յու-Սյու-յի ուղորտունիստական ղեկավարութեան որդի: Դուք գիտեք, վոր իր ժամանակին Չինաստանում առաջարկութեաններ ևր արված՝ վերացնելու կոմյերիտ-

միությունը, վորպես յերիտասարդության կոմունիստական կադմակերպություն, կոմյերիտմիությունից ստեղծել յերկրորդ՝ ալպես կոչվող ջահել կոմունիստական կուսակցություն, կոմյերիտմիության շարքերը չընդունել 20 տարին չլրացրածներին, իսկ մյուս կողմից առաջարկություն այն մասին, վորպեսդի կոմյերիտմիութան շարքերը չընդունվեն 16 տարեկանից ավելի բարձր հասակ ունեցողները, կոմյերիտմիությունը դարձնել մանկական-պատանեկական կադմակերպություն, միացնել նրան պիոներական շարժմանը և այլն:

Պարք է, վոր այդ բոլոր առաջարկները, անկախ նրանից, թե նրանք սրբոյժում ելին «ձախ» ֆրազներով կամ բացարձակ աջ ելիմենտներից ելին ըղիսում, տա՛նում ելին ըստ ելության դեպի կոմյերիտմիության լիկվիդացիան: Լի-ն վերջնականապես ձեռնկերպեց այդ թեորիան և նրան գործի փոխեց:

Մենք պետք է վերջ դնենք այդ թեորիային, քանի վոր կոմյերիտմիության աշխատանքի և վոչ մի հարց չի կարելի լուծել, յեթե կուսակցության և կոմյերիտմիության մեջ նման թեորիա յե չըլում, և յեթե մեկ այստեղ, մեկ այնտեղ այդ թեորիան նորից առաջ է քաշվում: Այդ պատճառով մենք բանաձևում հայտարարում ենք, վոր կոմյերիտմիության հետագա աճման և զարգացման նախադրյալն է հանդիսանում՝ պայքարը լիկվիդատորության դեմ կոմյերիտմիության մեջ և կուսակցության ներսում, միևնույնն է, թե նա վորտեղից է սկիզբ առնում՝ աջից, թե «ձախից»: Մենք պետք է պայքարենք բանվորա-գյուղացիական յերիտասարդության և նրա ավանդարդ կոմյերիտմիության՝ հեղատիրության մեջ ունեցող դերի ամեն տեսակ թերադնա-հատումների դեմ: Չինաստանի բանվորա-գյուղացիական յերիտասարդությունը հանդիսանում է չինական հեղափոխության առաջապահ ջոկատը, իսկ կոմյերիտմիությունը՝ նրա շահերի միակ արտահայտիչը, նրա ավանդարդը և առաջնորդը, հավատարիմ զենքը Կոմ-

կուսի ձեռքում՝ Չինաստանի ազդարարին և հակաիմպերիալիստական հեղափոխության մեջ: «Չինաստանի կոմյերիտմիության զարգացումն ու պայքարը վոգեւորիչ որինակ է հանդիսանում՝ Հնդկաստանի, Ինդոնեզիայի և ամբողջ գաղութային աշխարհի աշխատավոր յերիտասարդության համար» (ԿիՄ-ի ծրագիրը):

ՊԱՐԱԳԱՆԵՐԸ ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ

Յես կանցնեմ այն հարցին, թե Չինաստանի ներկա պարագաների ինչպիսի առանձնահատկություններից պետք է յեղնել չինական կոմյերիտմիության ներկա դրությունը դնահատելիս և նրա հիմնական խնդիրները վորոշելիս: Յես այդ մասին կարճ կխոսեմ: Մեզ անհրաժեշտ է այդ առանձնահատկությունները նշել, քանի վոր այդ առանձնահատկությունների կապակցությունից դուրս չի կարելի հասկանալ Չինաստանի բանվորա-գյուղացիական յերիտասարդության ներկա դրությունն ու նրա դերը և չի կարելի ճիշտ դնել կոմյերիտմիության խնդիրները:

Դուք դիտեք, վոր Չինաստանն ապրում է սարսափելի տնտեսական և հատկապես ազդարարին ճգնաժամ: Բոլորի կարծիքն էլ այն է, վոր Չինաստանը վոչ մի ժամանակ այնպիսի ծանր դրություն չեր ապրել, ինչպես ներկայումս, և վոչ էլ այնպիսի ծանր ու ավելի ու ավելի խորացող ճգնաժամ: Այստեղ մենք առաջին հերթին պետք է ընդգծենք հետևյալ փաստերը: Չինաստանում մենք նախ և առաջ նկատում ենք, վոր չինական արդյունաբերությունը շարունակում է անցնել ոտաբերկրյա կապիտալի ձեռք: Յես կմատնանշեմ հետևյալ փաստը: Յեթե 1925/26 թ. տեքստիլ արդյունաբերության մեջ չինական կապիտալը կազմում էր 50%, այժմ արդեն ոտաբերկրյա կապիտալիստների ձեռքումն է գտնվում տեքստիլ արդյունաբերության 80—87%: Ներկայումս Շանհայի մի շարք խոշոր տեքստիլ գործարաններ անցնում են հապոնական և ամե-

թիվական կապիտալի ձեռքը: Չինական նախադնացու-
թյան և լուցկու արդյունաբերությունը չի կարող մրցել
ճապոնական, չվեդական և այլն արդյունաբերության
նույն ճյուղերի հետ: Յերկրորդ, անհրաժեշտ է նշել ար-
ծաթի կուրսի հետագա անկումը: 1930 թ. արծաթն
ընկավ 40 %: Ներկայումս կրճատվել է արտաքին ա-
ռևմտյան շրջանառությունը: Ապրանքային մասսայի
չարժուժը 1929—30 թ. կրճատվել է 35 %: Յերրորդ,
անհրաժեշտ է նշել աղբարային ճգնաժամի դարդացու-
մը, վորն ունի հատկապես մեծ նշանակություն: Չի-
նական գյուղերում ներկայումս սովը սոսկալի չափերի
յե հասնում: Տեղեկություններ կան այն մասին, վոր
1930 թ. Չինաստանում սովի եյին մատնված 70 միլիոն
մարդ: Վերջին յերկու տարվա ընթացքում միայն Գու-
անսի պրովինցիայում սովից մահացել է 4 միլիոն
մարդ: Շանսիում սովամահ են լինում 5 միլիոն մարդ:

Այս բոլորին ուղեկցում են միլիտարիստական
կլիկաների անընդհատ պատերազմները: Հաղիվ գեո Նոր
եր վերջացել պատերազմը Հյուսիսի հետ, վորից հետո
Նանկինյան չանկայիական կառավարությունը բզա-
վում եր աղբի աղբատացման մասին, վոր կրկին չարժ-
վեցին Կանտոնի, Սցեչուանի և այլ դանադան միլիտա-
րիստները: Գեներալական այդ կլիկաների թիկունքում
կանգնած են դանադան միլիտարիստներ, վորոնք պայ-
քարում են՝ Չինաստանում աղղեցություն սփերաներ
և գաղութային մեծ շահ ձեռք բերելու համար: Կա-
կածից դուրս է, վոր կանտոնյան կլիկայի թիկունքում,
վոր այժմ դուրս է յեկել Չան-Կայ-Շիի դեմ և իր կա-
ռավարությունն է կադմել Կանտոնում «ձախ» Վան-
Տին-Վեյի հետ միասին, կանգնած է անգլիական իմ-
պերիալիզմը:

Չինաստանում ներկայումս դանադան ֆրոնտնե-
րում գենքի տակ են 5 միլիոն մարդ: Այդ հսկայական
բանակը կլանում է հսկայական գումարներ, տրորում
և դյուղացիություն ցանքսերը և ավելի յե սրում յերկրի
ծանր ճգնաժամը: Զանազան միլիտարիստների, մեծ ու

փոքր գեներալներ 280 դիվիզիաներ, վորոնք գենքի
տակ են գտնվում, Չինաստանի ներկա պարագաներին
ավելի որոժաշ բնույթ են տալիս: Այդ հանգամանքը
փայլուն կերպով վկայում է այն քայքայման մասին,
վոր տեղի ունի ռեակցիայի լազերում:

Ճգնաժամի հետևանքով առաջացավ հսկայական
դորձադրություն: Բերվում են այնպիսի թվեր (ճիշտ
է, այդ թվերը իսկական չինական են), վոր Չինաստա-
նում կա մոտ 100 միլիոն դորձադուրի: Փաստ է, վոր
Շանհայում 1930 թվին 360 հազար դորձադուրի կար,
Կանտոնում 140 հազար և այլն: Գործադրությունն ու
քաղցը պատճառ են հանդիսանում յերկրում բանդի-
տիզմի դարդացմանը:

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ՝)

Սրանից ուղիղ մեկ ամիս առաջ ԿիՄ-ի նախագա-
հությունը նիստում լավեց հաղորդագրություն այն մա-
սին, վոր գեներալական առաջին դրոհը հետ է մղված:
Այն ժամանակ գեներալական յերկրորդ դրոհի ամենա-
յեռուն ժամանակն եր:

Ինչպե՞ս եր դրությունն այն ժամանակ: Այն ժա-
մանակ խորհրդային կենտրոնական շրջանի և Կարմիր
բանակի դեմ, վորի հրամանատարներն էյին Մաո-Յդե-
Դունը և Չժու-Դոյը, ձգվեց չանկայիական 200 հազա-
րանոց մի բանակ. Սո-Լունի բանակի դեմ՝ 80 հազա-
րանոց, 4-րդ բանակի դեմ՝ 100 հազարանոց չանկայ-
իական դորամասեր: 300 հազարանոց չանկայիական
զորքը, գինված՝ զազերով, անրոպլաններով, քիմիա-
յով, դերմանական ֆաշիստ խորհրդականների գլխա-
վորությունմբ, ձգվեցին Կարմիր բանակի դեմ: Սակայն,
ընկերներ, գեներալական այդ դրոհը յետ մղվեց: Այդ

1) Չեկուդան այս մասը հեղինակը փոխարինել է ԿիՄ-ի
Գործկոմի նախագահության նիստում իր կողմից ավելի ուշ ժա-
մանակում ունեցած յեռույթով:

ինչպէս պատահեց: Նախ և առաջ Մատնի և Ձգու-
Դոյի հրամանատարութեան տակ գտնվող Կարմիր բա-
նակներն այս տարվա հունիսի սկզբներին նանկինյան
6 զելվիզիաններին զգալի հարված հասցրին: 28-րդ և
24-րդ զելվիզիանները ջարդվեցին զլիսովին: Այդ զելվի-
զիանների հրամանատարներն անհայտ կորան: Ջարդվե-
ցին նաև 43-րդ, 47-րդ, 54-րդ և 77-րդ զելվիզիանները:
Նորից գրավվեց Կիան քաղաքը, վորն իր նշանակու-
թյամբ Յզյանսի պրավինցիայի յերկրորդ քաղաքն է
հանդիսանում: Նա առևտրական մեծ քաղաք է. նրա
ստրատեգիական նշանակութիւնը շատ մեծ է: Հա-
ղորդվեց, վոր գեներալ Սու-Յզո-Յու-յի 5-րդ զելվի-
զիանն վոչնչացված է: Ինքը գեներալը մահացաւ ստաց-
ված վերքերից: Գրավվեցին Նանֆիյե և Գուանչան քա-
ղաքները (Հարավ-արեւելյան Յզյանսի):

«Չանյա Պրեսը» այդ ժամանակ գրեց, վոր Կարմիր
բանակը գրավեց 20 հազար հրացան, ունի 80 զնդա-
ցիւր, վոր նա կրկնապատկել է իր տերրիտորիան: Հա-
ղորդվեց և այն մասին, վոր Փուցզյանի սահմանից
վոչ հեռու ջարդվել է գեներալ Լու-յի զելվիզիան և գե-
րի յե վերջվել նանկինյան 2 գունդ: 60-րդ և 61-րդ
նանկինյան ամենալավ զելվիզիանները հրաժարվեցին
յենթարկվել հրամանատարութեան կարգադրութիւն-
ներին: Այդ զելվիզիանների ղեկավորները մեծ մասն անց-
նում են կարմիրների կողմը:

Սույն թվի հունիսի 20-ին անգլիական «Նորոգ Չա-
յնա Դեյլի Նյուս» թերթը գրում էր, վոր կարմիրների
դեմ կաղմակերպած այդ յոլոր պատժիչ արշավախմբե-
րի ու կամսականայի հետևանքն այն յեղալ, վոր աղ-
քաբնակութեան մեծամասնութեան համակրանքը սկսեց
աճել զեպի այդ «բանդիտները» և վոր այդ բոլոր պատ-
ժիչ կամպանիաներն ընդդեմ կարմիրների վերածվեցին
ուղղակի ֆարսի:

Հունիսի 19-ին այդ նույն լրագիրը հաղորդում էր,
վոր կարմիրները գործում են Նյանչանի և Կիանի մի-
ջով: Դեռևս հունիսի 10-ից Նյանչանը (Յզյանսի պրա-

վինցիայի զլիսովոր քաղաքը) հայտարարված էր գին-
վորական դրութեան մեջ: Քաղաքում ապստամբվեցին
նանկինյան 2 գունդ, վորոնք հունիսի 12-ից լույս 13-ի
գիշերը թալանեցին 100 ավելի խանութներ և բարձրա-
ցան սարերը: Սկսվեց հարձակում Չանչայի վրա: Ահա
այն բոլորն, ինչ վոր վերաբերում է խորհրդային
կենտրոնական ռայոնին:

Յերկրորդ, Կարմիր բանակների գործողութիւն-
ները Սո-Լունի հրամանատարութեամբ:

Այդ բանակները համարյա միաժամանակ հար-
ձակման անցան: Դուան-Դե-Չեան 10 հազար կարմիր
բանակայինների հետ միասին անցաւ Սան գետը և գը-
րավեց Բաո-Դաո-Յզյան քաղաքը, խանկոռելից վոչ
հեռու:

Անգլիական և չինական լրագրերը գրում էին,
վոր Սո-Լունը հանդիսանում է դրութեան տերը Սան
գետի ակունքներում:

Յերրորդ, 4-րդ բանակը, վոր գործում էր (գուց
այդ մասին իրազեկ էք նախագահութեան անցյալ նիս-
տից) Պեկին—Հանկուս յերկաթուղու մոտերքը, այդ
Կարմիր բանակը Հարավային Հենանում գրավեց կա-
րմիր Դուանչան կետը և սկսեց հարձակվել Դուան-
չեֆուսի վրա, վորի գրավումը կարող է ունենալ այն
հետևանքը, վոր նանկինյան զորքից 100 հազար մար-
կման կարմիրների ողակում:

Ահա սրանք են խորհրդային հիմնական ջրջանները:

Այսպես էր դրութիւնը մոտավորապես հունիսի
վերջին: Յես չեմ խոսելու պարտիզանական շարժման
հետագա ծավալման մասին և վոչ ել Կարմիր բանակի
առանձին գործող կորպուսների մասին:

Մի փաստ, վոր այստեղ անհրաժեշտ է նշել,
դա այն է, վոր Կարմիր բանակի այդ խոշոր հաջողու-
թիւնները բացատրվում են մի շարք հանգամանքնե-
րով, վորոնց մասին յես կխոսեմ ցածում: Դրութիւնը
խիտ փոխվել է. այժմ Կարմիր բանակի օպարանալիքի
տակ են գտնվում խոշոր նշանակութիւն ունեցող յեր-

կու քաղաք՝ Նանչանը (Յոլյանսի պրավլինցիայի մայրաքաղաքը) և Չանչան (Հունանի պրավլինցիայի մայրաքաղաքը) :

Այն, վոր Կարմիր բանակը ներկայումս անցել է հարձակման, թշնամուն՝ իմպերիալիստներին և չին գեներալներին մեծ անհանգստութիւն է ներշնչում: Դուք գիտեք, վոր Չան-Կայ-Շին միքանի անգամ արդեն նշանակել է Կարմիր բանակի վերջնական սլարտութեան ժամկետները: Յերբ տեղի ունէր առաջին դենե-րալական դրոհը, Չան-Կայ-Շին հայտարարեց, վոր յերկու ամսից հետո Կարմիր բանակի հետքն անգամ չի մնա, վոր ամբողջ «Կարմիր բանդիտիզմը» կվոչնչացվի Չինաստանում: Դուք գիտեք, թե ինչով վերջացավ առաջին դեներալական դրոհը: Նա վերջացավ նրանով, վոր Կարմիր բանակը փառավոր կերպով յետ մղեց այդ դրոհը, ջարդելով մի շարք դիվիզիաներ:

Հայտարարվեց յերկրորդ գեներալական դրոհը: Գեներալական այս դրոհի ձևերը համեմատած առաջին դրոհի հետ նոր ելին: Նա տարվում էր խրամատներով, վոր առաջ չէկար, գաղերով և քիմիայով. բանակի դուռ-խըն անցան գերմանական խորհրդականները. խոշոր ուժեր ձգվեցին դեպի՝ Հուբեյի, Հունանի, Յոլյանսիի և այլ պրավլինցիաները: Սակայն յերկրորդ գեներալական դրոհն ել անհաջողութեամբ վերջացավ: Այժմ հայտարարված է յերրորդ գեներալական դրոհը: Բայց և այնպէս թե իմպերիալիստներն իրենք և թե չինական բուրժուազիան դրութիւնն այնպիսի վառ դույններով չեն գնահատում, ինչպէս նրան գնահատում են ձշան Չան-Կայ-Շին և նրա ողնականները՝ չինական գեներալիտետը:

Շանհայում հրատարակվում է դերմանական «Դի Բրյուկե» ժուռնալը: Կարմիր բանակի այդ հաղթութիւնների առթիւ նա գրում է.

«Որոհողային իշխանութիւնը Չինաստանի հա-րավում լայնացնում է իր տերրիտորիան, առհնց մնա-ցորդել լիկվիդացիայի յե յենթարկում կալվածատիրա-

կան հողատիրութեւնը, իրականացնում է պրոլետա-րիատի և դյուղացիութեան հեղափոխական-դեմոկրա-տական դիկտատուրան...»:

«Դժվար է վորոշել կոմունիստների ճիշտ թիւը, բայց կասկածից դուրս է, վոր Կարմիրների ազդեցու-թիւնը տարածվում է՝ Յոլյանսիի, Հուբեյի, Հունանի, Ֆուդզյանի, Գուանդունի, Գուանսիի, Հենանի և Ան-ժուի խոշոր շրջանների վրա և վոր Կարմիրների հրա-մանատարութեան տակ է գտնվում 150 հազար հողուց բաղկացած մի ռադմական ուժ, չհաշվելով միլիոնավոր դյուղացիների ու բանվորների, մոտոք կազմակերպ-ված են միութեւններում և խմբակներում:

Կոմունիստները պնդում են, վոր նրանց տիրապե-տութեան տակ է գտնվում մի տերրիտորիա, վորի ազ-գարնակութեան թիւը 60 միլիոն է: Դա համապատաս-խանում է Գերմանիայի ազգաբնակչութեան: Իր տրա-մադրութեան տակ ունենալով նման մի խոշոր շրջան իր մարդկային մատերիայով, կոմունիստները դաժան պայքար են մղում, ձգտելով վերջնականապէս հա-տատվել այնտեղ:

Ի դարմանա բոլոր ռադմական մասնադետների, Կարմիր բանակն իր կադմակերպվածութեամբ և կար-գապահութեամբ պայքարում է հերոսաբար ու հաջո-ղութեամբ: Կարմիր գլխադիան հանդիսանում է ոժան-դակ Ֆորմացիա, սովորաբար տեղական բնույթի: Ռադմական ոսկերացիաները կատարում է ինքը Կարմիր բանակը և միայն ծայրահեղ դեպքում մոբիլիզացիայի յե յենթարկվում Կարմիր գլխադիան, մորն այդ ժա-մանակ այսքարում է Կարմիր բանակի հետ կողք-կող-քի: Վիճակադրական ավալներով ցուցակագրված Կարմիր-բանակայինների թիւը կաոմում է 150 հազար մարդ, իսկ Կարմիր գլխադիանների թիւը վեց ան-գամ ավել է»:

Այնուհետև ժողովար գրում է այն մասին, թե շատ դժվար է պայքարել Կարմիր բանակի հետ, մորով-հետև Կարմիր-բանակայինները պարտ չազված են ըստ

1-33069



իրենց տարադի, իսկ վաղը նրանք քաղաքացիական շո-
րերով հայտնվում են միանգամից միքանի տեղերում
և ստիպում են կառավարական գործերին նահանջել:
Հոգւածի հեղինակները գտնում են, վոր Կարմիր
գվարդիան և «Յերիտասարդ գվարդիան» հանդիսանում
են այնպիսի վտանգավոր ուժեր, վորոնց դեմ պայքա-
րելը չափազանց դժվար է:

«Յենտրալ Չայնա Պոստ»-ը նույնպես գրում է այն
մասին, վոր այդ հաղթութիւնները հետո կարմիր զո-
րամասերը չափազանց ամբացան, ձեռք բերեցին տաս-
նյակ հազարներով հրազան, ահաբեկն գնդացիներ,
ծանր թնդանոթներ և այլն:

Այնուհետև «Շանհայ Թայմսը» գրում է, վոր
Չան-Կայ-Շիյի խնդիրը շատ դժվար է և վոր կարմիր-
ների ճնշման հեռանկարները Յանցզի հովտում և
Հանկուսից դեպի հարավ վոչ մի դեպքում չի կարելի
փայլուն համարել:

ՆորդՉայնա Դեյլի Նյուս»-ը գնահատելով դրու-
թյունը կարմիր Ֆրոնտներում, գրում է. «Կոմունիստ-
ներն այնպես ամուր են հաստատուել Կենտրոնական
Չինաստանում, վոր նրանց այնտեղից, նույնիսկ Ժա-
մանակավորապես անգամ դուրս քշելը չափազանց
դժվար է: Կառավարութիւնը պետք է հասկանա, վոր
նրանց յրիմ վոչնչացման համար տարիներ են պետք»:

Անգլիական «Պեկին Ենդ Տյանցզի Թայմս» լրա-
գիրը մի առաջնորդող է նվիրել հակակարմիր եքսպե-
դիցիային, վորի գլուխը կանգնեց Չան-Կայ-Շին: Լը-
րագիրը գրում է. «Յանցզիի շրջանում տարած վերջին
հաղթութիւնների հետևանքով կարմիրները հետ նվա-
ճեցին այն տերրիտորիան, վորը նրանք մինչ այդ կոր-
ցրել էին, և դարձան համեմատաբար ամբի աղդեցիկ,
քան ութ ամիս առաջ, կամպանիայի սկզբում»: Հե-
տաքերի է, թե նա ինչ է գրում Կարմիր բանակի տակ-
ափայլի մասին. «Ամեն անգամ, յերբ կարմիրները
հարձակվում էին, նրանք լուրջ հարվածներ էին հաս-
ցնում և յերբ նանկինյան զորքերի ճնշման տակ նա-

հանջում էին՝ ինիցիատիվ էյին պահում: Նրանք սովոր-
աբար խուսափում էին Ֆրոնտային դրոշից, գերա-
դասելով տեղական գյուղացիների ոժանդակութամբ
կատարվող հարձակումները, այն գյուղացիներին, վո-
րոնք անկասկած նրանց ջերմ կողմնակիցներն են հա-
դիսանում»:

Յես դիտավորյալ կերպով բերեցի թշնամու այս
գնահատականը, վորպեսզի մի հիմնական ու վճռական
յեզրակացութիւն անեմ, թե Կարմիր բանակը չի կա-
րող պարտվել: Իմպերիալիստների ոժանդակութամբ
նանկինյան կառավարութիւնը խնջւիսի ուժեր էլ հա-
նելու լինի Կարմիր բանակի դեմ, ճնշել այդ շարժումը
նրան վոչ մի դեպքում չը հաջողվի: Առասպելն Կարմիր
բանակներ կարելի չէ քշել սարերը, սակայն նրանք
այնտեղ տարիներով կարող են գոյութիւն պաշտպա-
նել, ուժեղանալով դուրս կգան Յանցզիի վրա, դուրս
կգան՝ Կենտրոնական Չինաստան:

Իր հաջողութիւնների համար Կարմիր բանակն
ինչի՞ չէ պարտական նախ և առաջ՝ առաջին, խոսա-
կան և վճռական պատճառը դա գյուղացիների ոժան-
դակութիւնն է: Կարմիր բանակն ու խորհրդային իշ-
խանութիւնը վոչնչացնում են՝ հակահեղափոխու-
թիւնը, կալվածատերերին, վաշխառուներին, չեթ-
տրի-ներին, գյուղացիներին հող են տալիս, փոխում են
գոմիւնականական որենքները, վերացնում են հարկերը:
Այդ է պատճառը, վոր Կարմիր բանակին ոժանդակում
են գյուղացիական կարմիր գվարդիական զորեղ ջո-
կատները, «Յերիտասարդ գվարդիաները»: Նան-
կինյան կառավարութիւնն զինվորական մինիստր Խո-
իյն, նանկինում գումարդած աղգային Ժողովի նիս-
տում մատնանշեց այն հսկա դերը, վոր խաղում են
«Յերիտասարդ գվարդիան» և Կարմիր ինքնապաշտպա-
նութիւն ջոկատները՝ կառավարական զորքերի դեմ
պայքարելիս ու նրանց հաղթահարելու դորձում:

Յերկրորդ պատճառը, վորն անպայման վճռական
նշանակութիւն չունի, բայց այն պատճառներից մեկն

ե, վոր հեշտացրել է մեր հաղթութիւնն այս ժամանակ
կաշկռանում, դա, ընկերներ, գեներալական կլիկայի
ներքին պայքարն է, կանտոնյան հեղաշրջումը: Այդ
մտքով կաստոսյան հեղաշրջումն ինչ նշանակութիւն
ունեն: Նա չանկալիական դորքի մի մասը, վորը
կռվում էր մեր դեմ, քաշեց ընդդեմ կանտոնյան կա-
ռավարութեան: Աստղանակաւ «Շանհայ-Սայնցի» լրա-
գրում հունիսին մի հաղորդագրութիւն էր ղետեղված
այն մասին, թե 34-րդ դիվիզիան, վորը գործում էր
Հարավ-Արեւմտյան Հունանում ընդդեմ Կարմիր բա-
նակի, ամբողջապէս անցավ կանտոնցիներին կողմը և
դրանով թնթեացրեց Կարմիրներին հարձակումը և
նրանք դրապեցին Ձենչօու և փութեցան քաղաքները:
Այսպէս է Կարմիր բանակի դրութիւնը:

Այս պայմաններում դոմինդանական կառավարու-
թիւնը գտնվում է՝ տնտեսական, աղբարային և ֆի-
նանսական ճգնաժամի ճիրաններում, սաստկացնում և
իր կատալի տերրորը, հուսալով արյան մեջ խեղդել
բանվորներին յեղուկները և գյուղացիական ապստամ-
բութիւններն ընդդեմ իրենց կեղեքիչների: Մենք
պետք է մոբիլիզացիայի յենթարկենք ամբողջ աշխարհ
հի բանվորա-գյուղացիական յերիտասարդութեանը
ընդդեմ դոմինդանական այդ արյունահեղ տերրորի:

Սակայն Գոմինդանը բանվորներին և գյուղացիներին
բոլոր յեղուկներն արյունահեղութեամբ ճնշելու իր
հիմնական քաղաքականութիւնը լրացնում է նաև մի
չարժ «ձախ» մանյովրներով, վորպեսզի խաբի ժողո-
վրդական մասսաներին:

Այդ մանյովրներին թվին են պատկանում այնպիսի
միջոցառումները, ինչպէս՝ լիկին¹⁾ վերացումը, արտ-
յերկրութեան վերացման ղեկարացիան, աղբային ժո-
ղով դուժարելը, գործարանային ուրենք մտցնելը, վորին
մասին յեա կանգ կառնեմ մանկական աշխատանքի մա-

1) Լիկին — մի տեսակ հարկ է, վոր գանձվում է շինական
աղբանքները մի պրովինցիայից մյուսը փոխադրելիս:

սին խոսելիս, այսպէս կոչվող ամինստիան և այլն:

Այս կապակցութեամբ անհրաժեշտ է առանձնա-
պէս ընդգծել, վոր վոչ կոմկուսը, վոչ ԿԿՄ՝ դիմապա-
ղերժ չարին Գոմինդանին այդ «ձախ» մանյովրները,
ինչպէս վոր հարկն է: Մինչդեռ տնտեսական, աղբա-
րային, ֆինանսական ճգնաժամերի, քաղաքներում ա-
նող բանվորական գործադուլները, գյուղերում զար-
գացող պարտիզանական շարժումներին և խորհրդային
շարժման ամման ազդեցութեան տակ Գոմինդանը վա-
րելով բանվորա-գյուղացիական շարժումներին արյու-
նահեղութեամբ ճնշելու իր հիմնական քաղաքականու-
թիւնը, միաժամանակ լրացնում է այդ քաղաքակա-
նութիւնը խաբեքայութեամբ, մանյովրներով, հուսա-
լով այդ ձևով դուրս գալու ճգնաժամի ճիրաններից:
Ուստի Գոմինդանի այդ քաղաքականութիւնը դիմա-
կազերժ անելու խնդիրը հանդիսանում է ԿԿՄ և կոմ-
կուսի հիմնական պարտականութիւններից մեկը:

Անհրաժեշտ է նշել նաև, վոր Չինաստանում աճում
է գործադուլային շարժումը: Կհիշեմ միայն մի քանի
հիմնական թվեր: 1928 թվին Շրաստտանում գործա-
դուլ ելին արել 400.000 հոգի, 1929 թվին՝ 750.000:
1930 թվին առաջին կիսում գործադուլային շարժումը
մի փոքր իջնում է, իսկ յերկրորդ կիսում նորից ալե-
կանում է. հունիսին տեղի ունեցավ 37 գործադուլ, ո-
գոստոսին՝ 47 և սեպտեմբերին՝ 38: Միայն Շանհայ-
յում տեղի ունեցավ 28 գործադուլ, վորոնցից 15-ը
հաղթանակով վերջացան նոյեմբերին կապիտալիստնե-
րի հետ բանվորներն ունեցան 43 կոնֆլիկտ, վորոնց
մասնակցում էին 33.000 բանվոր: Դեկտեմբերին գոր-
ծադուլներ տեղի ունեցան 46 ձեռնարկներում, և այդ
գործադուլներին մասնակցում էին 4.000 բանվոր-
ներ: 1931 թ. փետրվարին, վորը հատկապէս պետք է
նշել, քանի-վոր չնայած Գոմինդանի, վորն անցել էր
նոր տոմարի և յեփրոպական նոր տարուն, չինական
հին տարին տոնելու արգելմանը, միայն Շանհայում,
չինական նոր տարու առթիւ գործադուլ արին 66.000
բանվոր: Միայն ապրիլ ամսում գործադուլ հայտարա-

բեցին 25 հազար մետաքսադորձներ՝ աշխատավարձը 15 % իջեցնելու համար:

Ինչպիսի գնահատություն պետք է տրվի գործադուլային շարժմանը:

Մենք ներկայումս Ձինաստանում անպայման ունենք գործադուլային շարժման վարդապետ: Անհրաժեշտ է նշել այն հանգամանքը, վոր այն գործադուլները, վորոնց մասին յես խոսեցի, գլխավորապես կրում են հակահարձակողական բնույթ, այսինքն բանվորները վոչ միայն պաշտպանվում են կապիտալիստներեց, վորոնք իջեցնում են աշխատավարձը, հայտարարում են լոկաուտներ և այլն, — այլև անցնում են հակահարձակման, առաջադրում են հակապաշտպան (աշխատավարձի հավելում և այլն): Այդ գործադուլները ղեռ և շատ ղեպքերում տարերային բնույթ են կրում և կոմկուլարի կողմից թույլ են զեկավարվում: Շատ հաճախ կոմկուլար և կոմյերիտմիությունն այդ գործադուլներին կողքով են անցնում:

Ինչպես է Կոմինտերնը գնահատում Ձինաստանի դրությունը: Կոմինտերնը ցույց է տալիս, վոր Ձինաստանի դրությունը հեղափոխական ճգնաժամի բնույթ է կրում: Կոմինտերնի Գործկոմի XI սլենումի բանաձեվում ասված է. «Ձինաստանում հեղափոխական կրիզիսն արտահայտվում է՝ մի քանի տասնյակ միլիոն աղքատահույս ժողովուրդի ունեցող անբրիտոքիայում խորհրդային իշխանություն և Կարմիր բանակ կազմակերպելու մեջ, վորը Ձինաստանին, զադութային աշխարհի աղքատային-հեղափոխական շարժման ասպարիդում դնում է առաջին տեղը: Խորհուրդներ և Կարմիր բանակ կազմակերպելու միաստր պայմանավորում է պրոլետարիատի հեղեմոնիայի հաջողությունը աղքատային-հեղափոխական շարժման, հակաիմպերիալիստական և ազրաբային հեղափոխության մեջ, հեղեմոնիայի, վորն արդեն ամրանում է պետական իշխանության սաղմնավորման մեջ»:

Միանգամայն բացարձակ բանկրոտության յենթարկվեցին՝ թալերի, արոցկիստների և չենդուսյուսա-

կանների բոլոր թեորիաները: Նրանք բոլորն ել պնդում էին, վոր գոմինդանական իշխանությունն ամրանում է, և վոր խորհրդային շարժումը վոչ մի պերսպեկտիվ չունի: Չենդուսյուսականները հայտարարում էին, վոր Կարմիր բանակը՝ դա բանդիտներ են և այլն: Այդ բոլոր թեորիաները սնանկ դուրս յեկան:

Մեծ կարևորություն ունեցող խնդիրներից մեկն է նաև Ձինաստանում իմպերիալիստների կողմից ունեցած ուժերի խնդիրը: Այստեղ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, վոր բանվորական բոլոր մեծ կենտրոններում՝ գլխավոր մագիստրալներում, վորոնք միացնում են այդ կենտրոնները, ջրային ճանապարհներում և այլն գտնվում են իմպերիալիստները, վորոնք այդ բանվորական կենտրոնները պահում են կրակի ու հարվածի տակ: Որինակ, Շանհայում կանգնած ուժերը հավասար են մոտավորապես 10 յեվրոպական դիվիզիաներին: Այդ միայն Շանհայի մոտ: Յանցզի գետի յերկարությամբ կանգնած են ուժեր, վորոնց թիվը նույնպես մոտ 10 յեվրոպական դիվիզիա յե: Այսպիսով միայն Յանցզի գետի վրա կանգնած են ուժեր, վորոնց թիվը մոտավորապես կազմում է 20 յեվրոպական դիվիզիա: Կարմիր բանակի դեմ ուղարկված Չան-Կայ-Շիի յորրերկու մեջ կան 70 զերմանական Փաշիստական սպա-խորհրդականներ, վորի մասին պետք է իմանան մեր զերմանացի ընկերները: Ամերիկայի ընկերները պետք է իմանան, վոր Ամերիկա յում յերկու գործարան աշխատում են բացառապես Չան-Կայ-Շիի համար և զբաղվում են հրազեն, հանդերձանք մատակարարելով և այլն: Շվեդացի ընկերները պետք է իմանան, վոր նշանավոր մագնատ Քրեյտերը նանկինյան կառավարությանը փոխառություններ է տալիս: Ֆրանսացի և անգլիացի ընկերները պետք է իմանան այն, վոր աղյ յերկրների իմպերիալիստները մշտապես ոգնում են չինական ժողովրդի մեծ ու վորքը դահիճներին Կարմիր բանակի դեմ կոմիտու գործում: Մեր միությունները թուլացրել են իրենց ուշադրությունը հանդեպ չինական կոմյերիտմիության: Անհրաժեշտ է վերացնել

այդպիսի դրութիւնը: ԿԻՄ-ի սեկցիաները պետք է մարտական ձևով կատարեն իրենց ինտերնացիոնալ պարտականութիւնները չինական հեղափոխութեան նկատմամբ:

Կոմիւնտերնը չինական կոմկուսի առաջ դրել է յետևեց հիմնական խնդիրներ. առաջին՝ Կարմիր բանակի ամրացումը և պայքար տերրիտորիալ բազիսի հետագա լայնացման համար. յերկրորդ՝ կենտրոնական խորհրդային կառավարութեան ձեռնարկումը, խորհրդային իշխանութեան կողմից հետևողական ագրարային հեղափոխութիւն կատարելը, հողերի բաժանումը՝ գյուղացիական հիմնական մասսայի շահերի տեսակետից. յերրորդ՝ զործադուլային շարժման ծավալումը, բանվոր դասակարգի տնտեսական պայքարը գլխավորելը և բոլոր մասսայական հեղափոխական կաղնակերպութիւններին ամրացումը:

Միանգամայն բնական է վոր դա և կոմսոմոլի հիմնական խնդիրն է, վորի համար եյ նա բոլոր գծերով պետք է լծվի այդ խնդիրներին կատարման գործին: ԿՅՄ ամենամարտական խնդիրը ներկայումս հանդիսանում է խորհրդային շրջաններում գեներալական գրոհին հակահարված տալը: Զիշտ է, բնկ. Ֆեոդորովը և մյուսները, վորոնք համեմատում են չինական ԿՅՄ ներկա դրութիւնը մեր խորհրդային ԿՅՄ հետ, յերբ Դենիկինը մոտենում եր Տուլային, Յուդենիչը՝ Լենինգրադին, յերբ Վրանգելը հարձակվում եր, յերբ պայքար եր մղվում սպիտակ լեհերի հետ և այլն: Այն ժամանակ զեպքեր եյին լինում, վոր մեզանում փակվում եյին ամբողջ կաղնակերպութիւններ և ամբողջապես ռազմաճակատ եյին գնում: Ներկայումս չինական ԿՅՄ գտնվում է աշխարհի արամանեցողութեան խորհրդային հիմնական շրջաններին վրա, այն շրջաններին, վորտեղ գործում է Կարմիր բանակը, հարձակվում են չանկայիական 300 հազարանոց դորամասերը, յերբ այդ գործերի թիկունքում կանգնած են ռուսերկրյա իմպերիալիստների ռազմանավերն ու գնդացիները և յերբ այդ գործերի գլուխն են կանգնած «բաղադակըրթ-

ված» «կուլուրական» և լավ վարժված գերմանական սպաները: Այդ արտահառով գեներալական գրոհին հակահարված տալը հանդիսանում է կոմյերիտմիութեան մարտական խնդիրը: Յերիտասարդութիւնը այդ գործում պետք է մեծ դեր խաղա:

Յեվ այստեղից պրակտիկ խնդիր՝ Կարմիր բանակի ամրացումը, կոմյերիտականների մորիլիզացիան Կարմիր բանակի շարքերը և այլն:

Միանգամայն պարզ է, վոր այդ խնդիրը մենք չենք կարող անջատել կոմյերիտմիութեան մյուս խնդիրներից՝ զործադուլային պայքարին մասնակցելուց, յերիտասարդութեան զործադուլային շարժմանը գլխավորելուց, ագրարային հեղափոխութեանը մասնակցելուց և այլն: Սակայն մենք պետք է ընդգծենք, վոր ամենամարտական խնդիրը, վորի կատարման համար պետք է արամադրվին բոլոր ուժերը, դա գեներալական գրոհին հակահարված տալն է:

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ,
ՄԱՆԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԶԻՆԱՍՏԱՆՈՒՄ ՅԵՎ
ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԱՅՈՒ
ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

Այժմ կանցնեմ բանվորական յերիտասարդութեան դրութեանն ու մանկական աշխատանքին: Զինաստանում և այդ ասպարիզում ԿՅՄ խնդիրներին: Միանգամայն բնական է, վոր Գոմինգանի բուրժուա-կալվածատիրական իշխանութիւնը ձգտում է ճշնաթամի ամբողջ ծանրութիւնը դնել բանվոր դասակարգի ուսերին: Այստեղից՝ զեպքերային հետևանքով տեղի յեն ունենում ձեռնարկութիւններին փակումը (անցյալ տարի միաժամանակ Շանհայում փակվեցին 100 մետաքսի զործարանները), բանվորների կրճատումը բոլոր պրավիցիաններում, և այդ կրճատումը կատարվում է ռացիոնալիզացիայի հետևանքով, ի հաշիվ բանվոր դասակարգի, ինչպես և արտադրութեան կրճատման: Հիմնականն այդ ասպարիզում հանդիսանում է.

1. Գնալիտալիստների հարձակումը աշխատավարձի վրա: Որինակ՝ Տյանչանի լեռնադործների աշխատավարձը, վորն առանց այն ել ցած ե, այժմս ավելի յե ինչերված. այսպես, նրանք 16 ժամվա համար ստանում են 35 ցենտ. նման յերեվույթներ տեղի ունեն արդյունաբերության ե մյուս ճյուղերում:

2. Հարձակումը բանվորական որվա վրա: Որինակ՝ տեքստիլ արդյունաբերության մեջ բանվորական որը յերկարացրված ե 11-ից մինչև 14 ժամ, ծխախոտի արդյունաբերության մեջ մինչև 15 ժամ: Բանվորների յուրաքանչյուր մի ձգտում իրենց դրության բարելավման համար, նրանց գնադակահարումը, դործարանների տաժանակիր ուժովը ավելի մեծ չափերի յե հասցնում, միաժամանակ ընդունելով դործարաններում կանացի ե յերեխաների եժան ձեռքեր:

Յեթե չինական բանվոր դասակարգն ապրում ե անտանելի ծանր պայմաններում, յենթարկվում ե չլրսված կամայականությունների, դրանից ավելի վատթար դրության մեջ ե գտնվում բանվորական յերիտասարդութունը: Արեւմտյան Յեվրոպայի ե Ամերիկայի աշխատավոր յերիտասարդության ուշադրությունը պետք ե մեխվի Չինաստանի բանվորական յերիտասարդության դրության վրա:

Բանվորական յերիտասարդության տեսակարար կշիռը Չինաստանի բանվոր դասակարգում չատ մեծ ե: Չինաստանում գոյություն ունեն մի շարք արդյունաբերական ճյուղեր, վորտեղ կիրառվում ե բացառապես յերիտասարդական ու մանկական աշխատանք: Չինաստանի արդյունաբերության մեջ յերիտասարդության աշխատանքի կիրառման բնութագրման համար կարելի յե բերել հետեյալ տվյալները: Չինաստանի յերկու ե կես միլիոն արդյունաբերական պրոդւկտարիատից յերիտասարդությունը կազմում ե.

Արդյունաբերության ճյուղերը	Բանվորների ամբողջ թիվը	Դրանցից յերիտասարդ ներթիվը	%
Մանվածային	230.000	200 000	70
Մետաքսադործական	160 000	120.000	80
Ծխախոտադործական	50 000	25.000	50
Շինարարական	200.000	65.000	30
Պղնձագրաֆ	50.000	12 000	25
Աղային	250.000	80.000	30
Մետաղադործական	60.000	12.000	20
Լեռնային	540 000	100 000	20
Յերկավթուղային	120.000	18 000	15
Ելեկտրո-արդյունաբերություն	80.000	15 000	15
Կոմունալ	250.000	60 000	15
Նավաշինարարական	300.000	30.000	10

Բացի դրանից մոտ 5 միլիոն յերիտասարդներ ու յերեխաներ (հատկապես մեծ թվով յերեխաներ աշխատում են վորպես աշակերտներ) դրադված են տնայնագործ-արհեստավորների ձեռնարկներում, վորոնք մեծ թվով ցրված են ամբողջ Չինաստանում: Յերեխաների աշխատանքը մեծ չափերով կիրառվում ե գրեթե բոլոր արդյունաբերական ճյուղերում: Մինչև 14 տարեկան յերեխաների թիվը՝ մետաքսի, մանվածային ե յուցկու դործարաններում չատ անդամ հասնում ե 30 % ե ավելի:

Այսպիսով մանվածային արդյունաբերության մեջ յերիտասարդությունը կազմում ե 70 %, մետաքսի արդյունաբերության մեջ՝ 80 %: Իսկ դրանք Չինաստանի արդյունաբերության հիմնական ճյուղերն են: Միայն Շանհայում, բուրժուական տնտեսադես Ֆու-Տու-Ան-ի տվյալներով, մանվածային արդյունաբերության մեջ յանանց թիվը կազմում ե ամբողջ բանվորների թվի 67 %, յերեխաներինը՝ 3 %, մետաքսի ար-

դյուցարներու թվան մեջ՝ 75 % կանայք և 20 % յերե-
խաներ. ծխախոտի արդյունաբերութեան մեջ՝ 69 %
կանայք և 4 % յերեխաներ. դուրյալաւորիկոտածի ար-
դյունաբերութեան մեջ՝ 62 % կանայք և 3 % յերեխա-
ներ. յուցկու արդյունաբերութեան մեջ՝ 54 % կանայք
և 12 % յերեխաներ: (Ի նկատի ունեցե՛ք, վոր յերեխա-
ներն աշխատում են արդյունաբերութեան վնասակար
ճյուղերում): Շանհայի միջադպին սենտրմենտում
աշխատում են՝ 12 տարեկանից ցած յերեխաներ՝ 21
հազար, վորից 17 հազարն աղջիկներ. 13 տարեկանից
բարձր՝ 147 հազար, վորից 103 հազարն աղջիկներ:
Այսպիսով ընդամենը դրադված են 168 հազար յերեխա-
ներ, վորոնցից 120 հազարն աղջիկներ: Նրանց աշխա-
տավարձը կազմում է ամսական կես դոլլար, իսկ շատ
անգամ նրանք որակյան ստանում են՝ 9 կոպպեր: Աշ-
խատավարձը Հանկուոյի ելեկտրոարդյունաբերութեան
մեջ՝ տղամարդկանց— 12 դոլլար, կանանց՝ 4 դոլլար և
յերեխաներին՝ 1,79 դոլլար. մետաքսի արդյունաբե-
րութեան մեջ՝ տղամարդկանց— 12 դոլլար, կանանց՝
11 դոլլար, յերեխաներին՝ 7 դոլլար. ոճաւոր արդյու-
նաբերութեան մեջ՝ տղամարդկանց— 14 դոլլար, կա-
նանց՝ 6 դոլլար և յերեխաներին՝ 3 դոլլար, ապակու
արդյունաբերութեան մեջ՝ տղամարդկանց՝ 8 դոլլար,
յերեխաներին՝ 2,26 դոլլար:

Մենք նախ և առաջ պետք է պատասխանենք այն
հարցերին, թե ինչո՞վ է բացատրւում յերիտասարդու-
թեան, կանանց և յերեխաների աշխատանքի նման տե-
սակարար կշիռը Չինաստանում:

Դա բացատրւում է նրանով, վոր այդ աշխատանքն
աղբիւի եփան է: Կապիտալիստական ռացիոնալիզացիան
Չինաստանում հրեշտիւր չափերի յե հասնում: Մեծա-
հասակ վորակալ բանվորներին արձակում են և
վարձում են կանանց ու յերեխաներ՝ սարսափելի ցած
աշխատավարձով: Կանայք և յերեխաները գլուղերից
կոտորակաւորակ յեն յեն յենթարկւում և ստրկութեան
են վաճառւում: Յերիտասարդութեան բանվորական ու-
րը միջին հաշւով 12-13 ժամ է, իսկ յերեխաներինը՝

10-11 ժամ և նրանք ստանում են ուղղակի մուրացկանի
աշխատավարձ ու ալտեղից միանգամայն հասկանալի
յե, թե ինչու կանանց և յերեխաների աշխատանքը
հանդիսանում է ամենաեփան: Այս բոլոր բարձրացրել
է և շարունակում է բարձրացնել բանվորական յերի-
տասարդութեան, կանանց և յերեխաների աշխատանքի
տեսակարար կշիռը Չինաստանի արդյունաբերութեան
մեջ:

Առանձնապէս սնհրածեշտ է մատնան, ել աշա-
կերտների դրութիւնը չինական արդյունաբերութեան
մեջ: Այս առթիւ չափազանց քիչ նշութիւ կան, սակայն
միքանի բաներ կան: Այդ չափազանց կարեւոր է հաշիւ
առնել, քանի-վոր դա պատկանում է յերիտասարդու-
թեան աշխատանքի հիմնական առանձնահատկութիւն-
ներին Չինաստանում: 1927 թվին յերիտասարդների
չինական միութիւնը հետադուտեց աշակերտութեան
դրութիւնը Չինաստանում: Քանի վոր այն հիմնակա-
նը, վորը պարունակւում է այդ հետադուտութեան մեջ,
կարող է ամբողջովին վերաբերվել և ներկա ժամանակ-
ներին, ուստի յես կրեւեմ միքանի քաղվածքներ:

«Յերիտասարդների չինական միութիւնը (ՈՒՄՍՍ-ի
չիճալիւս բաժնումնիւր) կատարել է Չանչայի ու
Հունանի պրովինցիայի մի շարք զաւառական քաղաք-
ների արհեստավորական բանվորութեան դրութեան հե-
տադուտութիւնը, վորը բանվորութեան դրութեան չա-
փազանց վառ պատկեր է տվել և չնայած 1925-27 թ.
թ. մեծ հեղափոխական կռիւներին ու հաղթանակնե-
րին՝ բանվորներն այնուդ դեռեւս մնացել են նահապե-
տական-ֆեոդալական, ցեխային սովորութիւնների
սպիւրտութեան տակ: Համաձայն այդ հետադուտութեան
տվյալների Չանչայի արհեստավորական բանվորներն
որակյան աշխատում էին 12-ից մինչև 15 ժամ՝ նախա-
ճաշի ու ճաշի համար աննշան ընդմիջումներով. մի
ճաշի ու ճաշի համար աննշան ընդմիջումներով. մի
քանի ճյուղերում (բամբակից պատրաստովոդ արտա-
ստանի ճյուղերում) բանվորներին և աշակերտներին չի
թուլատրւում քնել, մինչև տիրոջ կողմից նրանց
հանձնարարված աշխատանքի ավարտումը: Բացի նոր

տարվա մի քանի որերից և իրենց ցեխը հովանավորող սրբերին նվիրված տոնակատարություններից, բանավորներն ուրիշ հանգստի որ չունեն։ Չանչափ արհեստավորական բանվորության ամսական միջին աշխատավարձը հավասար է 6-8 դոլլարի. ամենաքիչ աշխատավարձը ստանում են ներկարարները (3-4 դոլլար), իսկ ամենաբարձրը՝ ջուհակները (11-12 դոլլար) և փորագրիչները (15 դոլլար)։ Նույն պատկերը կարելի չէ նկատել նաև մյուս պրավինցիաներում։ Ֆուլթոնում (Ֆուլդգայան) շինարարական բանվորները ստանում են միևնույն 10 ցենտ, արհեստավորական բանվորները միջին հաշվով ամսական 8—10 դոլլար։ Մեյքինում (Մեն-հուեյ) դերձակներն որակյալ արհեստանոցում ստանում են 15 ցենտ, իսկ պատվիրատվի տան մեջ աշխատելիս՝ 20 ցենտ։ Ցեյլուցգայանում (Ցգայանոյի) ամենավարժ արհեստավորները ստանում են ամսական 20 դոլլար։

Բայց ամենից ծանր դրության մեջ գտնվում են ինչ աշակերտները։ Աշակերտը, վորը սովորաբար 3-ից մինչև 5 տարի ժամանակով տրվում էր վարպետի մոտ սովորելու, առաջին տարիներում վոչ մի վորակ ձեռք չէր բերում, այլ վարպետի կողմից ոգտագործվում էր, վորպես տնային ծառայող, աշխատելով վոչ թե քիչ, այլ ավելի շատ, քան արհեստավորական բանվորները (այն չափով, վոր չափով նա պետք է սպասարկեր վոչ թե միայն տիրոջը, այլև նրա հաճախորդներին և բանվորներին)։ Իրեն ուժերից վեր աշխատանքի համար աշակերտը ստանում էր գրոշներ։ Տերը շատ հաճախ ձեծում է աշակերտին։ Ուսուցման համար աշակերտն ինքը պետք է տիրոջը վճարի և բացի դրանից 2-ից մինչև 5 դոլլար մուտքի վճար պետք է տա ցեխին։ Մի քանի արհեստների նկատմամբ, ինչպես որինակ՝ մետաքսագործության և ներկարարության, ցեխերը սահմանափակում են աշակերտների թիվը, սա հայն վերջերս այդ ուղղությամբ ցեխերի ռեզլամենտը շատ հաճախ խանդավորում են։

Ահա և մի քանի ուրիշ փաղվածքներ աշակերտների

դրության հետադուրությունից, վորը կատարված է յերիտասարդների չինական միության կողմից։

«Սետախագործություն» — Աշակերտներն աշխատում են առավոտից մինչև կես գիշեր, արժանանում են ծեծի ու հայտնաքի, յեթե վորևե կերպ չեն դոհացնում տիրոջը կամ հաճախորդներին...

Կալմար քաղք պատրաստող արհեստանոցներ. Յեթե աշակերտության ժամանակամիջոցում աշակերտը հիվանդանա կամ արձակուրդ վերցնի, նա հետագայում պետք է լրացնի այդ ժամանակը (այսպես որինակ՝ յեթե նա 10 որով արձակուրդ վերցնի, ժամկետը վերջանալուց հետո նա պարտավոր է ձրիաբար 30 որևա աշխատել) և դրանից հետո միայն նա վարպետի կողմ կստանա։ Աշակերտն աշխատավարձ չի ստանում. բնակարան և ծախսեր նրան պետք է տա իր տերը, սա հայն հագուստը նա ինքը պետք է ձեռք բերի։ Աշխատում է որակյալ 14—15 ժամ։ Առաջին յերկու տարիների ընթացքում նա վաղվորուքի մեջ է, մաքրում է սենյակները, ողնում է ճաշ պատրաստել և այլն»։ (Չժուեն-դո կառույն Նյանցգայան 1928)։

Ահա պայմանագրի որինակը, վոր աշակերտի ծնողները կնքում են արհեստանոցի տիրոջ հետ.

«Յես, իմ-Չուն-Շեն կնքում եմ այս պայմանագիրը վարպետ Լի-յի հետ առ այն, վոր իմ վորդի Չժին-ցինը մտնում է վարպետ Լիի մոտ սովորելու յերեք տարի ժամանակով, վարձատրությամբ 5 դյաո արժաթով։ Յերեք տարվա ընթացքում աշակերտը պետք է իր հաշվով յերկու ճաշ տա։ Յերեք տարվա ընթացքում աշակերտը պարտավոր է անխոս լսել իր վարպետին, կիսատ չթողնել իր ուսումը և չանցնել ուրիշ վարպետի մեծ։ Յերեք տարին լրանալուց հետո աշակերտն ազատ կերպով կարող է տնորինել իր վիճակը՝ զնալ ուր ցանկանում է և աշխատել ինչպես կամենում է. վարպետն այլևս չի խառնվում նրա գործերին և նրա հետագա բախտի համար պատասխանատու չէ։ Աչքի առաջ ունենալով, վոր բանավոր պայմանադրությունը հիմք չի կարող ծառայել, ուստի կնքվում է դրավոր

պայմանադիր, վորից մեկ որինակ տրվում է աշակերտի հոշը, իսկ մյուսը՝ վարպետին»։ (Հունանի Յերիտասարդների չինական մրուխյան կողմից 1920—1921 թ. թ. կատարած արհեստավորական բանվորների դրուժյան հետապնդման նյութերից)¹)։

Այստեղ անհրաժեշտ է նշել, վոր աշակերտները յենխարկվում են անխնա չահագործման, կախված են վարպետի քմահաճույքից, ստանում են սուբյեկտի աշխատավարձ, պարտավոր են կատարել այն բոլոր աշխատանքները, վորոնք նրանց առաջարկվում են (տես յին աշխատանք) և այլն։

Այսպիսով այդ պայմանադիրը հանգում է նրան, վոր աշակերտն ամբողջ ժամանակամիջոցում ստրկանում է, վոչ մի վորակ ձեռք չի բերում, և յերբ ուսուցման յառավայ ժամկետը լրանում է, աշակերտը վաճվում է փողոց, կարող է անորինել իր վիճակը և գնալ ուր վոր կամենում է։ Նրա բախտով այլևս վոչ վոք չի հետաքրքրվում։ Նման դրուժյունը պահպանվում է և ներկայումս։

Ավելի վատթար դրուժյան մեջ են գտնվում յերեսխաներն արդյունաբերության մեջ։ Մենք ունենք Շանհայի մունիցիպալիտետի հանձնաժողովի կողմից թողթի դործարանում կատարած հետազոտությունը։ Այստեղ գրված է. «Յերեսխաները գլխավորապես աշխատում են մանկու բաժնում, համարյա ամբողջ ժամանակը փողերի վրա, քանի վոր նստարաններ չկան։ Հանձնաժողովը դժվարանում է ճիշտ կերպով վորոշելու, թե յերեսխաները քանի տարեկան հասակից են սկսում աշխատել դործարանում, թայց համենայն դեպս նա տեսել է 6—7 տարեկան հասակ ունեցող յերեսխաներ»։

Եմիլ Վանդերվելդեն, այդ բոված սոցիալ-ֆաշիստը, Չինաստանի միջանի դործարանները հաճախելուց հետո ստիպված է յեղել խոստովանել, վոր այն-

¹) Գիտական-հետազոտական ինստիտուտի բյուլետենը Չինաստանի վերաբերյալ, № 1—2։

տեղ «կապիտալիստների համար դրախտ է, իսկ բանվորների համար դժոխք»։

Յես տեսա, գրում է նա, թե աշխատանքի ինչ պայմաններ կան մեծաքանի դործարաններում, վորտեղ յեռացող բոժոժներից ողբ չափազանց տաքանում է այն յերիտասարդ աղջիկների ու յերեսխանների համար, վորոնց մեծամասնությունը, ավա՛ղ, 10 տարեկանից փոքր է»։

Դրան պետք է ավելացնել, վոր Չինաստանում տարածված է ստրկությունը։ Մանկական ստրկությունն ամենուրեք տարածված յերեսույթ է Չինաստանում։

Հյուսիս-արևմտյան Չինաստանի գրեթե բոլոր քաղաքներում կան յերեսխանների վաճառքի հատուկ շուկաներ։ Աղջիկ գինը՝ 20 դոլար է, իսկ տղայի գինը՝ 10—15 դոլար է, իսկ միջանի տեղերում գներն իջնում են՝ մարդին մինչև 3—4 դոլար։ Ամերիկական միսիոներուհի Դայմոնդը գրում է, վոր «Չինաստանում առևտրի յերեք տեսակները շահ են բերում՝ ստրուկների առևտուրը, ոսկրումի առևտուրը և խաղատները պահելը»¹)։

Մանկական ստրկությունը չափազանց տարածված է և ծագում է մի շարք դանապան պատրվակներով. աղջիկների վաճառքը՝ վորպես կնոջ, յերեսխանների «վորդեզրման», յերեսխաները՝ վորպես նվեր կամ ոժիտ, յերեսխանների վաճառքը՝ պարտքերի գիմաց և այլն։

Ահա թե ինչպես է բանվորական յերիտասարդության և յերեսխանների դրուժյունը չինական արդյունաբերության մեջ։ Սրան պետք է ավելացնել դործադրությունը, վորի մասին յես արդեն հիշատակել եմ։ Վոչ մի կերպ հնարավոր չէ վորոշել Չինաստանի բանվորական յերիտասարդության դործադուրկների ճիշտ թիվը։

Այսպիսով Չինաստանի բանվորական յերիտասար-

¹) Գիտական-հետազոտական ինստիտուտի բյուլետենը Չինաստանի վերաբերյալ № 3—4, յերես 51։

դուժյան դրուժյունը բնութագրվում է նախ՝ նրա բացարձակ քաղաքական իրավագույնը դրուժյամբ՝ յերկրորդ՝ անսահման շահագործմամբ և վերջին հյուժների քամումով, յերրորդ՝ ստրկության առկայությամբ, մանկական աշխատանքի հսկակայան չափերի կիրառմամբ, չորրորդ՝ աշակերտական սխտեմի տարածմամբ, վորը հանդիսանում է ստրկության և անխնա շահագործման մի ուրիշ ձևը, հինգերորդ՝ չինական բանվորական յերիտասարդության դրուժյունն ավելի վատթար է, քան մյուս կապիտալիստական յերկրներին բանվոր յերիտասարդության դրուժյունը, ինական է, վոր բանվորական յերիտասարդությունը չափազանց կարևոր դեր է խաղում պրոլետարիատի բոլոր կռիվներում: Չեմ պատմի բոլոր փաստերը, կհիշատակեմ միայն այնպիսի գործադուլները, վորտեղ բանվորական յերիտասարդությունն իրեն ցույց է տվել՝ վորպես չափազանց հետևողական, չափազանց վստահելի նեցուկ մեր կարմիր պրոֆմիություններին և կուսակցություններին՝ անցյալ տարի Տյանշանում, տրամվայի բանվորների գործադուլի ժամանակ Շանհայում, Շենսիի, Լյաո-յի գործարաններում տեղի ունեցած գործադուլների ժամանակ, մետաքսագործների, փոստատարների գործադուլների ժամանակ և այլն:

Բացի դրանից վերջերս մենք նկատում ենք յերիտասարդության ինքնուրույն գործադուլներ: Այդպիսի գործադուլներ տեղի յեն ունեցել, որինակ՝ Հանկուույի և Շանհայի միջև յերկուսկող չողենավի վրա և այլն:

Ինչպիսի դնահատական մենք պետք է ներկայումս տանք բանվորական յերիտասարդության պայքարին: Նախ՝ այդ պայքարն անում և լայնանում է. անում է նաև բանվորական յերիտասարդության մասնակցությունն ընդհանուր գործադուլներին. յերկրորդ, բանվորական յերիտասարդության գործադուլները գլխավորապես կրում են տարերային բնույթ և կոմյունիստիկության կողմից չառ թույլ են ղեկավարվում:

Չնայած այն հանգամանքին, վոր կոմյունիստիկությունն այդ ուղղությամբ առանձին հաջողությունների հասավ, ղեկավարեց բանվորական յերիտասարդության միջանի գործադուլներ, ակտիվ մասնակցություն ունեցավ հեռախոսային կայանի գործադուլին, Պուի գործարանի գործադուլին և այլն, սակայն այդ դեռ բավական չէ: Անհրաժեշտ է հիշատակել, վոր ընդհանուր գործադուլների ժամանակ յերիտասարդության պահանջները քիչ են առաջադրվում: Միության առաջ խնդիր է դրված՝ բանվորական յերիտասարդության անտեսական պահանջների հիման վրա ընդգրկել նրա պայքարը: Ահա առաջին հարցը, վորը մենք պետք է դնենք մեր առաջ: Յես կանդ կառնեմ այդ հարցի վրա բացառապես այն նոր պրոբլեմների կապակցությամբ, վորոնք այդ առթիվ մեր առաջ կանդնել են՝ նոր վեճերի կապակցությամբ: Այսպիսի հարց է դրված, թե մենք ինչպիսի ծրագրով ենք մոտենալու բանվորական յերիտասարդության պահանջներին, քանի վոր առանց այդպիսի ծրագրի, առանց պայքարի այդ ծրագրի համար, անկարելի յե գլխավորել բանվորական յերիտասարդության կռիվները: Դուք գիտեք, վոր Գոմինդանը նույնպես ունի յոր որենսդրությունը՝ մանկական աշխատանքի և բանվորական յերիտասարդության աշխատանքի մերաբերալ: Այդ մեղ չափազանց կարևոր է հաշիվ առնել: Մեր ծրագրերը պետք է հակադրվի այդ ծրագրին: Գոմինդանի այդ որենսդրությունն կրում է բացառապես դեմագոգիկ բնույթ և Գոմինդանի կողմից կյանքում յերբեք չի կիրառվելու: Բաց և այնպես նա գոյություն ունի: Նա պատկանում է Գոմինդանի «ձախ» մանյուիթների թրվին, մասսաներին խարելու նրա ձգտումներին: Այդ որենսդրությամբ արգելվում է 14 տարեկանից բաց յերեխաների աշխատանքը գործարաններում: Յեվ նույն տեղում ել ավելացնում է, վոր 12 տարեկանից բարձր հասակ ունեցող յերեխաներին, վորոնք այս որենքը հրապարակելու մոմենտին գտնվում եյին ձեռնարկներում, թույլատրվում է հետադաշում ևս մնալ

այդ ձեռնարկներում: Հետագայից և հիշատակել, վոր կանանց և յերեխաների աշխատանքին վերաբերող դոմինդանական որենքի այդ բաժնում ցույց ե տրված, վոր բոլոր յերեխաները, բոլոր աղաներն ու աղջկաները 14 տարեկանից բարձր և 16 տարեկանից ցած՝ համարվում են յերեխաներ: Հետո գալիս ե մի կետ այն մասին, վոր յերեխաներին թույլատրվում ե աշխատել միայն թեթեւ աշխատանքներում: Բացի դրանից ցույց մուներ կա այն մասին, վոր յերեխաները չպետք ե րդրագվին յերեկոյան ժամը 7-ից մինչև առավոտյան ժամը 6-ը և այլն:

Կրկնում եմ, վոր այդ ծրագրին ամբողջովին հանդիսանում ե դեմադոգիտական ծրագիր, վորը պետք ե մեր կողմից դիմակադերձ արվի և վոր Գոմինդանի կողմից կյանքում յերեքը չպետք ե կերտալի: Սակայն պարզ ե, ընկերներ, վոր այդ ծրագրին մենք պետք ե հակադրենք մեր ծրագիրը: Հայտնի յե, վոր մենք ունենք մի շարք հիմնական լոզունգներ, վոր տարածում ենք Չինաստանում՝ 4—6-ժամյա բանվորական որվա պայքար, համասար աշխատավարձի, կրճատ բանվորական որվա, մանկական աշխատանքի վերացման համար մղվող պայքար և այլն:

Բայց դա բավական չե: Չինական կոմյուրիստները մինչև հիմա չունի կոնկրետ կերպով մշակված մասնակի պահանջներ, իսկ առանց դրան, անհնար ե տանել և ծավալել բանվորական յերիտասարդության պայքարը:

Մենք պետք ե լրացնենք այդ ծրագիրը մի շարք մասնակի լոզունգներով, ինչպես՝ պայքար բանվորական որվա մաքսիմալ կրճատման վերաբերյալ և այլն: Չինական կոմյուրիստները այդ ուղղությամբ սկսել ե աշխատանք: Շանհայում հրավիրված ե յեղել խորհրդակցութիւն, վորը մշակել ե բանվորական յերիտասարդության պահանջները՝ մանվածային արդյունաբերության պահանջների համեմատ: Անհրաժեշտ ե նշել, վոր արդյունաբերության յուրաքանչյուր մի ճյուղում, նույնիսկ յուրաքանչյուր մի գործարա-

նում, վորտեղ պայքար ե տարվել, կարելի յե մի շարք պահանջներ առաջադրել (ընդդեմ կոպիտ վարվեցողության, ռացիոնալիզացիայի և այլն), վորոնք բանագործական յերիտասարդության կողմից կապառպանվեն:

Սակայն ալտեղ պետք ե խուսափել յերկու հնարավորութիւնից: Նախ՝ անհրաժեշտ ե չթույլատրել մեր ծրագրային պահանջների իջեցումը՝ մասնակի պահանջների առաջադրության ուղղությամբ կատարված ձևով: Այդ կարգին ե վերաբերում ոպորտունիստական առաջարկն այն մասին, վոր մեր ծրագրային լոզունգը՝ յերիտասարդության համար 4—6-ժամյա բանվորական որվա պայքարը փոխարինվի 6-ժամյա բանվորական որվա 14-ից մինչև 20 տարեկան բանվորական յերիտասարդության համար: Միանգամայն պարզ ե, վոր այդ լոզունգը սխալ ե: Ըստ ելուծյան դա մի փորձ ե փոխարինելու մեր ծրագրային լոզունգը սահմանափակ մի լոզունգով՝ բանվորական յերիտասարդության համար մասնակի առաջադրության դիմակի տակ, վորը խորն ոպորտունիստական մի փորձ ե հանդիսանում: Վորպես բանվորական յերիտասարդության մասնակի պահանջ պետքակամ ե այդ լոզունգը, թե վոչ: Վոչ մի դեպքում նա պետքական չե, քանի վոր այն պայմաններում, յերբ բանվորական յերիտասարդութիւնը, յերեխաներն աշխատում են 10—12 և ավելի ժամ, մենք պայքարում ենք բանվորական որվա ամեն տեսակի կրճատման համար, և մենք պարտավոր ենք դրան հասնել: Մի՞թե մենք կհրաժարվենք բանվորական յերիտասարդության որվա յուրաքանչյուր մի կրճատումից, յեթե, որինակ՝ գործադուլի միջոցով հասնել ենք դրան: Հասկանալի յե, վոր վոչ: Ընկերները պատճառաբանում են իրենց առաջարկը նրանով, վոր մեր ծրագրային 4—6 ժամ բանվորական որվա պահանջը հարկաւորում ե ավելի քան անիրական: Բայց միաժամանակ մասնակի պահանջի ձևով նրանք առաջադրում են 6-ժամյա բանվորական որվա նույնպես շատ «անիրական» լոզունգը: Սակայն ըստ ելուծյան դա

հանդիսանում է վոչ ալ ինչ, յեթե վոչ ծպտյալ, դի-
մակավորված պայքարի մի փորձ ընդդեմ մեր Գ—Յ
ժամյա բանվորական որվա հիմնական ծրագրային յո-
ղունդի։ Այդ կարգին և պատկանում նաև այն առաջար-
կը, վորը վերաբերում է մանկական աշխատանքը վե-
րացնելու լոյունդը—մանկական աշխատանքը Չինաս-
տանում սահմանափակելու լոյունդով փոխարինելուն։
Միանգամայն պարզ է, վոր և նման փորձի դեմ մենք
պետք է դուրս գանք ամենավճռական կերպով։ Մենք
չենք կարող դուրս գալ այդպիսի սահմանափակող յո-
ղունդով։ Մենք պետք է պայքարենք մանկական աշխա-
տանքի լիովին վերացման համար։ Վոչ մի զիջում այդ
լոյունդի խնդրի վերաբերյալ։ Մենք պետք է պայքար-
ենք մի շարք մասնակի պահանջների համար, վորոնք
պետք է տարածվեն և յերեխաների վրա, սակայն հիմ-
նական լոյունդը չպետք է քողարկել։

Յերկրորդ տենդենցը կայանում է նրանում, վոր
ընկերները չեն կամենում պայքարել յերիտասարդու-
թյան տնտեսական պահանջների համար, բանվորական
յերիտասարդությանը մոտենում են բացառապես քա-
ղաքական պահանջներով, բացառապես ծրագրային
լոյունդներով։ Այդպիսի սխալներ տեղի չեն ունեցել
մի քանի գործադուլների ժամանակ։ Պուի գործադու-
լի ժամանակ կատարվել են «ձախ» սխալներ, այն ժա-
մանակ, յերի ընկերները կոչ եյին անում բանվորական
յերիտասարդությանը՝ քանդելու փոստիկանական կա-
յանները, խորտակելու մեքենաները և այլն։ Զգուշում կա
բանվորական յերիտասարդության տնտեսական պա-
հանջների համար պայքար չմղել այն պատրվակով, վոր
իր բն չինական բանվորական յերիտասարդությունը
գտնվում է ալ պայմաններում, քան յնվրոպական յե-
րիտասարդությունը, և պատրաստ է արդեն զինված
ապստամբության և ալին։

Մենք պետք է փչենք և այդ տեսակետը։ Մենք
պետք է կարողանանք կոչել յուրաքանչյուր մի պահա-
ն, զլիսավորել բանվորական յերիտասարդության
յուրաքանչյուր մի յեւոյթը։ Ներկայումս կոմյերիտ-

միությունը հետ և մնում բանվորական յերիտասար-
դության պայքարի ծավալման տեսակերից։ Մենք ու-
նենք չինական կոմյերիտմիության մի շարք ձեռնար-
կումներ յերիտասարդության պայքարի կաղմակերպ-
ման գործի ասպարիզում։ Դրանց թվին և պատկանում
Շանհայում գումարված բանվորական յերիտասարդու-
թյան կոնֆերենցիաները։ Այդ կոնֆերենցիաներից մե-
կը, չնայած պատգամավորների սահմանափակ թվին,
շափաղանց խոշոր նշանակութուն ունեւ, քանի վոր
նրա պատգամավորներն ընտրվել եյին գործարաննե-
րում, յերիտասարդության մեծ թվի կողմից։ Այդ
կոնֆերենցիան ընդունել է կարեւոր վորոշումներ, վո-
րոնք արձագանք դտան մյուս շրջաններում։

Հիմնականը, վորով կարելի յե բնութագրել ներ-
կա դրությունը, կայանում է նրանում, վոր կոմյերիտ-
միությունը յետ և մնում, վոր նա դեռ ևս չի զլիսավո-
րել բանվորական յերիտասարդության պայքարը։
Կոմյերիտմիության առաջ դրված խնդիրները հետե-
յալներն են՝ բանվորական յերիտասարդության կողմից
ընդհանուր գործադուլներին մասնակցության ծավա-
լումը, գործադուլային կոմիտեների աշխատանքներին
մասնակցելը, յերիտասարդության պահանջների առա-
ջադրումը, պայքար ընդդեմ ոստրոտնիստական և ա-
վանտյուրիստական տենդենցների՝ բանվորական յե-
րիտասարդության կոմիտեների դեկավարման գործում։

Յեթե դուք հետեւելու ինեք վերջերս տեղի ունե-
ցած գործադուլներին, կնկատեք, թե վորքան քիչ են
առաջադրվում բանվորական յերիտասարդության պա-
հանջները։ Ինչո՞ւ։ Գուցե այն պատճառով, վոր բան-
վորական յերիտասարդությունը չի՞ մասնակցել այդ
գործադուլներին։ Այդ այդպես չէ։ Գուցե նա վոչինչ
չի պահանջել։ Նույնպես վոչ։ Գլխավորապես այն
պատճառով, վոր պրոֆիտությունների մեջ մենք վնա-
սակար տենդենց ունենք՝ չառաջադրել յերիտասար-
դության պահանջները, աչքի թողի անել նրանց, մո-
ռանալ նրանց մասին, նրանց պահանջները համարել
յերկրորդական։

Անհրաժեշտ է ուժեղացնել մեր աշխատանքը պրոֆ-
միութիւններում, ուղարկելով այնտեղ կոմյերիտա-
կաններին :

Զինակաւ կոմյերիտութեան Կենտկոմի IV պլե-
նումը վորոշել է միջանի հարյուր կոմյերիտականե-
րի մորելիլացիայի յանձնարելը պրոֆմիութիւններում
աշխատելու և այնտեղ պատասեկական սեկցիաներ կազ-
մակերպելու համար : Յեւ վայել միջոցը մենք պետք է
համարենք վորպէս կոմյերիտութեան պարտավո-
րութիւն, վոր դրված է նրա վրա պրոֆմիութեան
նկատմամբ և մյուս կողմից, վորպէս բանվորական
յերիտասարդութեան պայքարի ընդգրկման դործի մի
լուրջ գործոն՝ պրոֆմիութիւնների մեջ մեր աշխա-
տանքը ուժեղացնելու գործում : Պրոֆմիութիւննե-
րում և պատասեկական սեկցիաներում մեր աշխա-
տանքների վատ դրութեան գլխավոր մեղքն ընկնում է
հենց իրեն կոմյերիտութեան վրա, վորն ինչպէս
հարկն է չի կարողացել կազմակերպել այդ աշխատան-
քը :

Զինաստանում գոյութիւն ունեն մի շարք դանա-
պան մասսայականեկազմակերպութիւններ, վորոնք ա-
ռաջացել են տարերայնորեն, ինչպէս որիսակ՝ այսպէս
կոչվող յեղրայութիւններն ու քուլուրութիւնները :
Շանհայի թաղամասերից մեկում յերեազ հազար հո-
գուց բաղկացած անկուսակցական յերիտասարդու-
թեան մի կազմակերպութիւն, վորը մի շարք տնտե-
սական պահանջներ առաջադրեց : Կոմյերիտութիւն-
նը շատ յերկար ժամանակ չեր նկատում այդ կազմա-
կերպութիւնը, այնինչ նրա մեջ կային հեղափոխա-
կան տարրեր, վորոնց կարելի յեր ավելի մոտեցնել
կոմյերիտութեանը : Կարելի յեր այդ կազմակերպու-
թեան իր պայքարի պրիմիտիվ գիւրքով փոխադրել մեր
քաղաքական պահանջների ոեկտերի վրա :

Այդ կազմակերպութիւնների ղեկավարութիւնը
հանդիսանում է կոմյերիտութեան կարեւորագույն
գործերից մեկը :

Իր ամբողջ հասակով կանգնում է նմանապէս պա-

տանեկալան լիազորների շարժման ծավալման խըն-
դերը :

Հետեյալ խոշոր խնդիրը՝ դա դեղին պրոֆմիու-
թիւնների դեմ մղվելիք պայքարն է : Անհրաժեշտ է
նշել, վոր այդ խնդրին թե կուսակցութիւնը և թե
կոմյերիտութիւնը վող բավարար ուշադրութիւն
են դարձրել : Անհրաժեշտ է ծավալել այդ աշխատան-
քը, մարդիկ ուղարկելով այնտեղ, հանելով բանվո-
րական յերիտասարդութեանը գոմինդանական պրոֆ-
միութիւնների առաջնորդները ազդեցութիւնից և
այլն :

Սրանք են կոմյերիտութեան հիմնական խնդիր-
ներն այս ասպարիդում :

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՇՈՒՄԸ ԿԻՄ-Ի V ԿՈՆԳՐԵՍՍԻ ՀԵՏՈ

Դուք գիտեք, վոր ԿիՄ-ի V կոնգրեսից հետո
ԿՅՄ հանդես յեկավ ընդդեմ չենդուսյուսականների,
ընդդեմ տրոցկիստների, բունց Կոմինտերնի ճիշտ գի-
ծր և մի շարք խոշոր հաջողութիւնների հասալ : ԿՅՄ
Կենտկոմի գիծը շատ հաճախ է ԿիՄ-ի հալանութեան
արժանացել : Սակայն, ԿՅՄ բոլոր այդ հաջողու-
թիւնները համարյա կոծկվել են այդ սխալների հետե-
վանքով, վոր տեղի յեն ունեցել 1930 թվին : Դուք
գիտեք, վոր չինական ԿՅՄ ամբողջ Կենտկոմը բաժա-
նում եր լիլիսյանական թեորիան : Յեա արդեն ասել եմ,
թե ինչու են նրա ելութիւնը : Մեզ կարեւոր
է արդել, թե այդ ի՞նչպէս պատահեց, վոր այնպիսի
Կենտկոմ, վորպիսին հանդիսանում է Զինաստանի ԿՅՄ
Կենտկոմը, հետեւեց Լի-Լի-Սյանի թեորիային, բոտ ե-
լութեան ժխտեց ինտերնացիոնալիստական դիտցիայի-
նան, հրաժարվեց դուրս գալ աշխ ժամանակվա չինա-
կան կոմկուսի քաղաքական սխալ դրութիւնի դեմ և
այլն :

ԿՅՄ Կենտկոմի այդ դրութիւնը հետեւանք եր այն դր-
կապուստի, վորպիսին Զինաստանի ղեկավար ընկեր-

Ներն անցյալ տարի ունեցան՝ Կարմիր բանակի և բան-
վորական շարժման հաջողութիւնների հետևանքով։
Այն ժամանակ Կարմիր բանակը գրավել էր Չանչանը,
ծափալուծեց եր պարտիզանական շարժումը, արդյուն-
աւարելութեան մեջ տեղի ունեցին դործադուլներ և
այլն։ Այդ բոլոր հաջողութիւններից ընկերների գլու-
խը պտույտ չեկալ, և այստեղից առաջացան այն
գրուկները, վորոնք ծափալեցին թե ԿՅՄ և թե կու-
սակցութեան մեջ, այն է՝ բոլոր վայրերում ապստամ-
բութիւններ կազմակերպելու ծրագրերը և այլն։

Յերկրորդ պատճառը հանդիսանում է կոմյերիտ-
միութեան և նրա կադրերի անբավարար կազմը։ ԿՅՄ
պրոլետարական խափը շատ քիչ է։ Մեր կադրերը մին-
չև այժմ գլխավորապես ուսանողական, ինտելիգեն-
տական կադրեր են, վորոնք յենթարկվելով հեղափո-
խական Փրադայի, հետադաշում շատ արագութեամբ
ընկնում են պետիմիդի գիրկը։ Հեղափոխական վերել-
քի պարագաներում նրանք չկարողացան ընտրութեան
կատարել և գերազնահատելով սխառացիան, ալլապիսին
հայտարարեցին անմիջական հեղափոխական։ Լենինը
«Հեղափոխական Փրադայի մասին» իր հոգովածում
գոնէ, և, վոր հեղափոխական Փրադայի յենթարկում
են գլխավորապես այնպիսի կուսակցութիւնները,
վորոնք իրենց մեջ են ընդգրկում զանազան մանր-
բուրժուական տարրերի և վորոնք արտահայտում են
իրենց վրա ծանրագոյ մանր-բուրժուական տարրերը։
Նույն բանը տեղի չէ ունեցել նաև Չինաստանում։

Լիյիսյանական գծի կիրառումը մեծ փառ հա-
ցրեց կուսակցութեանը։ Վատագամ կոմյերիտմիտ-
թեան կազմակերպչական գրութիւնը։ Համարյա թե
լիկվիդացիայի յենթարկեցին մասսայական կազմա-
կերպութիւնները։ Նոյեմբերի 7-ի, ՄՅՈՒԴ-ի և ու-
ղոստոսի 1-ի դեմոնստրացիաներն անհաջող եղին։
Դրանից հետո, յերբ արդեն կուսակցութեան Կենտ-
կոմը և կոմյերիտմիութեան Կենտկոմը կատարեցին
առաջին, ճիշտ է, աննշան քայլը դեպի Կոմին-
տերնի և ԿիՄ-ի գիծը, տեղի ունեցավ կուսակ-

ցութեան Կենտկոմի III պլենումը և նրանից հետո կոմ-
յերիտմիութեան Կենտկոմի III պլենումը։ Կոմկոմի
և կոմյերիտմիութեան կենտկոմների պլենումները փո-
խանակ կանգնելու կոմինտերնյան գծի վրա, դիմակա-
ղերձ անելու Լի-Լի-Սյանի գիծը մինչև վերջը, կանգ
առան կես ճանապարհին։ Նրանք համաձայնողական
գիծ բռնեցին։ Տեթե կուսակցութեան Կենտկոմի III
պլենումը բռնեց այն գիծը, թե Լի-Լի-Սյանի գիծն
ըստ ելութեան նույնն է, ինչ-վոր Կոմինտերնի գիծը, և
միայն կան տակախակաւ տարրերութիւններ՝ կոմյե-
րիտմիութեան Կենտկոմի III պլենումն ել միացավ այդ
համաձայնողական վորոշումներին. փոխանակ այդպի-
սիները դիմակաղերձ անելու, մինչև վերջը դիմակա-
ղերձ անելու Լի-Լի-Սյանի լիկվիդատորական գիծը կոմ-
յերիտմիութեան մեջ նա հաւանութեան տվեց այդ վո-
րոշումներին։ Միանգամայն բնական է, վոր կոմյերիտ-
միութեան Կենտկոմն իր համաձայնողական նման գրույ-
թով այլևս չէր կարող զլխավորել պայքարն ընդդեմ
լիկլսյանականութեան կոմյերիտմիութեան ներսում,
լակ դա այն ժամանակ հանդիսանում էր հիմնական նա-
խադրյալը, առանց վորի անհնար էր առաջ շարժվել։
Յեւ այն ժամանակ, մենք այդ պետք է ընդգծենք,
մասսաները խառնվեցին դործին։ ԿիՄ-ը նույնպես
ստիպված յեղավ խառնվելու։ «Վերից» և «ներքից»
կատարված այդ միջամտութիւնների չնորհիվ ձեռք
առնվեցին այնպիսի միանգամայն անհրաժեշտ միջոցա-
ռումներ, ինչպես որինակ՝ Կենտկոմի III պլենումի
վորոշումների վերացումը (նպատակ ունենալով ամ-
բողջովին լիկվիդացիայի յենթարկելու այն սխալնե-
րը, վոր թույլ էր տվել կոմյերիտմիութեան Կենտկո-
մը, դրանց թվում և կոմյերիտմիութեան III պլե-
նումից հետո) և վերջապես ղեկավար կազմի փոփո-
խութիւնը։

Ղեկավար կազմի փոփոխութեանից հետո ԿՅՄ
ներսում ստեղծվեց ընկերների կազմից կատարած ի-
րենց սխալների անկեղծ խոստովանութեան և կոմին-
տերնյան ու կիմական գծի կիրառման յերաշխիքներ։

Վերադառնալու անհաշիվ օրեր և ամիսներ անցան, և այն հանգամանքը, վեր կոմյերիտովությունը վերանորոգված ղեկավարությունը յեռանդով սկսեց պաշտպանել Կոմիտեի գործը: Կոմյերիտովությունը ինքը շատ արագ կերպով աշխարհի հետ հաշիվը մաքրելով, շարունակեց ակտիվ կերպով պայքարել ընդդեմ լիբերալականության մեծագործների: Այժմ Կոմյերիտովությունը կանգնած է ճիշտ ճանապարհի վրա, վճռականապես կռվում է յերկու ճակատում և իր պրակտիկ աշխատանքում ղգալի հաջողությունների յ հասել:

Կոմյերիտովության Կենտկոմի բյուրոյի վերանորոգված ղեկավարությունը սկսեց ԿՅՄ Կենտկոմի IV պլենումի նախապատրաստական աշխատանքը: Այդ ժամանակվա ընթացքում ԿՅՄ արդեն հետզհետե լծվեց գործնական աշխատանքի: ԿՅՄ Կենտկոմի IV պլենումը կայացավ այս տարվա սկզբում, և պետք է ասել, վեր նա հիմնականում վճռեց այն հարցերը, վերոնք դրված էին այդ պլենումի առաջ: IV պլենումը լիկվիդացիայի յ յեռմարկեց III պլենումի սխալները, շարունակեց պայքարը յերկու ճակատում և ցույց տվեց, թե ինչպես պետք է այդ պայքարը կիրառել յուրաքանչյուր մի բլիզում:

IV պլենումը ԿՅՄ ամբողջ աշխատանքն ուղղեց հետևյալ ուղղությունը.

1. Կարմիր բանակի և ԿՅՄ ամբողջումը խորհրդային շրջաններում:

2. Բանվորական յերիտասարդության պայքարին ղլխավորելը:

3. Իրեն ԿՅՄ կազմակերպչական ամբողջումը, յուր ձեռնարկներ մուտք գործելը և այլն:

Հիմնականը, վերո մենք պետք է նշենք ԿՅՄ Կենտկոմի IV պլենումի աշխատանքներում, դա այն հանգամանքն է, վեր ԿՅՄ Կենտկոմի նոր բյուրոյի ղեկավարությունը, վերո կանգնած է ամբողջապես ու լիովին Կոմիտեի ու ԿԻՄ-ի դժի վրա, Կոմյերիտովության յսկական դրություն ճիշտ ղնահատականը տվեց, առանց պաճուճանքի, առանց այսպես կոչվող «չինա-

կան» թվերի: Կենտկոմին հաջողվեց այդ պլենումում ստուգել ԿՅՄ շրջանային բոլոր յտոյր կազմակերպությունները և նրանց յուրաքանչյուրի առաջ դնել կոնկրետ յնդիկներ, վերոնց կատարումը կարելի յ հեշտությունը ստուգել:

Շնորհիվ այն հանգամանքի, վեր ԿՅՄ ուղարկությունը այդ ժամանակ ուղղված էր կոնկրետ յնդիկներին կատարման վրա և հեռացված էր անպատշաճ դիտարկումներից, վերոնք իր ժամանակում կային, Կոմյերիտովությունը հաջողվեց հասնել միջանի կարևոր հաջողությունների, վերոնց չպետք է վերադառնալու յն յեռմարկել: Ինչ հաջողություններ են դրանք: Յեռ կթվեմ. յերիտասարդության մի շարք գործադուլներին ղլխավորելը, մորիլիդացիան՝ Կարմիր բանակի համար, պրոֆմիտությունները մարդիկ ուղարկելը, բանվորական յերիտասարդության կոնֆերենցիաներ անցկացնելը, նոր բլիզներ ստեղծելը և բանվորական ակտիվ պատրաստելը:

Կոմյերիտովության կազմակերպչական դրությունը կարելիք ունի յախնալու: Մի շարք յտոյր կազմակերպություններ ղտնվում են անբավարար վիճակում: Դա բացատրվում է այն հետևանքներով, վերոնք տեղի յեն ունեցել լիբերալական և կիսատրոցկիտական դժի կիրառմամբ Կոմյերիտովության մեջ, յնչպես և այն հանգամանքով, վեր այդ կազմակերպությունների մեջ տեղի յեն ունեցել ճեղքվածքներ:

Մենք Կոմյերիտովության մեջ ունենք կադրերի պակաս: Բանվորական կադրերը շատ թույլ են առաջանում: Մի շարք պատճառներով բանվորական կադրերի առաջադան յերկյուղ կա: Ըստ եյուլիան մենք ունենք յնտելիդենտական կադրերի մի մասի ընդդիմությունը՝ ղինական Կոմյերիտովության մեջ բանվորներին ղեկավար պոստերի առաջ քաշելու առթիվ: Բանվորների ղեկավար պաշտոնների առաջադան գործում մենք պետք է փշրենք ստուգելը: Յեռ այդ ուղղությունը արդեն կատարված են վերոք քայլեր ղեպի առաջ: Բայց դա ղեռ բավական չէ: Այդ հարցը

հանդիսանում է հիմնական խնդիրները մեկը :

Հիմնական նախադրյալը և հիմնական խնդիրը մտապես ժամանակակից համար, դա, իհարկե, պայքարն է : յերկու ձևակառուում : Մենք բանաձևում նշել ենք, թե ինչումն է բառահայտվում և աջ և «ձախ» վտանգները կոմյերիտմիության մեջ :

Յես կանգ կառնեմ մեր բանաձևի մի քանի տեղերի վրա : Ինչ վերաբերում է աջ, գլխավոր վտանգին կոմյերիտմիության մեջ, յես արդեն խոսել եմ լիկվիդատորական տենդենցներին վերաբերյալ :

Սկսեմ հետև. աջ վտանգի արտահայտություններին մեկն և կարմիր բանակի շարքերում, ֆրոնտում աշխատելուց հրաժարվելու ձգտումը. միլիտարիստական զորքերում աշխատելուց հրաժարվելու ձգտումը, բանվորական յերիտասարդության տնտեսական և քաղաքական պայքարին գլխավորումից հրաժարվելը և այլն : Սակայն, այդ աջ թեքումը, ներկայիս գլխավոր վտանգը, սերտ կերպով հյուսվում է «ձախ» թեքման հետ, վորի գլխավոր արտահայտությունը կոմյերիտմիության մեջ հանդիսանում են՝ ավանդարդական ձգտումները, ձգտում կուսակցությունից անկախ կադմակերպություն դառնալու, պուչերի փորձը, ձեռնարկներում ամենորյա մասսայական աշխատանք տանելուց հրաժարվելը, ձգտում ԿՅՄ դարձնել նեղ ու մեկուսացած կադմակերպություն, վորը մատչելի յե միայն ընտրյալներին ու լավ տարրերին և այլն :

Պայքարն այդ թեքումների դեմ չպետք է սահմանափակվի յերկու ձևակառուում պայքար մղելու առթիվ արատրակտ կերպով մեխանիկորեն ֆրոնտներ կրկնելու մեջ : Կոմյերիտմիության, և յուրաքանչյուր մի բջջի, ամբողջ գործունեյությունը պետք է թափանցվի այդ պայքարով :

ԿՅՄ հետևյալ գլխավոր խնդիրը, վորը պետք է նրա ուշադրության կենտրոնում դրվի, դա կոմյերիտմիության պրոլետարականացումն է : Բանվորական յերիտասարդության զբաղումը ԿՅՄ շարքերը, ինչպես և հիմնական, վճռական ձեռնարկներին նվաճումը պետք

և հանդիսանա կոմյերիտմիության մարտական խընդիրը :

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Մի քանի խոսք Ձինաստանի գյուղացիական յերիտասարդության մասին : Ահա քաղվածք մի հաշվետվությունից .

«Վայրագ թաղանք գյուղացիական պարտիտների կողմից, անվերջ միլիտարիստական պատերազմը, ռոնտրափումները, ծանր հարկային բեռը, այդ բոլոր ոչառառ հանդիսացան Ձինաստանի ծանր աղբաբային ճգնաժամին և համատարած բաղկին : Մի շարք չրջաններում գյուղացիները քաղցից մահանում են միլիոններով : Սովայ չրջաններում ծնողներն իրենց դավակներին վաճառում է 5—6 դոլլարով, վորպեսզի կարողանան քաղցից փրկվել : Գյուղացիական յերիտասարդությունը, վորպեսզի քաղցից չմահանա, միայն սնունդի համար, իսկ ամենալավ դեպքում՝ որական 5—10 կոպեկով, բատրակ է վարձվում, աշխատելով լուսաբացի յուսաբաց : Բատրակներն ընդհանրապես, իրավարանորեն, գյուղում թե քաղաքում ոգտվում են անձնական աղատությամբ, սակայն ըստ եյության նրանք հանդիսանում են ճորտեր : Իսկ ինչ վերաբերում է այն յերիտասարդությանը, վորը վորպես վարձու գինվոր ընկել է միլիտարիստական բանակը, նա մի բաժակ հոտած բրնձի համար ստիպված է դռնի իր կյանքը, և զրբանոցներում տանել անասնական վերաբերմունք» :

Յեթե սրա հետ համեմատելու լինենք գյուղացիական յերիտասարդության դրությունը խորհրդային չրջաններում, վորտեղ այդ յերիտասարդությունն ոգտվում է ընտրական իրավունքներով 16 տարեկան հասակից, վորտեղ նրա ուսման համար դպրոցներ են կադմակերպվում, վորտեղ նա լծվում է խորհրդային ու տնտեսական չինարարության ամբողջ սխաեմին և

վորտեղ նա իր յեղբայրների ու ծնողների հետ հող և ստացել, այդ դեպքում շատ սուր կերպով աչքի յն ընկնում տարբերութիւնը:

Խորհրդային իշխանութիւնը Ձինաստանում բռնազրաւում է կալվածատերերի հողերը և այդ հողերը բաժանում է գյուղացիական հիմնական մասսաներին. նա վերացնում է բոլոր հարկերը և նրանց փոխարեն մտցնում է սյուրբեսիվ-յեկամտային հարկ. նա բանավորներին համար մտցնում է Ց-ժամյա բանվորական որ, բացում է դպրոցներ և այլն: Այդ պատճառով է, վոր խորհուրդներն ոգտւում են լայն գյուղացիական մասսաների կողմից այնպիսի հեղինակութամբ և աջակցութիւնով:

Թիւում է, թե կոմյերիտմիութիւնը խորհրդային շրջաններում, նման պայմաններում, պետք է դառնար ամենալայն ու մասսայական կազմակերպութիւնը: Ահա թե ինչպե՞ս է ԿՅՄ Կենտկոմի բյուրոն բնութագրում իր բանաձևում խորհրդային շրջանների կոմյերիտմիութիւնի գրութիւնն այս տարվա սկզբից:

Խորհրդային իշխանութիւն թե՛ աջ ուսորտունիւտական սխալները (այսպէս կոչվող «բարի» կալվածատերերին հող հատկացնելը, մի քանի տեղերում կալվածատերերի հողերը չբռնագրավելը և հողաբաժանութիւնից կտրականապէս հրաժարվելը, կուլտուրների մուտքը՝ խորհուրդների ու այլ հեղափոխական կազմակերպութիւնների մեջ և նույնիսկ դեկամար պոստեր գրավելու հնարավորութիւնը, խորհրդային շրջաններում հակահեղափոխական կազմակերպութիւնների վոչ-բավարար վոչնչացումը, դասակարգային հաբկային քաղաքականութիւն չկիրառելը և այլն) և թե՛ նրանց «ձախ» սխալները, լիխսյանակսի գծի կիրառումը (հողի ճիշտ չբաժանելը, վորի հետեւանքով խախտվում է կապը միջակի հետ, ժամանակից շուտ միջոցառումների կիրառումը, ինչպէս կախկտիւտիւտումը, ամեն տեղ խորհրդային տնտեսութիւններ ստեղծելու ձգտումը, ամուր խորհրդային բազա և կարգապահ Կարմիր բանակ ստեղծելու խնդիրների

թերացումը և այլն) իրենց արտահայտութիւնը գտած խորհրդային շրջանների կոմյերիտմիութիւն ներկա դրութիւն և աշխատանքների մեջ:

ԿՅՄ մեջ կուլակների ընդունելութիւնը, միութիւն որդանների և «Յերիտասարդ դավադիայի» դեկավար կազմում կուլակների առկայութիւնը, կոմյերիտմիութիւնը զուտ կուլտուրական կազմակերպութիւն դարձնելու տենդենցը, վոր նա պետք է զբաղվի այսպէս կոչվող «գաստիարակչական» աշխատանքով, հրաժարվելով՝ ռազմաճակատում և Կարմիր բանակի շարքերում կռիւտը, խորհրդային իշխանութիւն աշխատանքներին մասնակցելուց, ձգտելով կոմյերիտմիութիւնը՝ իր կողմից ընդգրկված անդամների հասակի ցենզն իջեցնելու ճանապարհով դարձնել յերկրորդական, ապուլիտիկ պատանկական կազմակերպութիւն, ձգտում հետաձգելու խորհրդային այն որդներին կյանքում կիրառելը, վորոնք վերաբերում են յերիտասարդութիւնը, կոմյերիտմիութիւն կազմակերպչական ինքնուրույնութիւնը վոչնչացնելու տենդենցը և այլն, — այդ բոլորը հանդիսանում են կոմյերիտմիութիւն ներսում յեղած աջ ուսորտունիւտական գծի ու դործի արտահայտութիւն: Աջ թեքումը հանդիսանում է գլխավոր վտանգը, վորը վերջին հաշվով թուլացնում է կոմյերիտմիութիւն աղգեցութիւնն աշխատավորական յերիտասարդութիւն լայն մասսաների վրա, ԿՅՄ տանում է դեպի լիկվիդացիա և ողնում է դասակարգային թշնամուն:

Այդ թեքումը սերտորեն հյուսվում է «ձախ» մանրրութեական թեքման, լիխսյանիդի հետ, վորն իր մեջ է ընդգրկում տրոցկիզմն՝ աջ թեքման մարուր տարրերի հետ միասին: Կոմյերիտմիութիւն մեջ այդ թեքումն արտահայտվում է հետեյալում. ալանդարդիդ, վորը նշանակում է ձգտել դառնալու կուսակցութիւնից անկախ քաղաքական կազմակերպութիւն, չենթարկվել նրան և փոխարինել նրան. պուտչիզմ, ձգտում կոմյերիտմիութիւնը դարձնելու նեղ կազմակերպութիւն, սեկտա, վորն ընդգրկելու յ միայն

ընտրյալ, ամենայնով, «անկախ» հեղափոխականներին, վորոնք կտրված են լայն մասսաներից. «Յերիտասարդ գվարդիայի» միջանի ջոկատների անարխիստական դործողությունները, վորոնք կրոնի դեմ պայքարը մղում եյին՝ քանդելով վանքերը, նախնիքների գերեզմանները, բուդդաները, հաշվի չառնելով գյուղացիության կրոնական նախապաշարումները, լողունը՝ «Հողը—յերիտասարդությանը» և այլն:

Թե այս և թե մյուս սխալների հետևանքով խորհրդային շրջանների կոմյերիտմիությունը մինչև հիմա չի ընդգրկել իր շարքերը յերիտասարդության չքավոր և բատրակ վճռական խավերին, հետ և մնացել աշխատավոր յերիտասարդության մասսաների հեղափոխական դարդացումից, իր հնարավորություններին համապատասխան լայն մասսայական կազմակերպություն չի հանդիսացել և իր շարքերի ու ղեկավար կադրերի անբաժար կազմ ունի:

Խորհրդային շրջանների կոմյերիտմիությունը կարող ե իր խնդիրները հաջողությամբ կատարել միայն յերկու ճակատում անհաշտ պայքար մղելու պայմանով՝ թե աջ և թե «ձախ» թեքումների դեմ (կենտկոմի բյուրոյի բանաձևը):

Պարզ ե, վոր դրան դուգահեռ խորհրդային շրջանների կոմյերիտմիությունն ունի խոշոր հաջողություններ: Նա կարմիր բանակի հետ միասին հերոսական աշխատանք ե տանում, ազդարարյին հեղափոխության դործում ողնում և խորհրդային իշխանությանը և այլն: Բայց և այնպես այն բոլոր սխալները, վորոնք ցույց են տրված կենտկոմի բյուրոյի բանաձևում, տեղի ունեն, և մենք պետք ե այդ մասնանշանք: Անհրաժեշտ ե վճռել խորհրդային շրջանների կոմյերիտմիության աճման հարցը:

Ինձ թվում ե, վոր միանոտմայն սխալ և այն ընկերների դրույթը, վորոնք ԿՅՄ աճման խնդրում, րինակ, առաջարկում են թույլ չտալ այստեղ վո՛չ մի սահմանափակում վո՛չ պրոլետարական տարրերի և վո՛չ ել միջակ յերիտասարդության նկատմամբ:

Ինչ վերաբերում ե կուլակին, պետք ե պարզ հայտարարել, վոր կուլակը մուտք չպետք ե դործել ԿՅՄ-ի մեջ: Այդ ուղղությամբ Զինատանի խորհրդային շրջանների ԿՅՄ միջանի ընկերներ գտնում եյին, վոր խորհրդային շրջանների ԿՅՄ-ի մեջ կուլակներ ընդունելը համարվում ե լնքնին հասկանալի մի բան, քանի վոր հեղափոխությունն իբր թե անցնում ե բուրժուական-դեմոկրատական ետապը: Այդ ընկերները շատ հաճախ բոլորովին մոռանում են, վոր կոմյերիտմիությունը պետք ե հենվի՝ չքավորների, բատրակների և կուլիների վրա:

Սխալ կլինի առաջարկել բոլոր միջակ յերիտասարդության ընդունել կոմյերիտմիության շարքերը, հավասարեցնելով նրան ներկա ղեկավար չքավոր և բատրակ յերիտասարդության հետ: Այդ ուղղությամբ միակ ճիշտ դրույթը կարող ե լինել՝ չքավորները, բատրակները և կուլիները հանդիսանում են մեր հենարանը, անհրաժեշտ ե կոմյերիտմիության շարքերը դրավել միջակ յերիտասարդության լավագույն մասին:

Խորհրդային շրջանների կոմյերիտմիության գըլխավոր խնդիրները ներկայումս հետևյալներն են՝ կարմիր բանակի ամրացումը, «Յերիտասարդ գվարդիայի» շարքերից կարմիր բանակի համար գնդեր կազմելը, կոմյերիտականների մոբիլիզացիան կարմիր բանակի շարքերը, խորհրդային իշխանության շինարարայրյունը և ազդարարյին հեղափոխության կիրառմանը մասնակցելը:

ԿՅՄ նախաձեռնողը պետք ե հանդիսանա հողի այնպիսի բաժանման, վորը կապահովի գյուղացիության հիմնական մասսային: ԿՅՄ խնդիրները պետք ե հետևյալը լինեն. խորհրդային պրոդրեսիվ-յեկամտահարկի կիրառմանը մասնակցելը: կոմյերիտականներից հարվածային բրիգադներ ստեղծելն այս խնդիրների իրականացման համար, մեր ներկայացուցիչների առաքումը բոլոր խորհրդային որդանները, մասնակցություն աշխատանքի որդաններում, ժողովրդական

լուսավորութեան որդաններում. ԿՅՄ առաջին հերթին պետք է դուրս դա այնպիսի յերևույթների դեմ, ինչպես, որինակ, Սուս-Յաթ—Սենի յերեք սկզբունքներին դասավանդումը դպրոցներում, նա պետք է դուրս դա դպրոցներից հեռացնել տալու ռեակցիոն ուսուցչու-թյանը և նախաձեռնողը հանդիսանա բյուրոկրատիզմի դեմ պայքար մղելուն:

Մենք պետք է աշխատենք խորհրդային շրջանները բոլոր ձևերով և կերպերով արտոյալով կերպացնելու մանկական աշխատանքը, պետք է աշխատենք փաստու-րեն վերացնելու մանկական աշխատանքը տնայնա-գործական և արհեստավորական ձևերով: Ինչ վերաբերում է գյուղատնտեսութեանը, հասկանալի չէ, վոր այդ աստիճանում մանկական աշխատանքի իրադ-րութեան անհնարին է: Այդ առթիվ կոմյերիտմիութե-թյունը պետք է պայքարի հետզհետե: Կոմյերիտմիութե-թյան կարևոր հարցերից մեկը խորհրդային շրջաններ-ում հանդիսանում է կոմյերիտմիութեան մեջ պրոլե-տարական ղեկավարութեան ինդիվիդ, բանվորական կադրերին՝ բատրակներին և չքավորներին ղեկավար աշխատանքի առաջ քաշելու հարցը:

«ՅԵՐԻՏԱՍԱՐԳ ԴՎԱՐԴԻԱՅԻ» ՄԱՍԻՆ

Այժմ «Յերիտասարգ դվարդիայի» խնդրի մասին: Դուք գիտեք, վոր «Յերիտասարգ դվարդիայում» ներ-կայումս կա մոտավորապես 300 հազար մարդ: Ահա մի քաղվածք «Յերիտասարգ դվարդիայի» մասին տըր-ված հաղորդագրութեանից. ««Յերիտասարգ դվար-դիան» (կիսադինվորական մի կադմակերպութիւն) հանդիսանում է Կարմիր բանակի ողջականը և ակտիվ կերպով կռիւմ է խորհրդային իշխանութեան համար, Որինակ, Յիյանսիում «Յերիտասարգ դվարդիան» ունի 100 հազար անգամ, գոյութիւն ունի դիւստր շտաբ՝ յերեք հոգուց բաղկացած՝ բոլորն էլ կոմյերիտական-ներ: Տեղերում գոյութիւն ունեն ջոկատներ՝ 20-ական և ավել հոգուց բաղկացած: «Յերիտասարգ դվար-

դիան» պայքարում է կուլակների և ռեակցիոներների դեմ: Մայիսին բրինձի կրկիս էր: Կուլակները բրինձը թաղցրել էին: Նա դուրս եր բերում բրինձը թաղցր-ված տեղից և բռնագրավում եր: «Յերիտասարգ դ-վարդիան» ղեկավարի արեց խորհրդային տերրիտորիա-յի վրայով անցնող մի սպիտակ դամարտակ: «Յերի-տասարգ դվարդիան» կատարում է հետախուզութիւն, պայքարում է կալվածատերերի և «Ա.Բ.» նման տիպի հակահեղափոխական կադմակերպութիւնների դեմ: Ռադմանակատներում «Յերիտասարգ դվարդիան» ող-նում է Կարմիր բանակին: «Յերիտասարգ դվարդիայի» մեծամասնութիւնը գյուղացիներ են»:

Ահա և մի նամակ խորհրդային շրջանի՝ Յիյանսիի հարաւ-արեւմտյան պրավինցիայի «Յերիտասարգ դվարդիայի» մի անդամից.

««Յերիտասարգ դվարդիան» ունի 100 հազար ան-գամ հարաւ-արեւմտյան Յիյանսիի դանադան շրջաննե-րում: Նրանք բոլորն էլ չքավորների, միջակների և բատրակների վարդիներն են կամ յեղբայրներ: Նրանք առաջ յենթակա էին կալվածատերերի, տուխտոների և ջենտրիներին ամեն տեսակի կեղեքումներին, իսկ ներկայումս ազատ են: «Յերիտասարգ դվարդիան» հանդիսանում է գյուղացիների ինքնապաշտպանու-թեան ղեկավար կադմակերպութիւնը: Նրանք շատ քաջ են ու վճռական և վորպես կամավորներ մասնակցում են զինված պայքարին: Նրանց զենքը գլխավորապես բաղկացած է նիզակներից: Նրանք մշտապես ողնում են Կարմիր բանակին, վորպես պարտիզաններ, աշխա-տում են, վորպես պահակներ, բանտարկում են՝ հո-ղատներին, տուխտոներին և ջենտրիներին: Մեկ անգամ անցյալ տարի հոլիւս ամսում, հարաւ-արեւ-մտյան Յիյանսիի Շինկու շրջանի մի գյուղում, հո-ղատներին զինված ուժերը դուրս յեկան «ճնշելու» կոմունիստներին: «Յերիտասարգ դվարդիան» 20-ից քիչ ավել մարդկանցով, լսելով այդ մասին, անմիջա-պես նրանց հետ կռիւմ բռնվեց: Զինված լինելով նի-

1) Ա.Բ.— հակաբայքիկներէ միութիւն:

դաշինքում, նա ազդարանակութեան կողմից ստանում եր
լայն աջակցութիւն: Ի վերջո նրանք գլխովին ջարդե-
ցին այդ բանդային և խլեցին 20-ից ավել հրացան:
Դրանից հետո հողատերերն սկսեցին ավելի վախենալ
«Յերիտասարդ գլխաւորի»։ Միաժամանակ «Յերի-
տասարդ գլխաւորի» շարքերը մտան մեծ թվով չքա-
վոր յերիտասարդներ, վորի հետեանքով նա սկսեց ա-
րագ կերպով զարդանալ: «Յերիտասարդ գլխաւորի»
բոլոր անդամները հաճուքով են ապրում զինվորա-
կանի պես և կարգապահութեան մեծ ուշադրութիւն են
դարձնում: Նրանց կազմակերպութիւնը և ուսուցումը
նույնն է, ինչ-վոր Կարմիր բանակին: Նրանց գլխավոր
նպատակն է՝ խորհրդային իշխանութեան պաշտպա-
նութիւնը և ռեակցիոներների բանտարկութիւնը:
Նրանք իրենց համարում են ապագա կարմիր-բանակա-
յիններ և «Յերիտասարդ գլխաւորի» մեջ մի առ ժա-
մանակ մնալուց հետո մտնում են Կարմիր բանակ:
Նրանք հարգում և սիրում են Կարմիր բանակը: Արեւ
մայր մանկուց հետո նրանք դաշտ են դուրս գալիս
և հրավիրում են Կարմիր բանակի հրամանատարնե-
րին սովորեցնելու իրենց ռազմական գործը: Նրանցից
միջանիստ հաճախ հարցնում են հրամանատարներին,
թե արդյոք նրանք արդեն պատրաստ են Կարմիր բա-
նակ մտնելու: Յերը նրանց հայտնում են, վոր նրանք
կարող են Կարմիր բանակ մտնել, նրանք շատ դուռ են
մնում: Յեթն նրանց ասում են, վոր հարկավոր է
մարդկել, նրանք ավելի մեծ պատրաստակամութեամբ
են սովորում և պատրաստվում Կարմիր բանակ մտնե-
լու:

Անցյալ տարվա ողոստոս և սեպտեմբեր ամիսնե-
րին, յեր Կարմիր բանակը միջանի հարձակումներ
գործեց Կլան քաղաքի վրա, «Յերիտասարդ գլխա-
ւորի» շատ անդամներ ցանկացան կամավորներ դառ-
նալ: Կովում նրանք մեծ քաջութիւն են ցուցաբերում,
յերդում են «Ինտերնացիոնալ» և «Յերիտասարդ
գլխաւորի», ուրախ են և լավ տրամադրված:

Սակայն «Յերիտասարդ գլխաւորի» կատարում է

մի շարք սխալներ: Սրանց են վերաբերում՝ Կարմիր
բանակի հետ ունեցած կոնֆլիկտները, իրենց ջոկատ-
ներով Կարմիր բանակին փոխարինելու տենդենցը և
աջ սխալները՝ կուլակների ընդունելութիւնը «Յերի-
տասարդ գլխաւորի», ղեկավար պոստերում կուլակա-
յին և կալվածատիրական տարրերին նշանակելը.
«ձախ» սխալները, ինչպես՝ կրոնի դեմ մղվող պայքա-
րի սխալ մեթոդները, ազդարանակութեան կրոնական
նախապաշարումներն անտեսելը և այլն: Դրա մասին
գուր գիտեք: Մենք այստեղ պարտավոր ենք արտա-
հայտել այն դրույթի մասին, վորն ունի կոմյերիտ-
միութեան Կենտկոմի բոլորն «Յերիտասարդ գլխա-
ւորի» բնույթի և խնդիրների վերաբերյալ:

Կենտկոմի բոլորն այդ խնդրի առթիւ ունի հե-
տևյալ դրույթը.

«Յերիտասարդ գլխաւորի» հանդիսանում է բան-
վարադրույողակն յերիտասարդութեան կիսազին-
վորական մի կազմակերպութիւն, նա հանդիսանում է
կոմյերիտմիութեանն ուսնդակող մի կազմակերպու-
թիւն: «Յերիտասարդ գլխաւորի» խնդիրներն են՝
մասնակցել աղբարային և հակաիմպերիալիստական
հեղափոխութեանը, պայքարել միլիտարիստների,
կալվածատերերի և կուլակների դեմ: Կոմյերիտմիութե-
ան Կենտկոմի բոլորն միանգամայն ճիշտ է արտա-
հայտել այդ առթիւ, վոր «Յերիտասարդ գլխաւորի»
ներսում անհրաժեշտ է պայքարել յերկու տեն-
դենցի դեմ. նախ՝ «Յերիտասարդ գլխաւորի» յերկրորդ
Կարմիր բանակ վերածելու և կոմյերիտմիութեանը
հակադրելու տենդենցի դեմ և յերկրորդ՝ նրան ան-
դասակարգ, կուլակ և կալվածատեր տարրերով ազ-
րույթած կազմակերպութիւն դարձնելու տենդենցի
դեմ: Կոմյերիտմիութեանն անհրաժեշտ կանգնած խնդիրը
կայանում է նրանում, վորպեսզի կազմակերպվի պրո-
լետարական ղեկավարութիւն այդ կազմակերպու-
թեան նկատմամբ: Այդպիսի պրոլետարական ղեկավա-
րութիւն ինչպե՞ս կարող է կազմակերպվել: «Յերի-
տասարդ գլխաւորի» կոմյերիտական ֆրակցիաների,

«Յերիտասարդ գվարդիայի» ջոկատները կոմյերիտու-
կանների հրամանատարութեան տակ դնելու և վերջու-
պես «Յերիտասարդ գվարդիայի» ջոկատների կենտրո-
նացման միջոցով: Քարտուղարութեան հանձնարարու-
թեամբ յետ արդ հարցը դիսկուսիայի յետ դնում, վորչափ
վոր կասկածներ կան այդ առթիւ: Յետ կարծում եմ,
վոր մենք պետք է ընդունենք ԿՅՄ Կենտկոմի բոլորոյի
և ԿՅՄ Կենտկոմի IV պլենումի վորոշումները՝ «Յերի-
տասարդ գվարդիայի» կենտրոնացման մասին: Կեն-
տրոնացումը հանդիսանում է «Յերիտասարդ գվար-
դիայի» պրոլետարական ղեկավարութեան գործի նա-
խադրյալներից մեկը, ինչպես և «Յերիտասարդ գվար-
դիայի» ջոկատներում հաճախ տեղի ունեցող անար-
խիտական տենդենցների լիկվիդացիայի նախադրյալ-
ներից մեկը: «Յերիտասարդ գվարդիան» արդեն հա-
սունացել է այդ խնդրի իրականացման համար: Մենք
ձգյալների շրջանում, վորտեղ գտնվում են Մառ Դպի-
ղունի և Չու-Պիլի զորքերը, արդեն ունենք «Յերի-
տասարդ գվարդիայի» կենտրոնացված շտաբ, ունենք
նմանապես «Յերիտասարդ գվարդիայի» կենտրոնաց-
ված շտաբ Խոլունի շրջանի բանակում: Միքանի բն-
կերներ «Յերիտասարդ գվարդիայի» կենտրոնացմանը
հակառակ են դուրս գալիս: Սակայն այն բնկերները,
վորոնք դուրս են գալիս հակառակ «Յերիտասարդ
գվարդիայի» կենտրոնացման, բոլորովին չեն խոսում
այն մասին, թե ի՞նչ անել ձեռք բերված հաջողու-
թյունների հետ, պե՞տք է մենք լիկվիդացիայի յեն-
թարկենք «Յերիտասարդ գվարդիայի» այդ շտաբները,
թե պետք է շարունակենք կենտրոնացման խնդրի ի-
րականացումը: Յետ գտնում եմ, վոր այդ խնդիրը
պետք է իկատար ածել: Հասկանալի չէ, վոր այստեղ
կան մի շարք մտանդներ: Բայց հարկ չկա ինչ-վոր
գոյություն չունեցող մտանդներ հորինել: Հասկանալի
չէ, վոր վտանդ կա, թե «Յերիտասարդ գվարդիան»
կարող է իրեն հակադրել կոմյերիտմիութեանը: Նրա
նկատմամբ ճիշտ քաղաքականութիւն չկիրառելու հե-
տեւանքով նա կարող է իրեն հակադրել կոմյերիտմի-

տութեանը: Նույնիսկ ամէլին: «Յերիտասարդ գվար-
դիայի» առանձին ջոկատները, հանդիսանալով կուլա-
կային ելեմենտների խմբավորումներ կարող են դասա-
կարգային թշնամու ձեռքում ուղղակի զենք հանդի-
սանալ՝ խորհրդային իշխանութեան դեմ մղվող պայ-
քարի գործում: «Յերիտասարդ գվարդիայի» մեջ տեն-
դենց կա հակադրելու իրեն Կարմիր բանակին: Յեւ
հենց հատկապես դրա համար, վորպեսզի հաղթահարել
«Յերիտասարդ գվարդիայի» շարքերում յեղած այդ
տենդենցները, վորպեսզի «Յերիտասարդ գվարդիայի»
ներսում իրականացնել ճիշտ քաղաքականութիւնը,
մենք պարտավոր ենք ստեղծել «Յերիտասարդ գվար-
դիայի» համար ամուր սրգաններ, վորոնք կապահովեն
նրա պրոլետարական ղեկավարութիւնը:

ՅԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Վերջում անհրաժեշտ է մեկ անգամ ևս ընդգծել
այն հանգամանքը, վոր ԿԻՄ-ի սեկցիաները չեն կա-
տարել իրենց ինտերնացիոնալ պարտականութիւնները
չինական կոմյերիտմիութեան հանդեպ: Այդ ժամանա-
կաշրջանում Զինատանում խոշոր դեպքեր տեղի ունե-
ցան, սակայն վո՛չ դերմանական, վո՛չ ամերիկական,
վո՛չ անգլիական և վո՛չ էլ Ֆրանսիական ԿՅՄ և վո՛չ մի
կոնկրետ քայլ չարին չինական կոմյերիտմիութեանն
օգնելու գործում:

Այդ պատճառով վերահիշյալ կոմյերիտմիութիւն-
ների Կենտկոմներին առաջ պետք է մի շարք կոնկրետ
անելիքներ դնել ու հսկել նրանց կատարմանը:

ԸՆԿ. ԲԵՍՊԱՆՈՎԻ ՅԵԶՐԱԳԱԿՄԱՆ ԽՈՍՔԸ

Առաջին հարցը, վորը յելույթներում շոշափվեց,
դա կոմյերիտմիութեան ներկա դրութեան գնահատա-
կանի խնդիրն է, յետ մնալու և դրա կապակցութեամբ՝
ԿՅՄ կադակերայւորեն ամրացնելու կարևորագույն
խնդիրը: Ընկերներ, միանգամայն ճիշտ է, ինչպէս

այդ հիշված ե բանաձևում, և վորի չորջն այստեղ խոսվեց, վոր հիմք չէր խոսելու չինական կոմյերիտ-միութեան ճշնամամի մասին: Յեւ վորոք, յեթե համեմատենք կոմյերիտմիութեան յոթ ամիս սրանից առաջ դրութիւնը, յերբ կոմյերիտմիութեան վիեննաիւսովը լուսն էր կիսատրոցկիստական գլծ, յերբ տեղի ունէր մասսայական կադակերսութիւնների քայքայում և այլն, նրա ներկա դրութեան հետ, յերբ ԿՅՄ Կենտկոմ-մը տանում է քաղաքական ճիշտ գլծ, յերբ կոմյերիտ-միութեանը մի շարք հաջողութիւններ է ձեռք բերել, պիտի տեսնել, վոր ամենագլծվարը հետևումն է մնացել: Մենք վոչ մի հիմք չունենք չափադանց հոռետեսու-թյամբ գնահատելու կոմյերիտմիութեան դրութիւնը: Ընկերները միանգամայն ճիշտ են նկատում, վոր վրձ-ռական խնդիրներից մեկն է հանդիսանում արդյունա-բերութեան վճռական ճյուղերի նվաճումը, խոշոր ձեռ-նարկներում բջիջներ առեղծելը և այլն:

Հասկանալի չէ, վոր այն բոլոր խնդիրները, վո-րոնց մասին խոսվեց զիսկուսիայի ժամանակ և վո-րոնք հիշված են բանաձևում, կյանքում չեն կարող կիրառվել, յեթե մենք ցածից մինչև վեր չծափալենք ինքնաքննադատութիւն և չընդունենք աշխատանքի այնպիսի մեթոդներ, ինչպես սոցմբցումն ու հարվա-ծայնութիւնը:

Գործադրելութեան մասին: Ընկերներն այստեղ միանգամայն ճիշտ եյին խոսում, վոր այդ հարցն ունի կարեւոր նշանակութիւն: Յես վոչինչ չունեմ այդ յե-լույթներին նոր բան ավելացնելու: Միանգամայն պարզ է, վոր այդ խնդիրը չափադանց կարեւոր է: Յես համաձայն չեմ այս խնդրի առթիւ ընկ. Ժդանովի պնդումների հետ: Ընկ. Ժդանովը գտնում է, վոր ներ-կայումս չինական արդյունաբերութեան մեջ կատար-վում է յերիտասարդութեան աշխատանքի կրճատում: Դա կարեւոր հարց է և մենք այստեղ պետք է վորոշ տհասակետ սահմանենք: Այն փաստերը, վոր թվից ընկ. Ժդանովը, կարող են տեղի ունենալ: Շատ հաճախ պատահում է, վոր այս կամ այն գործարանում կա-

տարվում է բանվորական ուժի կրճատում: Սակայն բոլորի կրճատումը, թե հասակավոր բանվորների և թե բանվորական յերիտասարդութեան, տեղի չէ ունե-նում ձեռնարկութեան փակման, ռացիոնալիզացիայի հետեւնքով և բացի դրանից բանվորական ուժի միա-վորին ընկնող արտադրանքի բարձրացման հետեւան-վորին ընկնող արտադրանքի բարձրացման հետեւան-վորին: Դա վերաբերում է և հասակավոր բանվորներին և բանվորական յերիտասարդութեանը և թե մանկական ու կանանց աշխատանքին: Բայց մեզ կարեւոր է սահ-մանել այն հիմնական տեղեկանքները, վորոնք ներկա-յումս դոյութիւն ունեն չինական արդյունաբերութեան մեջ:

Յեթե մենք խոսելու լինենք հիմնական տեղեկնքի մասին, այդ դեպքում սխալ կլինի պնդել, թե կա-տարվում է յերիտասարդութեան աշխատանքի հարա-բերական կրճատում: Ընդհակառակը, հիմնական տեղ-դեկնքը հանգիստնում է՝ կանանց ու մանկական աշխա-տանքի հարաբերական աճում և յերիտասարդութեան աշխատանքի աճում: Այդ տեղեկնքը, վորը վաղուց է սկսվել, շարունակվում է և հիմա: Յեւ միանգամայն հասկանալի չէ, թե ինչու չէ դա այդպես կատարվում: Դա կատարվում է այն պատճառով, վոր կանանց, մա-նուկների և բանվորական յերիտասարդութեան աշխա-տանքը հանդիսանում է ամենաթանկ, չահադորժման ալելի յենթարկվող և ալելի անկադմակերպ:

«Յերիտասարդ գվարդիայի» մասին: Այն փաստաբ-կումները, վորոնք բերվեցին այստեղ «Յերիտասարդ գվարդիայի» վերաբերյալ մեր կողմից առաջադրված դրույթի նկատմամբ, չափադանց անհամոզեցուցիչ են: Ընկ. Ժդանովն այստեղ միջանի բաների մասին հայ-տարարութիւն արեց: Նախ և առաջ նա ասում էր. «Կոմյերիտմիութեան Կենտկոմն այս հարցում սխալ է կատարում՝ ձեռնարկելով «Յերիտասարդ գվար-դիան»: Լավ: Յերբ կոմյերիտմիութեան Կենտկոմը կատարում է խոշոր քաղաքական սխալ, ինչպես նա այստեղ արտահայտվեց, ձեռնարկելով «Յերիտասարդ գվարդիան», և կնշանակի ճիշտ գլծ կլիներ, յեթե

«Յերիտասարդ գվարդիան» չձևակերպվեր: Քննենք այդ խնդիրը: Ճիշտ կլինի արդյո՞ք, յեթե «Յերիտասարդ գվարդիան» չձևակերպվի: Հիշեցե՛ք, թե ի՞նչ եր դուռնից, մինչ Կարմիր բանակի ղեկավարներ ընկ. ընկ. Մառյի, Սո-Լուսի և մյուսների կողմից «Յերիտասարդ գվարդիայի» ջոկատների կենտրոնացումը: Ինչպե՞ս եր այն ժամանակ դուռնից: Տարերային կերպով ստեղծվում էին «Յերիտասարդ գվարդիայի» ջոկատները, բաղկացած լինելով գյուղացիական յերիտասարդութունից, շատ հաճախ հավաքված առանց դասավարդային սկզբունքի և յենթակա անարխիստական հոսանքների: Սկսած այն ժամանակից, յերբ կոմյերիտմիութենը «Յերիտասարդ գվարդիայի» ղեկավարութունն իր ձեռքը վերցրեց, «Յերիտասարդ գվարդիայի» ջոկատներն սկսեցին խաղալ այն խոշոր զերն ագրարային հեղափոխության մեջ, Կարմիր բանակի մեջ, վորպիսին նրանք խաղում են ներկայումս: «Յերիտասարդ գվարդիայի» ջոկատները դարձան Կարմիր բանակի առաջին ողնակները: Յեւ պատահական չէին այնպիսի փաստերը, յերբ «Յերիտասարդ գվարդիայի» ջոկատները ջարդում էին թշնամու աճրոջ գումարտակներ: Ընդունակ կլինե՞ին արդյո՞ք, նույն բանին «Յերիտասարդ գվարդիայի» ջոկատները առանց ընհդանուր գծի, առանց ընդհանուր ու միասնական ղեկավարության: Իհարկե, վոչ:

Յերբ ընկերներն ասում են, թե վտանդ կա, վոր «Յերիտասարդ գվարդիան» կարող ե իրեն հակադրել կոմյերիտմիությանն ու Կարմիր բանակին, յես պատասխանում եմ դրան հարց տալով. իսկ յե՞րբ ե այդ վտանդն ավելի մեծ, այն դեպքում, յերբ «Յերիտասարդ գվարդիան» միացած ե, թե՞ յերբ նա դանդաղ ե անարխիկ դուռնից մեջ, առանց կոմյերիտմիության կողմից կենտրոնացված պրոլետարական ղեկավարության: Վտանդը վորտեղ ե ավելի մեծ: Հասկանալի յե, վոր այն դեպքում, յերբ մենք նրան կթողնենք, վորպես չձևակերպված կադմակերպութուն, առանց պրոլետարական կենտրոնացված ղեկավարու-

թյան: Այդ պատճառով անհրաժեշտ ե կադմակերպորեն ձևակերպել «Յերիտասարդ գվարդիան», ստեղծելով նրանում կենտրոնացած պրոլետարական ղեկավարութուն:

Ինչ վերաբերում ե նրա խնդիրներին, հասկանալի յե, վոր «Յերիտասարդ գվարդիան» չպետք ե անցնի տնտեսական և կուլտուրական խնդիրների կողքով: Սակայն դա «Յերիտասարդ գվարդիայի» հիմնական խնդիրները չեն: Յես նորից կվորդեմ «Յերիտասարդ գվարդիայի» ընույթը: «Յերիտասարդ գվարդիան» դա մի կիսաաղմական կադմակերպութուն ե այն պատճառով, վոր նա պատմականորեն խաղացել ե Կարմիր բանակի ողնակների դերը, ջանքովոր այդ կադմակերպության ձևերն ու ընույթը չափադանց դրավել են յերիտասարդության համար՝ վերջապես «Յերիտասարդ գվարդիայի» նման ընույթը վորոչվում ե նրա հիմնական խնդրի կատարման անհրաժեշտությամբ, այն ե՞ ղինված պայքարը հանուն ագրարային հեղափոխության լողունքների: Վերջապես այդ կադմակերպութունը հանդիսանում ե կոմյերիտմիությանըն ոժանդակող կադմակերպութուն:

Յեւ յես համարում եմ սրբոց խուսափում, յերբ ընկերներն ասում են, թե նա պետք ե լինի կոմյերիտմիությանը կից, սակայն վոչ կենտրոնացված: Նաե խոսում են այդ հակադրման մասին: Ինչո՞ւ «Յերիտասարդ գվարդիան» կենտրոնացված չլինելով չի կարող իրեն հակադրել կոմյերիտմիությանը հանդիսանալով կոմյերիտմիությանն ոժանդակ մի կադմակերպութուն, չպետք ե կենտրոնացված լինի: Գերմանիայում դոյութուն ունի հակաֆաշիստական «Յունդ-ձորոնտ» գվարդիան և յերեակայեցե՛ք, ո՞ սարսափ, նա կենտրոնացված ե: Այնպեղ դոյութուն ունի նաե «Կամպֆունդ» կադմակերպութունը, վորը նույնպես կենտրոնացված ե: Եթե՞ թե վտանդ չկա, վոր նրանք կարող են իրենց հակադրել կոմյերիտմիությանը: Իհարկե, այդպիսի վտանդ կարող ե լինել, յեթե կոմյերիտմիությանը

այդ կողմակերպութեան նկատմամբ կիրառելու լինի սխալ քաղաքականութիւն: Իսկ մենք «Յերիտա-
սարդ զվարդիայի» կենտրոնացման խնդիրը չենք բա-
ժանում նրա մյուս խնդիրներէից և վճռական պայմանը
դնում ենք այն հանգամանքը, վոր «Յերիտասարդ
զվարդիան» իրեն չպետք և հակադրել վոչ Կարմիր բա-
նակին և վոչ ել կոմյերիտմիութեանը, վոր նա պետք
ե կատարի այն խնդիրները, վորոնք կդրվեն նրա
վրա և զխափորապես՝ յերիտասարդութեան ռազմա-
կան ուսուցումը: Ռազմական ուսուցումը հանդիսա-
նում է «Յերիտասարդ զվարդիայի» վճռական խնդիրը:
Նա պետք և ռեզերվներ պատրաստի Կարմիր բանակի
համար: «Յերիտասարդ զվարդիան» հանդիսանում է
ընդհանուր ռազմական ուսուցման մի տեսակ առա-
ջին ձևը, վորը մեզ մոտ Ռուսաստանում մտցրից
հեղափոխութեանից հետո: Չինաստանում նույնպէս
մենք պետք և խորհրդային շրջաններում մտցնենք յե-
րիտասարդութեան ընդհանուր ռազմական ուսուցում:

Միջանի խոսք ընկ. Ոչիի յերույթի առթիւ: Ընկ.
Ոչիի միջանի պնդումների նկատմամբ անհրաժեշտ է,
վոր այստեղ նախադասութեան նիստում արտահայտ-
վեն: Ընկ. Ոչին հարցնում է, թե ի՞նչ լողունդներով
է, վոր մենք յերիտասարդութեանը մորիլիզացիայի
չենք յենթարկում Կարմիր բանակ: Յեւ պատասխա-
նում է. «Իհարկե, վոչ թե ազրարային հեղափոխու-
թեան լողունդներով, այլ պատանեկական քաղաքակա-
նութեան լողունդներով»: Այդ ի՞նչ պատանեկական քա-
ղաքականութիւն է, վորը պետք է փոխարինի ազրա-
րային հեղափոխութեանը: Ընկ. Ոչիի ծառի մեջ ամ-
բողջ ժամանակ յերևում էր ազրարային հեղափոխու-
թեան և պատանեկական քաղաքականութեան հակա-
դրումը: Ընկ. Ոչին ի՞նչ էր հուսնում այդ դեպ-
քում պատանեկական քաղաքականութեան տակ, յես
չգիտեմ: Պատանեկական քաղաքականութիւն կարող
են կիրառել յուրաքանչյուր մի բուրժուական և/ սո-
ցիալ-դեմոկրատական կազմակերպութիւն: Պետք է
պատասխանել այն հարցին, թե ո՞ր, կամ դեպի վո՞ր

քաղաքականներն ենք ուղղում մենք այդ պատանեկա-
կան քաղաքականութիւնը: Չինական հեղափոխու-
թեան համար վճռական հարցը հանդիսանում է ազ-
րարային հեղափոխութիւնը: Դրա համար կուսակցու-
թիւնը մորիլիզացիայի յես յենթարկում չըափորների,
բատրակների, կուլինների և միջակների լայն մասսա-
ները: Իսկ դուք կամենում եք, վոր հողի մասին, այ-
սինքն թե մեծերի և թե յերիտասարդութեան համար
այդ վճռական հարցի մասին, մենք չխոսենք: Պայքար
խորհրդային տերրիտորիաների համար, խորհրդային
իշխանութիւնն ազրարային հեղափոխութեան լողունդ-
ների տակ պահելու համար, ահա դա յես հանդիսա-
նում է իմնականը: Յեւ, ընկերներ, սխալ և կարծել,
վոր հողը զուգացիութեան համար խոշոր ու կարե-
ւոր խնդիր է, իսկ յերիտասարդութեան համար՝ վոչ:
Չի կարելի յերիտասարդութեան շահերն անջատել ամ-
բողջ գյուղացիութեան ընդհանուր շահերից: Այդ
պատճառով յես կարծում եմ, վոր հարցի միակ ճիշտ
դրույթը կլինի այն, յեթե մենք ամբողջ կոմյերիտմի-
ութեան, և հատկապէս խորհրդային շրջանների կոմ-
յերիտմիութեան, ուշադրութեան կենտրոնում դնենք
հողի խնդիրը այն մասին, թե ինչպէ՞ս է կոմյերիտ-
միութիւնը մասնակցելու հողաբաժանութեանը, ազ-
րարային հեղափոխութեան կիրառմանը և այլն: Մենք
չենք կարող կտրվել այն խնդիրների կատարումից,
վորոնց համար պայքարում է ամբողջ կուսակցութիւ-
նը, Կարմիր բանակը, ի կատար ածելու համար այս-
պէս կոչվող պատանեկական քաղաքականութեան ինչ-
վոր արատրակտ խնդիրներ:

Չինական խնդրի առթիւ բանաձևում գերմանական
միութեան վորձի բացակայութեան մասին: Յես այս-
տեղ հարցն այսպէս եմ դնում. պարզ է, վոր այն բո-
լորը, ինչ վոր կա մյուս միութիւնների մեջ սղտա-
կար, և հատկապէս անլեզալ աշխատանքների ասպա-
րիզում, մենք պետք է փոխանցենք դեպ չինական հո-
ղը: Սակայն, ընկերներ, չպետք է մոռանալ, վոր չի-
նական կոմյերիտմիութիւնը պայքարում է բոլորովին
այլ պայմաններում: Չպետք է կարծել, թե այն բո-

լորն, ինչ վոր պետքական և գերմանական պայմաններում, պետքական և և չինական միության համար: Չինական կոմյերիտմիությունը պայքարում է մի հետամնաց կիսադադուլթային յերկրում, վորտեղ տեղի ունի բուրժուա-դեմոկրատական հեղափոխության ետապը և այլն: Միանգամայն տարբեր պայմաններ, իսկ դուք կամենում եք, վոր չինական կոմյերիտմիությունը կատարի նույնը, ինչ վոր անում է գերմանական միությունը: Չինաստանում ամեն ինչ այլ է, այլ է և կարմիր բանակը, այլ է և սրբութարիատը:

«Ձախության մանկական հիվանդություններ» աշխատության մեջ լենինը գրում էր.

«Բանի ժողովրդների ու յերկրների միջև դոյություն ունի ազգային և պետական տարբերություններ, իսկ այդ տարբերությունները դեռ ևս իրենց դոյությունը կապտապանեն շատ ու շատ յերկար ժամանակ, նույնիսկ համաշխարհային մատչառով պրոլետարական դիկտատուրայի իրականացումից հետո, բոլոր յերկրների կոմունիստական բանվորական շարժման միասնական ինտերնացիոնալիստական տակտիկան պահանջում է վոչ թե տարբերությունների վերացում, վոչ թե ազգային տարբերությունների վոչնչացում (դա ներկայիս համար մի անհեթեթ յերազման է), այլ կոմունիզմի հիմնական սկզբունքների այնպիսի կիրառում (խորհրդային իշխանություն և պրոլետարիատի դիկտատուրա), վորը ճիշտ կերպով կկերպարանալու իսի այդ սկզբունքները մասնակի դեպքերում, ճիշտ կերպով կկիրառի, կհարմարեցնի նրանց ազգային և ազգային-պետական տարբերություններին»:

Դա վերաբերում է և մեզ, յերբ մենք խոսում ենք փորձի փոխանցման մասին: Գերմանական միության փորձը, այնտեղ, վորտեղ նա կհարմարվի, մենք պետք է փոխանցենք: Սակայն սխալ կլինի կարծել, վոր մենք պետք է մոտենանք այդ խնդրի լուծմանը մեխանիկորեն: Դրանով մենք ավելի շուտ վնաս պատճառած կլինենք:

Չինական կոմյերիտմիության հերոսական անցյալը, նրա անձնուրաց պայքարը ներկայումս, գրավական են հանդիսանում, վոր նա հաջողությամբ կկատարի իր վրա դրված խնդիրները, գլխավորելով բանվորա-սյուլազայիական յերիտասարդության միլիոնավոր մասսաներին իմպերիալիստների և Գոմինդանի դեմ, ինչպես և միացյալ խորհրդային Չինաստանի համար մղվող պայքարում:

ՉԻՆԱԿԱՆ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԴԻՈՒԹՅԱՆ ՑԵՎ,
ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(1931 թ. հունիսի 12-ին ԿԻՄ-ի Գործկոմի նախագահությամբ կողմից ընդունված բանաձևը).

I. ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ
ՑԵՎ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ

1. Հակառակ չինական հեղափոխության վոխերիմ թշնամիների պնդումներին, սկսած իմպերիալիստներից ու միլիտարիստներից և վերջացած աջ ունեկառուներով (Չեն-Դու-Սյու, Դո-Դո-Սյու) և տրոցկիստներով, թե Չինաստանի հեղափոխական շարժումը մատնված է բանկրոտության և ամրանում է Գոմինդանի իշխանությունը, ներկայումս Չինաստանում, ընդհակառակը, հեղափոխական ճգնաժամ է, վորն արտահայտվում է «մի քանի տասնյակ միլիոն ազգաբնակչություն ունեցող տերրիտորիայի վրա խորհրդային իշխանություն և կարմիր բանակ կազմակերպելու մեջ, վորը գաղութային աշխարհում Չինաստանին ազգային-ազատագրական շարժումների մեջ առաջին տեղն է զնում» (Կոմինտերնի Գործկոմի XI պլենում): Չինաստանում ներկայումս տեղի ունի դաժան տնտեսական ճգնաժամ և հատկապես աղքատային ճգնաժամ, քաղց ու անվերջ պատերազմներ միլիտարիստական կլիկաների միջև: Այդ ամենն ավելի յետադանում Գոմինդան

նի բուրժուա-կալվածատիրական իշխանության տիրապետութիւնը, վորը բանվորների ու գյուղացիների բոլոր յեւույթների արյունահեղ ճնշման իր քաղաքականութիւնը հենում է իմպերիալիստների հաճանափերի ու զնգացիներին, ինչպես և ամերիկական, ֆրանսիական, գերմանական, ճապոնական և մյուս իմպերիալիստների ֆինանսական ու ռազմական ողնության վրա: Միջազգային իմպերիալիզմի ուժերը, վորոնք միասնական ֆրոնտով դուրս են յեկել չինական ժողովրդի աղգային աղատադրական շարժման դեմ, հանդիսանում են խոչորադուլն գործոն, վորոնք արդեւ են հանդիսանում Չինաստանի վճռական մպսում խորհրդային շարժման տարածման գործին:

2. Չինաստանում հեղափոխական ճգնաժամի պարագաները բնութագրվում են գյուղացիական պատերազմի հետագա ծավալմամբ, քաղաքներում բանվորների գործադուլային շարժումների աճմամբ և հերոսական Կարմիր բանակի նոր փայլուն հաղթանակներով: Սակայն Չինաստանում հեղափոխական շարժումը դարձանում է անհամաչափ (բանվորական շարժումը խոչոր արդյունաբերական կենտրոններում գեոէս չի գտնվում՝ խորհրդային իշխանության համար մղվող պայքարի ստադիայում, ինչպես այդ տեղի ունի մի շարք պրավինցիաների բանվորա-գյուղացիական շարժումների նկատմամբ, հեղափոխական շարժումը հյուսիսում չի գտնվում Չինաստանի հարավում տեղի ունեցող շարժումների դարձացման նույն մակարդակի վրա և այն) և հեղափոխական ճգնաժամը յերկրի մեծ մասում դեռևս մասսաներին չի մոտեցրել՝ Գոմինդանի իշխանության տապալման և խորհրդային իշխանություն սահմանելու համար մղվող անմիջական պայքարին: Այդ պայմաններում Կոմինտերնը չինական կոմկուէն առաջ դրել է հետևյալ ռազմական խնդիրները, վորոնց կատարումը պետք է կապակցվի խորհրդային տերրիտորիայի լայնացման համար մղվող հետագա պայքարին.

ա) ամուր և կարգապահ Կարմիր բանակ ստեղծելն

ու նրա հետագա ամրացումը. բ) խորհրդային կենտրոնական կառավարության ձևավորումը. խորհրդային իշխանության կողմից ագրարային հեղափոխության հիմնական լոզունգները կյանքում կիրառելը (կալվածատերերի, ջնտրիների և մյուսների հողերի բռնագրավումը և ձրի կերպով նրանց գյուղացիներին հանձնելը, հողաբաժանություն, վորը համապատասխանում է չքավոր, բատրակ և միջակ գյուղացիական մասսաների շահերին). գ) բանվորական գործադուլային պայքարի ղեկավարութիւնն ու ծավալումը չխորհրդայնացված տերրիտորիայում և բոլոր հեղափոխական մասսայական կազմակերպութիւնների ամրացումը: Այդ բոլոր խնդիրները պետք է կապակցվեն հակաիմպերիալիստական պայքարի ծավալման հետ, վորը պետք է գտնվի կուսակցության ուշադրության կենտրոնում: Գրանով նաև վորոշվում են չինական կոմյերիտմիության խնդիրները:

3. Չինական կոմյերիտմիութիւնը, վորպես բանվորա-գյուղացիական յերիտասարդության առաջնորդ, կոչված է խոչոր դէր խաղալու չինական հեղափոխության ամբողջ դարձացման ընթացքում՝ խորհրդային իշխանության համար մղվող կռիվներում, խորհրդային չինարարության մեջ, Կարմիր բանակի ամրացման գործում, բանվոր դասակարգի կռիվներում, ագրարային հեղափոխութիւնը հետևողականորեն կիրառելում, Չինաստանի յերիտասարդ բանվորների ու գյուղացիների հսկայական խավը կուսակցության կոչմը զբաղելու մեջ, աղգային-աղատադրական ամբողջ պայքարում ընդդէմ աղգային և իմպերիալիստական կեղեքումի և խորհրդային միացյալ Չինաստանի համար մղվող պայքարում: Չինաստանի հերոսական կոմյերիտմիութիւնը, վորպես բանվորա-գյուղացիական յերիտասարդության կազմակերպիչն ու ղեկավարը, վորպես նրա իսկական շահերի ու կարիքների միակ արտահայտիչն իր անձնվեր մասնակցութիւնով չինական պրոլետարիատի բոլոր ապստամբութիւններին հեղափոխության զոնաղան ետապներում (Շանհայի

ապստամբությունները, Կանտոնի և այլն), անընդհատ դործադուլային պայքարին, ագրարային հեղափոխության ծավալման ամբողջ ընթացքում, իր պայքարող հարմիր բանակի շարքերում և իր մասնակցությամբ նրա կողմից տարած փայլուն հաղթանակներում դործնականում իրագործեց լենինյան այն ցուցմունքը, թե աշխատավոր յերիտասարդութունը հեղափոխության մեջ պատկանում և «ամենավճակաւն ելեմենտներին»։ Չինական աշխատավորական մասսաների ազատագրական շարժման մեջ կոմյերիտմիությունը միշտ ել յեղել և առաջավոր դերքերում, կրակի առաջին գծում, կատարելով կուսակցության առաջին ոգնականի դերը։ Նրա ամենալավ անդամները շատերը դրին իրենց գլուխները ռազմաճակատի կռիւներում, հեղափոխական դործի համար դամբնդանական սանձարձակ տեսութիւններով տակ։ Հակառակ 1930 թվին այն ժամանակվա կուսակցության Բաղբյուրոյի ղեկավար ընկ. Լի-յի կողմից առաջադրված ոպորտունիստական, հակալենինյան թեորիայի, այն մասին, թե կոմյերիտմիությունը, վորպես ինքնուրույն կազմակերպություն, անմիջական հեղափոխական սխտուացիայի և զինված ապստամբությունների չըջանում չպետք և դոյություն ունենա։ Կոմյերիտմիության ամբողջ պատմական սնցյայր և նրա հերոսական պայքարը ներկայումս գլխովին ջարդ ու փշուր են անում սոցիալ-դեմոկրատական այդ փթած թեորիան, վորը կազմում և ընկ. Լի-Լի-Սյանի կիսատրոցկիստական, հակակոմինտերնյան դրույթի բաղադրուցիչ մասը չինական հեղափոխության խնդրում։ «Չինաստանի ԿՅՄ զարգացումն ու պայքարը վողեորիչ որինակ և հանդիսանում Հնդկաստանի, Ինդոնեզիայի և ամբողջ գաղութային աշխարհի աշխատավոր յերիտասարդության համար» (ԿիՄ-ի ծրագիրը)։ ԿիՄ-ի Գործկոմի նախագահությունն ընդգծում և ԿՅՄ այդ դերը և դրանով իսկ ցույց և տալիս, վոր պայքարն ընդդէմ կոմյերիտմիության նկատմամբ յեղած բոլոր լիկվիդատորական տեսակետների, կոմյերիտմիության դերի ոպորտունիստական թերադնա-

հատման, վորը միջանի անդամ և ծագել չինական կոմկուռի և կոմյերիտմիության զարգացման պատմության մեջ և վորն ավելի տարածված և յեղել կուսակցության այսպես կոչվող լիւիւյանական դի տերապետության և ղեկավարության որոք (1930 թ. յերկրորդ կիսում), հաշիւ չառնելով թե վորտեղից են նրանք դալիս՝ «աջից» թե «ձախից»՝ հանդիսանում և կոմյերիտմիության հաջող զարգացման հիմնական նախադրյալը և պետք և կիրառվի նաև ներկայումս ամենայն վճակաւնությամբ։

II. ՉԻՆԱԿԱՆ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՅՈՒՄԸ ԿԻՄ-Ի Վ ԿՈՆԳՐԵՍՈՒՑ ՀԵՏՈ

1. ԿիՄ-ի Վ կոնգրեսից սկսած մինչև 1930 թվի կեսերը չինական կոմյերիտմիության ղեկավարությունը հիմնականում կիրառում էր Կոմինտերնի և ԿիՄ-ի ճիշտ դիժը։ Կոմյերիտմիությունն սկստիվ կերպով դուրս յեկավ աջ ունեղատների դեմ (Չեն-Պու-Սյու և ուրիշներ), ինչպես նաև ընդդէմ տրոցկիստների, վարտեք ընդ կազմած պայքարում և յին Կոմինտերնի և կուսակցության դեմ։ Կոմինտերնի և ԿիՄ-ի ճիշտ դիժը կյանքում կիրառելը կոմյերիտմիությանն այն ժամանակ նպաստեց մի շարք դգալի հաջողություններ ձեռք բերելուն։ Այնպեցնելով իր շարքերը, կոմյերիտմիությունը յեռանդով սկսեց աշխատանքներ տանել դորմատներում, գլխավորեց յերիտասարդության մի քանի գործադուլները, հաջողությամբ ծավալեց մասսայական կազմակերպությունները, մասնավորապես հակալիմպերիալիստական լիգան և այլն։ ԿՅՄ Կենտկոմի քաղաքական դիժը հաճախ հալմանություն և գտել ԿիՄ-ի Գործկոմի վորոշումների մեջ։

2. Սակայն 1930 թ. Հունիս-ոգոստոս ժամանակաշրջանում Չինաստանի ԿՅՄ Կենտկոմի բյուրոն, հակառակ Կոմինտերնի ու ԿիՄ-ի ցուցմունքներին, ամբողջովին պաշտպանում էր ընկ. Լի-Լի-Սյանի հակալենինյան, կիսատրոցկիստական դրույթը և կանգնելով հա-

կախում են տերնյան դժի վրա, կողմնակից հանդիսացալ կոմյերիտմիութեան լիկվիդացիային, ժխտեց ինտեր-նացիոնալ դիպլիմալինան (հակառակ ուղղակի առաջարկ-ներն հրաժարովեց պաշտպանել Կոմիտեներն և ԿիՄ-ի գիծը), ինչպես և կանգնեց տրոցկիստական բնույթի «ձախ» մանր-բուրժուական անպատասխանատու ֆրա-զայի ուղու վրա, վորը գործնականում քողարկում եր միութեան ինտելիգենտական կադրերի մի մասի ուղոր-տունիստական պրաքիվությունը, վորը չեր կարողանում և չեր ցանկանում բանվորական յերիտասարդութեան մասսաների մեջ իսկական բայլելիկյան աշխատանք տանել։ Այդ շրջանում ԿՅՄ Կենտկոմի բյուրոն Գաղ-բյուրոյի հետ միասին վերցնելով ամբողջ յերկրում անմիջապէս ապստամբություն բարձրացնելու կուրսը, անխոս ու կուր կերպով հետեւելով Լի-Լի-Սյանի կի-սաւորոցկիստական թեորիաներին (հեղափոխական սիտուացիայի սկսման, Չինաստանում հեղափոխա-կան զարգացման անհամաչափութեան հերքման, թեո-րիա այն մասին, թե չինական բանվորները գործադու-լային դպրոցի կարիքը չեն զգում և պատրաստ են ան-միջապէս ապստամբելու և այլն) կոմյերիտմիութեա-նը չափազանց ծանր դրութեան հասցրեց, ստեղծելով նրա բանվորական յերիտասարդութեան մասսաներից կտրվելու սպառնալիք. դարգացնելով սեկտանտությու-նը և արհամարհելով մասսայական աշխատանքը, սի-տեմատիկ կերպով թերագնահատելով կադմակերպչա-կան աշխատանքի նշանակությունը, նա թուլացրեց մասսայական կադմակերպությունները և ջլատեց տե-ղերում կոմյերիտական բլիշների վորեւ ինքնուրույն գործունէությունը։ Սորհրդային շրջաններում այդ գիծը մի շարք ճեղքվածքների ու բացասական հետե-անքների պատճառ հանդիսացալ, վատացնելով այն-տեղ ԿՅՄ դրությունը։ Այդ բոլորը նպաստեց աջերի ուժեղացմանը կուսակցութեան և ԿՅՄ մեջ։

3 1930 թ. աշնանը տեղի ունեցալ կոմյերիտմիութեան Կենտկոմի III-րդ պլենումը, վորի խնդիրն եր

վերջնականապէս դիմակացերձ անելու լիկսյանիզմի ու կիսաարոցկիստական գիծը, վորը և իր վորոշումնե-րի մեջ արտացոլեց կուսակցութեան Կենտկոմի III պլենումի հաշտվողական դրույթը լիկսյանիզմի հան-դեպ և դրանով իսկ շարունակեց կուսակցութեան Կենտ-կոմի III պլենումի գիծը ԿՅՄ մեջ։ Փոխանակ պայ-քարելու կուսակցութեան Կենտկոմի III պլենումի հաշտվողական գծի դեմ, ԿՅՄ պլենումը միացալ նրա վորոշումներին և չկարողացալ մինչև վերջը դիմակա-վերձ անել ԿՅՄ Կենտկոմի բյուրոյի լիկվիդատորական գիծը։ Սակայն ԿՅՄ Կենտկոմի III պլենումից հետո անգամ Կենտկոմի բյուրոն կատարեց մի շարք հաշտվո-ղական սխալներ, իսկ Կենտկոմի բյուրոյի առանձին անդամները ԿիՄ-ի գիծը կյանքում կիրառելու գոր-ծում հանդես ելին դալիս, վորդես քողարկված կերպով սաւորտած կադմակերպողներ։ Այդ բոլորը հանգեց նրան, վոր կոմյերիտական մասսաների ճնշման տակ և ԿիՄ-ի սկսելով միջամտութեամբ ԿՅՄ բյուրոյի կազմը վորսվեց, հեռացնելով այն բնկերներին, վորոնք ազնւ-վորեն չեցին կամենում կիրառել ԿիՄ-ի գիծը, մացը-նելով բյուրոյի կազմի մեջ նոր բնկերների (գլխավորա-պէս բանվորներին), վորոնք կապահովեն ճիշտ գծի կի-րաւումը։

4. ԿՅՄ վերանորոգված Կենտկոմի ղեկավարու-թեամբ չինական կոմյերիտմիությունը շտկեց իր քա-ղաքական գիծը, հաղթահարեց լիկսյանիզմն ու հաշտ-վողականությունը դեպի նա և դրանով իսկ նախադըր-յալներ ստեղծեց իր հետագա աճման ու զարգացման համար։ Նոր ղեկավարութեամբ ԿՅՄ ակտիվ կերպով սկսեց պաշտպանել Կոմիտեներն գիծն այն ժամանակ, յերբ ալ ունեղատների մի խմբակ, Լո-Չօան-Լունի գլխավորութեամբ, վորձ կատարեց կուսակցությունից բաժանելու կուսկադրի մի մասին, և ԿՅՄ ներսում չատ արագ կերպով իր հաշիվները մաքրեց աջերի հետ։ Կոմյերիտմիությունը շարունակում և իր պայքարն ընդդէմ «ձախ» սխալների, ընդդէմ լիկսյանիզմի մնա-ցորդներին, ավելի ու ավելի յե յուրացնում յերկու

ճակատներում պայքարելու տակտիկան, ինչպես և իր գործնական աշխատանքներում առաջին կարևոր հաջողությունները ձեռք բերեց, ինչպես որինակ՝ բանվորական յերիտասարդութան մորիլիզացիան Կարմիր բանակ, գործարանային նոր բջիջներ ստեղծելը, առանձին կազմակերպությունների աճումը, բանվորական կադրեր պատրաստելը, աշխատանքի սկիզբը միլիտարիստական բանակներում, յերիտասարդութան առանձին գործադուլների ղեկավարությունը և այլն:

Կոմյերիտմիության Կենտկոմի IV պլենումը սույն թվի սկզբում բունեց ճիշտ քաղաքական գիծ, լիկվիդացիայի յենթարկեց III պլենումի սխալները, ուժեղացրեց պայքարը յերկու ճակատներում, տվեց կոմյերիտմիության իսկական գրության ճիշտ գնահատականը, կիրառելով ինքնաքննադատության մեթոդը ճիշտ կերպով դրեց անխզալ աշխատանքների մեթոդների խնդիրը, ինչպես և ճիշտ կերպով դրեց կոմյերիտմիության հիմնական խնդիրները:

Պլենումը միանգամայն ճիշտ կերպով ժխտեց Թության «ճգնաժամի» փտած թերիան:

Չինական կոմյերիտմիությունը ներկայումս գտնւրիում է ճիշտ ուղու վրա, սկսել է գործնականորեն վճռել կոմյերիտմիության հանգուցային խնդիրները, սղատվում է դատարկ Փրադաբանությունից և մոտենում է իսկական մասսայական աշխատանքներին: Լիյայանիդի մէ նրա հետ հաշտվելու շրջանի դասերը, ինչպես և աջերի յերույթներն ընդդէմ կուսակցության և կոմյերիտմիության, և ԿիւՄ-ի ու Կոմինտերնի ճիշտ գծի համար կոմյերիտմիության կողմից մղվող ամբողջ պայքարը, պետք է կոմյերիտմիությանը, նրա հետագա աշխատանքներում, միջոց ծառայեն՝ միության կադրերի և միության անգամներ ըսյլչեիկյան դասախարակման գործի ասպարիդում:

III. ՉԻՆԱԿԱՆ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Դրա հետ միասին Չինաստանի կոմյերիտմիության գրությունը ընութադրվում է նրանով, վոր նա հարկ յեղած չափով չի կատարում՝ բանվորական յերիտասարդության պայքարի կազմակերպչի ու ղեկավարի իր դերը, ղեռ չի սովորել կապակցելու մասնակի տնտեսական պահանջներ յայքարը հիմնական յուղունգների համար մղվող պայքարի հետ, հաճախ անցնում է կարևոր շարժումների ու կոնֆլիկտների կողքով, պրոֆմիություններում թույլ է աշխատում, իր կադրերն ու շարքերը պրոլետարականացման յենթարկելու ասպարիդում քիչ հաջողություններ է ձեռք բերել, չափազանց քիչ թվով արտադրական բջիջներ ունի, ղեռ ևս մուտք չի գործել մի շարք կարևոր ձեռնարկներ, չի կարողացել ստեղծել մասսայական ուժանգակ կազմակերպությունների ցանց և ներկայումս է միայն սկսել վերադառավորել իր ղեկավարությունը: Միաժամանակ չափազանց կարևոր է հաշվի առնել, վոր կոմյերիտմիության խոշոր արդյունաբերական կազմակերպությունների գրությունը չի համադաստիսանում այն խնդիրներին, վորոնք գրվում են նրանց վրա՝ բանվոր դասականը յայքարի ծավալման ներկա պարագաներում, ինչպես և այն խնդիրներին, վորոնք վերաբերում են խորհրդային շրջաններին և դյուղացիական պարտիզանական շարժումների ծավալմանը: Այսպիսով կոմյերիտմիությունը հետ է մնում Չինաստանում արագ տեմպերով ծավալվող դեպքերից: Այդ պատճառով բանվորական յերիտասարդության մաժամանության գրավումը և գյուղացիական աշխատավոր յերիտասարդության գրավումը, իրեն իսկ կոմյերիտմիության կազմակերպչական ամբացումը, վրճուական ձեռնարկներում դիրքեր գրավելը պետք է նրա ուշադրության կենտրոնում գրվին:

2. Պայքարը յերկու ճակատում, ինչպես ընդդէմ գլխավոր վտանգ աջ թեքման, նույնպես և ընդդէմ

«ձախ»-ի, ընդդէմ լիւսյանիդմի մնացորդներէ, հանդիսանում ե կոմյերիտմիութեան հետագոտ աճման ու զարգացման գլխավոր նախադրեալը :

Ներկայումս գլխավոր վտանգը հանդիսանում ե աջ թեքումը, վորը կոմյերիտմիութեան ներսում արտահայտւում ե հետեյալ ձեով. կոմյերիտմիութեանը, վորդես ինքնուրույն կազմակերպութեան լիկվիդացիայի յենթարկելու ձգտում, Կարմիր բանակի շարքերում, Փրոտնոում, ռազմական աշխատանքից հրաժարվելու տենդենց, միլիտարիստական զորքերում աշխատելուց հրաժարվելու ձգտում, բանվորական յերիտասարգութեան տնտեսական ու քաղաքական պայքարին գլխավորելուց հրաժարվելու տենդենց, կոմյերիտմիութեանը զուտ «կրթական» կազմակերպութեան վերածելու ձգտում, հակաիմպերիալիստական աշխատանքներէ ընդունելութեան. յերիտասարգութեան, կոմյեւպայերում ազդարային խնդրը կուլակային ձեով լուծման նպատում. ԱԲ հակահեղափոխական միութեան թողտնութեան, խորհրդային տերրիտորեայում միութեան ե «Յերիտասարդ գվարդիայի» մեջ կուլակներէ ընդունելութեան. յերիտասարգութեան, Կոմյերիտմիութեան հիմնական ծրագրային պահանջներէ, մանկական աշխատանքի, 4-6 ժամյա բանվորական որվա վերաբերյալ խորհրդային որենքները կյանքում կիրառելը հետադձելու կամ քողարկելու ձգտում. բանվորական յերիտասարգութեանը վերաբերող կոմյերիտմիութեան գլխավոր լողունդներէ, դրանց թիւում ե 4-6 ժամյա բանվորական որվա ծրագրային լողունդի ռեվիզիայի տենդենց. խոշոր ձեռնարկներն ու արդյունաբերական հիմնական ճյուղերը մուտք գործելու ուղորտունիստական պասսիվութեան. անլեզալ ծանր պարագաներում աշխատելու պատճառարանութեամբ գործնականում ուղորտունիդը քողարկելու ձգտում : Աջ ուղորտունիդը տանում ե դեպի՝ աշխատավորական յերիտասարգութեան լայն մասաներէ վրա ԿՅՄ կողմից ունեցած ազդեցութեան կորուստը, սերմանում ե հեղա-

փոխական ուժերի նկատմամբ անոխտահութեան ե կանոնեում ե հեղափոխական շարժման դարգացումը :

Այդ թեքումը սերտորեն հյուսվում ե «ձախ» մանրրութունական թեքման հետ, վորը կոմյերիտմիութեան ներսում արտահայտվում ե հետեյալում. ավանդարդիզմ, ձգտում դառնալու կուսակցութեանց անկախ կազմակերպութեան. պուտչիզմ ե ձեռնարկներում ամենորյա մասնայական աշխատանք տանելու չկամութեան. ձգտում՝ կոմյերիտմիութեանը դարձնելու նեղ կազմակերպութեան, սեկտա, վորն ընդգրկելու յի միայն «քնտրյալ ե անլախ» ու ամենալալ հեղափոխականներէ, վորոնք կտրված են լայն մասաներից. խորհրդային մի բանի շրջաններում սխալ հողաբաժանութեան ուսուցանում, վորի հետեանքով խախտվում ե կապը միջակի հետ. ժամանակից շուտ միջոցառումներէ կիրառումը (ինչպես՝ կոլեկտիվացումը ե այլն). «Յերիտասարդ գվարդիայի» մի բանի ջոկատներէ անարիտական գործողութեանները, վորոնք կրոնի գեմ պայքարը մղում են քանդելով՝ վանքերը, նախնիքներէ դերեզմանները, բուդգանները, հաշիւ չառնելով գյուղացիութեան կրոնական նախապաշարմունքները. գյուղացիական յերիտասարգութեան շահերն ամբողջ գյուղացիութեան շահերից անջատելու տենդենց, վորն արտահայտութեան ե գտնում «հողը յերիտասարգութեանը» լողունդում. մասնայական կազմակերպութեաններէ ե դեղին պրոֆիտութեաններէ մեջ աշխատանք տանելուց հրաժարվելու ձգտում. յերիտասարգութեան մասնակի պահանջներէ համար ամենորյա պայքար տանելու չկամութեան ե լեզալ հնարավորութեաններն ուղտագործելուց հրաժարվելու տենդենց :

Կոմյերիտմիութեանը կարող ե կատարել իր խնդիրները միայն՝ յերկու թեքումներէ ե դեպի նրանց ունեցած հաշտողական վերաբերմունքի գեմ անհաշտ պայքար մղելու պայմանով : Այդ պայքարը պետք ե կապակցված լինի միութեան պրոլետարականացման խնդրի հետ, քանի՝ վոր ԿՅՄ կազմի ու նրա կադրերէ վոչ պրոլետարական լինելը գլխավոր աղբյուրն ե հան-

դիտանում վանապան տեսակ թերութիւնների և ուղղորդումն իստական տենդենցների ծագման:

3. Ներկայումս չինական կոմյերիտմիութեան գլխավոր մարտական խնդիրն է՝ մոբիլիզացիայի յենթարկել իր բոլոր ուժերը՝ հետ վանելու համար խորհրդային շրջանների վրա ուղղված գնեւերական յերկրորդ գրոհը և ամրացնելու Կարմիր բանակը: ԿԻՄ-ի նախադասութիւնը համապատասխան է տալիս կոմյերիտմիութեան Կենտկոմի IV պլենումի վերջումնեին՝ բանվորական յերիտասարդութիւնը Կարմիր բանակի շարքերը մոբիլիզացիայի յենթարկելու, խորհրդային շրջանների կոմյերիտականներին Կարմիր բանակ մոբիլիզացիայի յենթարկելու, «Յերիտասարդ պարզիայի» ամենալավ շոկատները Կարմիր բանակի համար գնդեր կազմելու, Կարմիր բանակի կողմից հրամանատարներ ու կոմիտարներ պատրաստելու համար կազմակերպված դպրոցների ուսանողների թիվը յրացնելու համար ակտիվիստներին մոբիլիզացիայի յենթարկելու մասին և այլն: ԿԻՄ-ի նախադասութիւնը մատնանշում է, վոր այդ խնդիրների կատարումը հանդիսանում է կոմյերիտմիութեան հիմնական պարտականութիւնը, և առաջարկում է միաժամանակ մասնաշաղկապ աշխատանք ծավալել՝ խորհրդային շրջանները պաշտպանելու, Կարմիր բանակին ռմանդակելու ասպարեզներում, ինչպես և վոչ-խորհրդային տերրիտորիաներում (գործեր և հանդերձանք տեղափոխելիս ասարտած կազմակերպել և այլն): Կոմյերիտականներն ու բանվորական յերիտասարդութեան մոբիլիզացիան Կարմիր բանակի շարքերը պետք է համարվի ԿՅՄ կողմից Կարմիր բանակին ցույց տրվող ողնութեան մըշտական մեթոդ: Միաժամանակ ԿՅՄ պետք է ուժեղացնի իր աշխատանքները Կարմիր բանակում, ողնելով տեղեւելու աշխտեղ տմուր կարգապահութիւն և տանելու քաղաքատարակցութիւն: Դրա հետ միասին կոմյերիտմիութիւնը պետք է ուժեղացնի իր աշխատանքներն իմպերիալիստական և միլիտարիստական դորքերում, ուղարկելով աշխտեղ ամենաընտիր կոմյե-

րիտականներին, կենտրոնացնելով իր ուղադրութիւնը Կարմիր բանակի դեմ ուղարկվող կարեւոր դորամանքի ու կայացորներ յրա: ԿՅՄ աշխատանքը նմանապես լավ հիմքերի վրա պետք է դրվի զանազան դադտնի բնկերութիւններում և խմբակներում: Դենեւրական դրոհին հակահարված տալու իր աշխատանքները ԿՅՄ պետք է կապակցի խորհուրդների և համադումարի նախապատրաստական աշխատանքներին մասնակցելու ևսղմական խնդիրն, ծավալելով լայն հակաիմպերիալիստական աշխատանք (իմպերիալիստական ճնշման դեմ աշխատավորութեան կողմից մասնաշաղկապ հուզմունքների ժամանակ կոմիտներ տեղեւելու ու նրանցում մասնակցելը, հակաիմպերիալիստական լիզայի ամրացումն ու ծավալումը և այլն), մոբիլիզացիայի յենթարկելով բանվորա-դուրացիական մասնաներին՝ պայքարելու ընդդեմ ԽՍՀՄ սպարոնացող նոր պատերազմի դեմ:

4. ԿԻՄ-ի նախադասութիւնը նշում է, վոր մինչև վերջին ժամանակներս ԿՅՄ Կենտկոմը ծայր աստիճան անբավարար ուղադրութիւն է դարձրել խորհրդային շրջաններում կոմյերիտմիութեան կողմից տարվող աշխատանքներին: Խորհրդային շրջանների կոմյերիտմիութիւնը մինչև այժմս գեռ ևս չի հանդիսանում, իրեն հնարավորութիւններին համապատասխանող, բանվորական, բատրակային, դյուղի և քաղաքի չքավոր ու աշխատավորական յերիտասարդութեան լայն կազմակերպութիւն, թույլ է աշխատում խորհրդային չինարարութեան դործի և Կարմիր բանակի ամրացման ասպարեզներում, ունի իր շարքերի ևսղեկավար կադրերի անբավարար կազմ: Յերնկելով դըրանից, ԿՅՄ աշխատանքը խորհրդային շրջաններում պետք է կենտրոնացվի նախ և առաջ հետեւյալ ուղղութեամբ.

ա) ակտիվ մասնակցութիւն ունենալ խորհրդային իշխանութիւն կազմակերպելու ու նրա որենքները կերտելու, ինչպես և խորհրդային չինարարութեան ասպարեզում: Առանձին ակտիվութիւն կոմյերիտմիութեան

թիւներ պետք է ծափալի հողաբաժանութեան ասպարեզում, ամենուրեք կողմնակից հանդիսանալով այնպէսի հողաբաժանութեան, վորը կհամապատասխանի գյուղացիութեան հիմնական մասաների շահերին: Երբհրդային շրջանների ԿՅՄ նմանապես պետք է ակալով մասնակցութիւն ցույց տա խորհրդային պրոդերսիֆիկամտային հարկի կիրառմանը, խորհրդային իշխանութեան բոլոր որենքների կիրառմանը, վորոնք վերաբերում են յերկտասարդութեանը (ուսում, աշխատանք և այլն): ԿՅՄ պայքարում է ընդդէմ բյուրոկրատիզմի, ընդդէմ խորհրդային աշխատավորների կաշառման, դասակարգային թշնամու կողմից, մասնակցում է խորհուրդների ընտրութիւններին, մօբիլիզացիայի յէ յենթարկում գյուղացիական յերկտասարդութեան մասաների ակտիվութիւնը խորհրդային շինարարութեան դործում, ոգնելով կուսակցութեանը կիրառելու դասակարգային քաղաքականութիւնը բոլոր ասպարեզներում: ԿՅՄ խորհրդային որդանների միջոցով կազմակերպում է ընդհանուր դինկորական ուսուցում, մասնակցում է կուլակային և այլ հակահեղափոխական կադմակերպութիւններին դեմ մղվող պայքարին: ԿՅՄ նմանապես մասնակցական աշխատանք է ծափալում յերկտասարդութեան դաստիարակութեան ասպարեզում, դուրս և դալիս ունակցիոն ուսուցչութեանը հեռացնելու կողմնակից և դպրոցներում Սուն-Յաթ-Սենի յերեք սկզբունքներն ակնդելու դեմ և այլն:

բ) կոմյերիտմիութիւնը հատուկ ուշադրութիւն պետք է դարձնի դեպի յերկտասարդութեան այն պահանջները, վորոնք որինականացված են խորհրդային իշխանութեան կողմից: Կոմյերիտմիութիւնը հանդես է դալիս արտոյուտ կերպով վերացնել տալու մանկական աշխատանքը, մինչև 14 տարեկան, խորհրդային շրջանների բոլոր ձեռնարկներում և նպատակ է դնում փառտորեն վերացնելու մանկական աշխատանքն արհեստավորական ու տնայնադործական արհեստանոցներում, կիրառելու 4—6-թամյա բանվորական որ, հալատար աշխատավարձ ստանալու մեծերի հետ (կրճատ

բանվորական ժամանակի համար) և այլն, իրականացնելով այդ պահանջները խորհրդային իշխանութեան որենքների միջոցով:

գ) իրեն կոմյերիտմիութեան և նրա ղեկավարութեան ամբացումը: Կոմյերիտմիութեան խնդիրն է՝ մասնակցական կադմակերպութիւն հանդիսանալ, վորը կընդգրկի հարյուր հազարավոր բանվորա-գյուղացիական յերկտասարդութիւն: Կոմյերիտմիութիւնը պետք է ուժեղացնի իր շարքերը, ամբողջովին ընդգրկելով բանվորական, բատրակային և չքավորական յերկտասարդութեանը, վորը նրա նեցուկն է հանդիսանալու: ԿՅՄ մեջ ընդունելիս պետք է խստիվ պահպանվի դասակարգային մոտեցումը: Կուլակային և կալվածատիրական տարրերի մուտքը ԿՅՄ մեջ միանգամայն պետք է արգելվի: Անհրաժեշտ է նաև վոչ թէ միանգամից, այլ համառ աշխատանքի միջոցով կոմյերիտմիութեան շարքերը հետզհետե մաքրել կուլակներից: Կոմյերիտմիութեան շարքերի գտումը չի կարելի ձգձգել, քանի վոր նրա շարքերի վորեւ աղքատումս տար ելեմենտներով կարող է առանձին կոմյերիտական կադմակերպութիւնները դասակարգային թշնամու ձեռքում գնք դարձնել: Անհրաժեշտ է ԿՅՄ մեջ ղեկավար աշխատանքների համար վճարային կերպով տալ քաշել բատրակների ու չքավորների և կադմակերպել կադրերի պատրաստումը:

ԿիՄ-ի նախադահութիւնը հավանութիւն է տալիս Կենտկոմի բյուրոյի՝ խորհրդային շրջանների կոմյերիտմիութեան վերարեդյալ բանաձեին, ինչպես և հիմնական խորհրդային շրջաններում Կենտկոմի բյուրո կադմակերպելուն և պարտավորեցնում է Կենտկոմին սիստեմատիկ կերպով ղեկավարել նրանց աշխատանքները:

5. ԿիՄ-ի նախադահութիւնը նշում է այն հսկայական դերը, վորը Չինաստանի աղքատային հեղափոխութեան դարգացման նկատմամբ խաղացել և «Յերիտասարդ դվարդիա» կադմակերպութիւնը, վորն իր շարքերում ընդգրկում է հարյուր հազարավոր գյուղա-

ցիական յերիտասարդութիւն և վորը գտնվում է կոմ-
յերիտմիութեան ղեկավարութեան տակ: Կոմյերիտ-
միութիւնը պետք է ծավալի այդ կազմակերպութիւ-
նը, վորպէս՝ մասսայական, աշխատավոր յերիտասար-
դութեան կիսառազմական կազմակերպութիւն, վորը
պայքարում է ընդդէմ՝ միլիտարիստներին, կալվածա-
տերերին, շէնտրիներին, կուլակներին, ազրաւային հիմ-
նական լոգոնդներին ու խորհրդային իշխանութեան հա-
մար, հանդիսանալով Կարմիր բանակի առաջին ոգնա-
կանը: Այդ կազմակերպութիւնը պետք է տարածվի և
վաճ խորհրդային շրջաններում: Կոմյերիտմիութիւնը
պետք է ուղարկի «Յերիտասարդ գվարդիայի» մեջ աշ-
խատելու իր ամենալավ աշխատակիցներին, մաքրի
այդ կազմակերպութիւնը ոտաբ տարրերից (կուլակ-
ներէից), ապահովի նրանում պրոլետարական կենտրո-
նացված ղեկավարութիւն (շտաբներին ձեռնով), ճիշտ
կերպով կազմակերպի նրա որդանները, ստեղծի ու կազ-
մակերպի կոմյերիտական Փրակցիաների աշխա-
տանքը նրանում և սխտեմատիկ կերպով պայ-
քար մղի «Յերիտասարդ գվարդիայի» շուկատներում
տեղի ունեցող սխալների դեմ (կրոնի դեմ մզվող սլա-
քարի շեղումների, ազգաբնակչութեան նկատմամբ վար-
չական միջոցներ ընձեռելու, Կարմիր բանակի հետ
կոնֆլիկտներ ունենալու վերաբերյալ և այլն): ԿՅՄ
պետք է պայքարի «Յերիտասարդ գվարդիան» կոմ-
յերիտմիութեանն ու Կարմիր բանակին հակադրելու
տենդենցների դեմ: «Յերիտասարդ գվարդիան» լինե-
լով կոմյերիտմիութեանն ոժանդակ մի կազմակերպու-
թիւն և ընդդրկելով բանվոր-գյուղացիական լաշի
մասսաներին, իրեն զլխավոր խնդիրը պետք է դարձնի՝
յերիտասարդութեան ուղղմական ուսուցումը, Կարմիր
բանակի համար ռեզերվներ պատրաստելը և Կարմիր
բանակի ու խորհրդային իշխանութեան ամբողջ պայ-
քարին մասնակցելն ընդդէմ հակահեղափոխութեան
և հանուն ազրաւային հեղափոխութեան լոգոնդների:

«Յերիտասարդ գվարդիան» պետք է հանդիսանա կոմ-
յերիտմիութեան կարեւոր ռեզերվներից մեկը, վոր-
տեղից կոմյերիտմիութիւնը՝ մասսայական կերպով
բլետք է լրացնի իր շարքերը: Ճիշտ քաղաքականու-
թեան դեպքում «Յերիտասարդ գվարդիան» բոլոր նա-
խադրյալներով ոժտված է դառնալու շինական աշխա-
տավոր յերիտասարդութեան բաղմամիլիոն կազմա-
կերպութիւն, շինական հեղափոխութեան հզոր ու
աննկուն շուկատ, վորը վստահելի դնք է կոմյերիտ-
միութեան և կուսակցութեան ձեռքում:

6. ԿիՄ-ի նախադաճութիւնը նշում է, վոր քա-
ղաքների գործադուլային շարժման ծավալման հետ
միասին աճում է նաև բանվորական յերիտասարդու-
թեան հեղափոխական ակտիվութիւնը, վորն արտա-
հայտվում է՝ յերիտասարդութեան գործադուլներին և
պրոլետարիատի բոլոր յելույթներին ակտիվ կերպով
մասնակցելու մեջ: Չինաստանի բանվորական յերի-
տասարդութեան պայքարը, իր ամբողջ համառու-
թեամբ, կրում է, սակայն, զլխավորապէս տարերային
բնույթ:

Այդ բոլորը կոմյերիտմիութեան առաջ, վորպէս
զլխավոր խնդիրներից մեկը, դնում է՝ ծավալվող
տնտեսական կռիւներում բանվորական յերիտասար-
դութեան կազմակերպումն ու ղեկավարումը, արդյու-
նաբերութեան հիմնական ճյուղերը մուտք գործելը
(լեռնային, մանվածային, յերկաթուղային, ուղղմա-
կան արդյունաբերութիւն), պատանակական լիազոր-
ւերի շարժման ստեղծումը, Շանհայի որինակով բան-
վորական յերիտասարդութեան կոնֆերենցիաներ անց-
կացնելը, աշխատանքների ուժեղացումը դեղին պրոֆ-
միութիւններում, բանվորական յերիտասարդութեան
մասսաների հետ իր կապերը լայնացնելու համար յե-
ղալ հնարավորութիւնների ոգտադործումը, մասսա-
յական կազմակերպութիւնների ցանցի ստեղծումն ու
աշխատանքն այդ կազմակերպութիւններում, ինչպէս՝
յեղաբայրութիւններում, ակումբներում և այլն: Պայ-
քարելով՝ բանվորական յերիտասարդութեան տնտեսա-

կան մասնակի պահանջներ, յերիտասարդութեան կրճատ բանխորակն ժամանակի, աշխատավարձի բարձրացման համար և այլն, կոմյերիտմիութեանը պետք է կարողանա կապակցել այդ պայքարը կուսակցութեան և կոմյերիտմիութեան կողմից հիմնական լոզունգները համար մղվող պայքարի հետ, պետք է այդ պայքարը բարձրացնի ավելի բարձր մակարդակի վրա: ԿԵՄ հատուկ ուշադրութեան պետք է դարձնի դործադուրկ յերիտասարդութեան մեջ տարվող աշխատանքներին, ինչպես նաև այլ դիրքեր պետք է նվաճի տեքստիլ արդյունաբերութեան մեջ, վորտեղ գտնվում են աշխատավոր ավելիների հսկայական մասսաներ: Բանվորական յերիտասարդութեան տնտեսական ու քաղաքական կռիւների ղեկավարութեան ու նրան կոմյերիտմիութեան շարքերը ներգրավելու իր այդ ամբողջ աշխատանքը ԿԵՄ պետք է սերտորեն կապի Գոմինդանի դեմ մղվող պայքարի, նրա մանյովները ղեկավարած անելու հետ, վորոնք ուղղված են խաբէլու աշխատավորական մասսաները (ինչպես՝ աղգային ժողովը, դործարանային որենքը և այլն):

7. ԿԻՄ-ի նախագահութեանը մատնանշում է, վորպես կոմյերիտմիութեան ամենաառաջնակարգ խնդիրներից մեկը, մասնակցել դանադան պրավինցիալներում (հատկապես Հենանում և Շանդունում) ծափավոր պարտիզանական շարժումներին: Կոմյերիտմիութեանը պետք է հանդես գա, վորպես պարտիզանական շարժումների ակտիվ կազմակերպիչը, տրամադրելով իր ամբողջ ուժերը կուսակցութեանը և ակտիվ կերպով մասնակցելով ցաք ու ցրիվ յեղած պարտիզանական ջոկատներից կարմիր բանակային ջոկատներ ստեղծելուն, վորոնք պայքարում են ագրարային հեղափոխութեան լոզունգները և սահմանվող խորհրդային իշխանութեան համար: ԿԵՄ պետք է մեծ ուշադրութեան դարձնի մուսուլման աղգաբնակութեան մեջ հեղափոխական շարժման դարգացման վրա, ճիշտ կերպով լուծելով աղգային հարցը:

8. Զինատանի կոմյերիտմիութեանն անբավարար

չափով է ղեկավարել ուսանողական շարժումը: Զինատանի ուսանողութեանը, վորն իր ուսերին կրում է գոմինդանական ուժիմի կամայականութեանը, Զինատանի աշխատավոր մասսաներին ընդգրկող ընդհանուր դեգոնութեան մեջ խոշոր դեր է խաղում: 1930 թվի վերջին ամիսները և 1931 թվի սկիզբը հատկանշական են ուսանողութեան դործադուրկային յերլայթներով մի շարք համարաբաններում և միջնակարգ դրայրոցներում (Շանհայում, Կանտոնում, Պեկինում): Հաճախ այդ յերլայթները կրում են քաղաքական վառքնութ: Կոմյերիտմիութեան պարտականութեանն է գլխավորել այդ շարժումը, ավելի բարձր մակարդակի վրա բարձրացնել նրան, ուսանողական դործադուրկների ժամանակ մյուս մասնակի լոզունգների հետ առաջադրել նաև Գոմինդանի տապալման, հանուն խորհրդային իշխանութեան և Կարմիր բանակի լոզունգները և այլն:

9. Վերոհիշյալ բոլոր խնդիրները կոմյերիտմիութեանը կարող է կատարել միայն այն պայմանով, յեթե նա իր ուշադրութեան կենտրոնում դնի իրեն իսկ կոմյերիտմիութեան կազմակերպչական ամբողջական խնդիրը, նրա կադմի պրոլետարականացումը, բոլոր կարևոր ձեռնարկներում բջիջներ ստեղծելը, բանվորական կադրերին ղեկավար աշխատանքի առաջ քաշելը, կապակցելով այդ ղեկավարութեան ամբողջ սխառեմի բայլչեփիկական ինքնաքննադատութեան հետ: Կոնկրետ կերպով կոմյերիտմիութեան առաջ կանգնած է իր շարքերը սխառեմատիկ կերպով բանվոր յերիտասարդներով լրացնելու խնդիրը, այդ առթիվ ոգտադործելով հավաքադրման կամպանիաների մեթոդը, ինչպես և բանվորական յերիտասարդութեան կոնֆերենցիաները, դործարանային ժողովները և այլն: Անհրաժեշտ է վճռական պայքար մղել ղեկավար աշխատանքների համար բանվորական կադրերի առաջադման վախի դեմ, շարունակելով սխառեմատիկ կերպով բանվոր-կոմյերիտականներին պատրաստել ղեկավար աշխատանքների համար: Կոմյերիտմիութեանը պետք է

կոնկրետ կերպով դրադիլի արտադրական բջիջները աշխատանքով, մշտապես հսկելով ու ղեկավարելով նրանց զործունեությունը: ԿԻՄ-ի նախագահությունը հաստատում է կոմյերիտմիություն կենտկոմի այն միջոցառումները, վորով ԿՅՄ յուրաքանչյուր մի կազմակերպության առջև դրվում է կոնկրետ խնդիրները մի խումբ և առաջարկում է շարունակել լավացնել իր ղեկավարությունը տեղական կազմակերպությունների նկատմամբ, և վոր գլխավորն է՝ կազմակերպել ընդունված վորոշումների կատարման փաստացի հսկողությունը, սկսված սոցմրցման կիրառումը, հարվածային բրիգադների մեթոդի հետագա ծավալումը:

10. Պրոնեբական կազմակերպությունների աշխատանքը Չինաստանում չափազանց կարևոր նշանակություն է ստանում: Այդ կազմակերպությունը տարբերային կերպով առաջացավ, խորհրդային տերիտորիաներում դառնալով ակտիվ ուժ, վորն ոգնում է կուսակցությանն ու կոմյերիտմիությունը պայքարելու խորհուրդների, Կարմիր բանակի համար, ընդդեմ կուլտուրական հետամնացություն, անգրագիտություն և այլն: Խորհրդային շրջանների ԿՅՄ կուսակցության ղեկավարությամբ պետք է ստեղծի պայմաններ, վորոնք կապահովեն պրոնեբական շարժման հետագայ աճումը և պրոնեբական աշխատանքի բովանդակության վորակի լավացումը: Դրա համար նախ և առաջ անհրաժեշտ է՝ կազմակերպչորեն ամրացնել պրոնեբական ջոկատները, ղեկավարության համար հատկացնել կոմյերիտական կադրեր և պրոնեբներին ու աշխատավորների անկազմակերպ յերեխաներին ավելի ներգրավել ամենորոյա ոգնություն հասցնելու խորհուրդներին, Կարմիր բանակին, պայքարելու յերեխաների տնտեսական ու իրավական դրություն համար, դարձնելով այդ պրոնեբների ամբողջ աշխատանքի տանցը:

Չխորհրդայնացված տերիտորիաներում պրոնեբական կազմակերպությունը դանվում է ծանր դրություն

մեջ գլխավորապես շնորհիվ կուսակցության և ԿՅՄ կողմից հարկ յեղած ուշադրության և ոգնության բացակայության: Այդ իսկ պատճառով ԿՅՄ պարտավոր է իր պատասխանատու աշխատակիցների մի խումբ տրամադրել՝ ուժեղացնելու համար պրոնեբական շարժումը, վերականգնելու նրան և նոր ձևով դնելու պրոնեբշարժման խնդիրները (հատկապես ուժեղացնել յերեխաների մասնակցությունը տնտեսական պայքարին, կապակցել մասսայական լեզալ աշխատանքն անլեզալ աշխատանքների հետ և այլն), ամբողջ պրոնեբական աշխատանքի հիմքում դնելով յերեխաների մասնակցությունը բանվոր դասակարգի պայքարին ու գյուղացիական շարժմանը և դրա հիման վրա սխտեմատիկ դաստիարակչական աշխատանք տանելով պրոնեբներին և անկազմակերպ յերեխաների մասսաների մեջ:

11. ԿԻՄ-ի նախագահությունը նշում է, վոր ԿԻՄ-ի սեկցիաները չեն կատարել իրենց պարտականությունները հանդես չինական կոմյերիտմիության, Չինաստան ուղարկվող զորքերի մեջ աշխատանք չեն տարել, բավարար չափով պրոպագանդա չեն մղել Չինաստանի Կարմիր բանակի ու խորհրդային իշխանության մասին, գոմինդանական տեռորի դեմ բավարար չափով պայքար չեն տարել: Այդ ուղղությամբ անգլխական, ամբրիկական, դերմանական և ֆրանսիական կոմյերիտմիությունների վրա խոշոր խնդիրներ են դրվում, վորոնց կատարումը նրանց ինտերնացիոնալ պարտականությունն է հանդիսանում: ԿԻՄ-ի նախագահությունն այդ միությունների կենտկոմներին առաջարկում է՝ իր նիստերում քննել այդ խնդիրը և կոնկրետ քայլեր անել կազմակերպելու այդ աշխատանքը, հատկապես Չինաստան ուղարկվող զորքերը կազմավորման վերաբերյալ:

Ընկերներ,

Հունիսի 23-ին բանտարկվեց և նույն օրն էլ մահապատի յենթարկվեց չինական կոմունիստական կուսակցության գլխավոր քարտուղար ընկ. Սյան-Չու-Ֆա-ն: Ո՞վ էր ընկ. Սյան-Չու-Ֆա-ն: Ընկեր Սյան-Չու-Ֆա-ն չինական հասարակ բանվոր էր: Չինական մյուս հարյուր հազարավոր բանվորների ու կուլինների նման նա էլ էր անցել կյանքի դաժան դպրոցը:

Չինական աշխատավորները տնքում են վոչ միայն իրենց չինական կապիտալիստների, միլիտարիստների, վաշտառուների լծի տակ, վորոնք անխնա կերպով շահագործում են նրանց, այլև կեղեքվում են յեվրոպական, ճապոնական և ամերիկական իմպերիալիստների կողմից: Ամերիկական, անգլիական, ճապոնական, ֆրանսիական և մյուս կապիտալիստները վաղուց ի վեր է ինչ ստրկացրել են չին ժողովուրդին: Իրենց իմպերիալիստական շահերը Չինաստանում պաշտպանելու համար, նրանք Չինաստանի տերրիտորիայի վրա ունեն իրենց զորքերը, նավատորմը, անբուլանները: Չինաստանի կարևոր քաղաքներն, ինչպես՝ Շանհայը, Հանկուեն, Տյանցզինը, Կանտոնը և ուրիշները գտնվում են իմպերիալիստների իշխանության ներքո: Այդ բոլոր նավահանգիստներում կանգնած են իմպերիալիստների հաճանավերը, վորոնք պատրաստ են կործանելու ամբողջ քաղաքներ լույ միայն նրա համար, վորպեսզի ընկճեն չինական աշխատավոր մասսաների ապրտամբուլթյունն ընդդեմ իրենց և ոտարեկրյա կեղեքիչների: Չինաստանում իմպերիալիստների փերահանդուլթյան տակ են դտնվում բոլոր մաքսատները, նրանք դարգացնում են ուլիումի դազրելի առևտուրը, մարդկանց առևտուրը, կանանց և յերեխաների վաճառքն ի ստրկուլթյուն՝ էլ ալելի շահվելու համար: Չինական աշխատավորուլթյան ամենալիոքը ապտամբուլթյուններն անդամ, վորոնք ուղղված են նրանց բրոնուլթյունների դեմ, ճնշվում են՝ ութով, յերկալթով

ու արյունով: Չինաստանում իմպերիալիստները ոմբակոծում են այն դյուղերն ու քաղաքները, վորոնք դրավվում են Կարմիր բանակի կողմից: Իմպերիալիստները չինական ժողովուրդի դահլճ Չան-Կայ-Շին և մյուս միլիտարիստներին մատակարարում են ուղմամթեքը և խորհրդականներ:

Ընկ. Սյան-Չու-Ֆա-ն ղեկավարն էր չինական կոմկուսի, վորը գլխավորում է չին աշխատավորուլթյան պայքարը՝ ապտագրվելու համար իմպերիալիստների լծից: Ընկ. Սյան-Չու-Ֆա-ն իր ամբողջ կյանքը և այն ժամանակ, յերբ նա հասարակ բանվոր էր, և այն ժամանակ, յերբ նա դիտավորում էր հերոսական կոմունիստական կուսակցուլթյունը, տրամագրել էր իմպերիալիզմի դեմ մղվող պայքարի դործին: Անճնվիրուլթյամբ նա կովում էր ընդդեմ իմպերիալիստներին ու ժանդարմիներին, ընդդեմ արյունոտ Գոմինդանի, ընդդեմ չինական միլիտարիստների, կալվածատերերի և կապիտալիստների:

Արյունոտ Գոմինդանը՝ միլիտարիստների, կալվածատերերի, աղգային խոշոր բուրժուալիայի և բյուրոկրատիկ չինուֆինկների այդ կուսակցուլթյունը, չինական ժողովուրդի իրավունքների ու ապտուլթյան ճնշման դործում, հանդիսանում է իմպերիալիստների հալատարիմ դաշնակիցը: Այդ կուսակցուլթյունը հանդիսանում է ղեկավար կուսակցուլթյուն, վորին գլխավորում է դահլճ Չան-Կայ-Շին: Նանկինի շանկայիական կառավարուլթյունը ծավալում է սանձարձակ տեոոր ընդդեմ ապտամբ դյուղացիուլթյան ու բանվորների: Վերջին ամիսների ընթացքում արյունոտ Գոմինդանը սպանեց միքանի տասնյակ-հազար բանվորներ ու դյուղացիներ: Վորքան ծանրանում է դոմինդանական կառավարուլթյան դրուլթյունը, վսրը դտնվում է Չինաստանում արծարծվող հրեշավոր տնտեսական և աղբարային ճղնաժամի ճիրաններում, այնքան էլ նա ալելի հաճախ է դիմում չտեսնված տեոորին:

Չինաստանում բանվորներն ու դյուղացիներն ապրում են սարսափելի աղքատուլթյան ու քուղջի պայ-

մաններում: Գործարաններում ու գավոռներում բան-
վորութեան հետ վարվում են միջնադարյան օտարական
մեթոդներով: չինական բանվորն իրեն անվերջ բան-
վորական որվա համար ստանում է դրոշներ: Նրա
կյանքն առ վոչինչ է համարվում: Գյուղերում քաղցից
մահանում են միլիոնավոր չին գյուղացիներ: Միլի-
տարիստական գեներալական կլիկաների, վորոնց թի-
կունքում կանգնած են դանազան իմպերիալիստներ,
անվերջ պատերազմներն ավելի յեն սրում դրությունը
Չինաստանում: Հինգ միլիոն մարդ, դանազան ֆրոնտ-
ներում, ներկայումս Չինաստանում գենքի տակ են
գտնվում: Այդ հսկայական բանակը կլանում է խոշոր
դուռարներ և վոչնչացնում է գյուղացիութեան ցանք-
սերը:

Այդ պայմաններում Չինաստանում ավելի ու ավել-
ի գորեղ կերպով է ուռճանում ժողովրդական զայ-
րույթի աղբյւր ընդդէմ գաղութային ու աղգային կե-
ղեքման: Ծանհայտ, Կանտոնում, Տանշանում և
մյուս քաղաքներում բանվորների համառ գործադու-
ները չեն դադարում: Ծախարվում է գյուղացիական
պարտիզանական հզոր շարժումը: Հսկայական տերրի-
տորիայի վրա, ավելի քան Գերմանիայի տերրիտորիան,
50 միլիոն աղգարնակութեամբ, արդեն դոյություն ու-
նի խորհրդային իշխանություն՝ պրոլետարիատի ու
գյուղացիութեան դիկտատուրայի որդանը: Յերեք տա-
րուց ավելի յե, վոր հերոսական Կարմիր բանակը պայ-
քարում է ընդդէմ՝ կալվածատերերի, միլիտարիստ-
ների, շենարիների, հանուն խորհրդային իշխանութեան
ամբողջ Չինաստանում և հանուն հողի՝ աշխատավոր
գյուղացիութեան համար: Խորհուրդներն ու Կարմիր
բանակը հակահարված տվին խորհրդային չըջանների
վրա ուղղված գեներալական յերկու դրոշներին, ջար-
դելով թվով ու տեխնիկապես գերազանցող թշնա-
մուն: Կարմիր բանակն ու խորհուրդներն ուժեղ են
չնորհիվ միլիոնավոր գյուղացիութեան ոժանդակու-
թյան: Խորհրդային իշխանությունն ու Կարմիր բա-
նակը բռնադրամում են կալվածատերերի հողերը և

շուրիս են գյուղացիներին, վերացնում են դոմինդանա-
կան որենքներն ու հարկերը, վոչնչացնում են կալվա-
ծատերերին ու վաչխառուներին, բանվորների համար
թոցնում են 8-ժամյա բանվորական որ և այլն: Ահա
թե ինչու չինական Կարմիր բանակն ու խորհուրդներն
օգտվում են չին աշխատավորութեան լայն մասսանե-
րի ոժանդակութեամբ և վայելում են նրանց սերը: Չի-
նական հեղափոխությունն ունի խոշոր միջազգային
նշանակություն ամբողջ աշխարհի աշխատավորութեան
պայքարի համար:

Աշխատավոր մասսաների այդ պայքարը գլխավո-
րում է կոմունիստական կուսակցությունը, վորն ընդ-
հատակյա գործունեյութեան է ըջվել: Կոմկուսը, վորի
գեկավարն եր ընկ. Սյան-Չու-Ֆա-ն, հանդիսանում է
չինական բանվորների ու գյուղացիների պայքարի
միակ դեկավարը: Կուսակցութեան գեկավարութեամբ
անվախ կերպով կովում է նաև Չինաստանի կոմյերիտ-
միությունը՝ բանվորա-գյուղացիական յերիտասար-
դութեան ավանդադը:

Հետզհետե ծավալվող հեղափոխական ճգնաժամի
հետևանքով Գոմինդանն ու իմպերիալիստները ձգտում
են արյան մեջ ճնշել գյուղացիական ապստամբություն-
ներն ու բանվորական պայքարը: Այդ տեռորին զոհ են
գնացել տասնյակ հազարավոր չինական անվահեր հե-
ղափոխականներ: Այդ տեռորի հարվածների տակ դրեց
և իր դուսիս ընկ. Սյան-Չու-Ֆա-ն, չինական այդ ան-
հեղուն և անձնվեր կոմունիստը:

Յերիտասարդ բանվորներ, գյուղացիներ և սովո-
րոշներ,

Դուրս յեկե՛ք փողոց և բողոքեցե՛ք ընդդէմ ընկ.
Սյան-Չու-Ֆա-նի մահապատժի:

Պահանջեցե՛ք դադարեցնել գենքի ու հանդեր-
հանքի մատակարարումը Չան-Կայ-Շիի և մյուս մի-
լիտարիստների բանակներին:

Հեռո՛ւ Չինաստանից գեներալ Չան-Կայ-Շիի գեր-
մառական ֆաշիստ խորհրդականները:

Դադարեցնել աշխատանքները Չան-Կայ-Շիի բա-

Նախի Համար գենք . պատրաստող գործարաններում և
Բանվորներ, գործադուլ արեք:

Դադարեցնել Չինաստան գորք և ռազմանավեր ու
դարկելը:

Դադարեցնել Չան-Կայ-Շիի վարկավորումը:

Նախատրիներ, տրանսպորտիկներ, հրաժարվեցեք
Չինաստան գենք ու գորք տեղափոխելուց:

Աշխարհի բանվորա-դյուղացիական յերիտասար-
դություն, կոմյերիտականներ, բոլորդ ոգնեցե՛ք չի-
նական կոմկուսին և կոմյերիտմիությանն ընդդեմ ար-
յունոտ գոմինդանական տեռորի: Հանուն չինական
հեղափոխականների բանտից ազատման: Կաղմակեր-
պեցեք հանդանակություններ հոգուս Կարմիր բանա-
կի, ընկածներին ընտանիքների և բանտերում տառա-
պող հեղափոխականներին: Մարացրե՛ք ՄՈՊՐ-ը:

Կեցցե՛ Կարմիր բանակը ու խորհուրդները Չի-
նաստանում:

ԿԻՄ-ի Գեդիկոմի Կոմիտեի Կոմիտեի Կոմիտեի



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ճեքե

Հեղինակից	5
Յերիտասարդությունը չինական հեղափոխու- թյան մեջ	5
Պարագաները Չինաստանում	11
Կարմիր բանակի մասին	13
Բանվորական յերիտասարդության դրությունը	25
Կոմյերիտմիության գարգացումը ԿԻՄ-ի V կոնգրեսից հետո	41
Պորհրդային չրջանների կոմյերիտմիությունը	47
«Յերիտասարդ գվարդիայի» մասին	52
Ընկ. Բեսպալովի յեղրախակման խոսքը	57
Չինական կոմյերիտմիության դրության և հիմ- նական խնդիրների մասին	65
I. Հեղափոխական ճգնաժամը Չինաստանում և կոմյերիտմիության դերը	65
II Չինական կոմյերիտմիության զարգացումը ԿԻՄ-ի V կոնգրեսից հետո	69
III Չինական կոմյերիտմիության դրությունն ու հիմնական խնդիրները	73
Աշխարհի ամբողջ աշխատավոր յերիտասարդու- թյանը	86

57

ՀՀ Ազգային գրադարան



NL0937238

ԳԻՆԵ 30 ԿՈՊ. (3¹/₂ Ժ.)

932₂-278

1

3306



Г. БЕСПАЛОВ

КИТАЙСКИЙ КОМСОМОЛ

Госиздат ССР Армения
Эривань—1932